

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՆԱՐԻՆԵ ՄԿՐՏՉՅԱՆ

**ԱՄԵՐԻԿԱՆ ԳՈՐԾՈՆԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՎՐԱՍՏԱՆԻ
ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԱԶԱԿՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐՈՒՄ**

**ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
2023**

ՀՏԴ 32:93/94
ԳՄԴ 66.0+63.3
Մ 806

*Հրասարակության է երաշխավորել
ԵՊՀ գիտական խորհուրդը:*

Սկրտչյան Նարինե
Մ 806 Ամերիկյան գործոնը Հայաստանի և Վրաստանի ժողովրդավարության աջակցման գործընթացներում/ Ն. Սկրտչյան: -Եր., ԵՊՀ հրատ., 2023, 130 էջ:

Մենագրության մեջ քննության են ենթարկվում արևմտյան ժողովրդավարության կայացման միտումները և ուղղությունները, հետազոտվում ժողովրդավարական կենտրոնների դերը ժողովրդավարական ազատությունների տարածման մեջ: Ներկայացվում են ԱՄՆ աջակցության ծրագրերը երկու աշխարհամարտերի և հետպատերազմական շրջանում: Մենագրության առանցքային մասերում քննության են առնվում ԱՄՆ աջակցության ծրագրերը Հայաստանի և Վրաստանի ժողովրդավարությանը՝ համեմատական քաղաքագիտական մեթոդի կիրառմամբ վեր հանելով այդ աջակցության հասարակական-քաղաքական արդյունքները: Մենագրությունն անդրադառնում է Հայաստանում և Վրաստանում ժողովրդավարության կայացման խոչընդոտներին, հասարակական-քաղաքական իրական արդյունքներին ամերիկյան գործոնի կայացման ընդգրկում համատեքստում: Հետազոտվող ժամանակահատվածն ընդգրկում է մինչև 2018 թ. հայկական թավշյա երկրորդ հեղափոխությունը. ըստ այդմ՝ մենագրությունը չի անդրադառնում նաև հետհեղափոխական ժամանակահատվածին:

Մենագրությունը նախատեսված է բուհերի հումանիտար ֆակուլտետների, փորձագիտական և քաղաքագիտական հանրային, ինչպես նաև քաղաքական լրագրողների և վերլուծաբանների համար և կարևոր ազդակ է Հայաստանում ամերիկագիտության կայացման ճանապարհին:

ՀՏԴ 32:93/94
ԳՄԴ 66.0+63.3

ISBN 978-5-8084-2610-8
<https://doi.org/10.46991/YSUPH/9785808426108>

© ԵՊՀ հրատ., 2023
© Սկրտչյան Ն., 2023

*Նվիրում եմ ամուսնուս՝ Արամ Մայիլյանի հիշատակին,
ազատության և ժողովրդավարության արժեքների հանդեպ
նրա անանց հավատին և աննկուն պայքարին*

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	7
ԳԼՈՒԽ 1. ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԿԱՅԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ: ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ԴԵՐԸ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԱՐԱԾՄԱՆ ՄԵՋ	10
1.1. «Ժողովրդավարություն» հասկացության սահմանումը, քաղաքիչները և սկզբունքները	10
1.2. Ժողովրդավարության ձևավորումը և կայացումը, խնդիրները և նպատակները	12
1.3. Ժողովրդավարության սկզբնավորման հասարակական- քաղաքական նախադրյալները Հյուսիսային Ամերիկայում: Կառավարման համակարգի և ժողովրդավարական ազատությունների ձևավորումը Ամերիկայի Միացյալ Նահանգներում	17
1.4. Ներքին և արտաքին ազդակների ազդեցությունը հայ հասարակագիտական մտքի վրա: Պետական կառավարման և ժողովրդավարական սկզբունքների արտացոլումը հայ հասարակագիտության մեջ	21
ԳԼՈՒԽ 2. ԱՄԵՐԻԿԱՅԱՆ ԳՈՐԾՈՆԸ ՄԻԱՅՑԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԻ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԵՎ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԵՎ ՀԵՏՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ	26
2.1. Ամերիկյան աջակցությունը հայ ժողովրդին Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում	26
2.2. Մարշալի պլանը հետպատերազմական Եվրոպայի համար որպես ԱՄՆ քաղաքական և տնտեսական աջակցության ծրագիր: ԽՍՀՄ-ԱՄՆ հարաբերությունները. «սառը պատերազմից» մինչև Գորբաչովյան վերակառուցում	29
2.3. Ղարաբաղյան շարժման սկզբնավորումը և պատմաքաղաքական արդյունքները	33

ԳԼՈՒԽ 3. ԱՄԵՐԻԿԱՆ ԳՈՐԾՈՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱԶԱԿՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅՆԵՐՈՒՄ	37
3.1. ՀՀ-ԱՄՆ միջպետական երկկողմ հարաբերությունների ձևավորումը: Հայաստանի անցումային ժողովրդավարության առանձնահատկությունները	37
(3) 1.1. <i>Ամերիկյան գործունի չեղարման հիմնական քաղաքականները.....</i>	37
(3) 1.2. <i>Աշխարհաքաղաքական փոփոխությունները և Միացյալ Նահանգների մուրքը Անդրկովկաս. հայ-ամերիկյան հարաբերությունների սկզբնավորումը</i>	39
(3) 1.3. <i>Հայաստանը որպես անցումային երկիր</i>	42
ԳԼՈՒԽ 4. ԱՄԵՐԻԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՈՒՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ	48
4.1. Հայաստանին ցուցաբերվող ամերիկյան աջակցության ծրագրերի հիմնական ուղղությունները և փուլերը	48
4.2. «Հազարամյակի մարտահրավերներ» ծրագիրը. տրամադրման և սառեցման պատճառները	60
ԳԼՈՒԽ 5. ԱՄԵՐԻԿԱՆ ԳՈՐԾՈՆԸ ՎՐԱՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱԶԱԿՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅՆԵՐՈՒՄ	66
5.1. Ներքաղաքական գործընթացները հետխորհրդային Վրաստանում	66
(5) 1.1. <i>Վրաստանն անցումային փուլում.....</i>	66
(5) 1.2. <i>Վրաստանը «վարդերի հեղափոխությունից» հեկո</i>	69
5.2. Ամերիկյան օգնության ընդհանուր նկարագիրը և առաջնային ուղղությունները Վրաստանում	75
(5) 2.1. <i>Վրաց-ամերիկյան հարաբերությունների սկզբնավորումը և զարգացումը.....</i>	75
(5) 2.3. <i>ԱՄՆ աջակցության ծրագրերը Վրաստանին «վարդերի հեղափոխությունից» հեկո</i>	78

ԳԼՈՒԽ 6. ԱՄՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ	
ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ, ՍԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ	
ՀԻՄՆԱՐԱՐ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈԼՈՐՏՈՒՄ:	
ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ	
ԵՎ ՀԻՄՆԱՐԱՐ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ	
ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԵՎ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ.....	84
6.1. Ժողովրդավարության աջակցության ԱՄՆ քաղաքական	
ուղեգիծը.....	84
<i>(6) 1.1. Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների</i>	
<i>պաշտպանության խնդիրները որպես արևմտյան</i>	
<i>քաղաքականության և քաղաքակրթության ուղեհիշ.....</i>	84
6.2. Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների	
ապահովման խնդիրները և ԱՄՆ քաղաքականությունը.....	89
<i>(6) 2.1. «Ժողովրդավարության արտահանման» ամերիկյան</i>	
<i>ուղեգիծը.....</i>	89
<i>(6) 2.2. ԱՄՆ պերքարյուղարության զեկույցները մարդու</i>	
<i>իրավունքների ոլորտում. ամերիկյան աջակցությունը նախկին</i>	
<i>խորհրդային երկրների ժողովրդավարացմանը</i>	92
<i>(6) 2.3. ԱՄՆ պերքարյուղարության զեկույցները Հայաստանում և</i>	
<i>Վրաստանում մարդու իրավունքների մասին (2007 թ. և 2016 թ.).....</i>	96
ԳԼՈՒԽ 7. ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՅԱՑՄԱՆ	
ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐԸ.....	111
7.1. Քաղաքագիտական պարադոքսներ. ամերիկյան գործոնի	
նվազումը ԱՄՆ աջակցությանը գուգահեռ.....	111
7.2. Ժողովրդավարացման գործընթացների արդյունքները	
Հայաստանում և Վրաստանում. համեմատական վերլուծություն..	114
7.3. Ժողովրդավարության կայացման խոչընդոտները	
Հայաստանում.....	117
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....	121
ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ	124
PE3IOME	126
ABSTRACT	128

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հետխորհրդային ժամանակաշրջանում սկիզբ առած համակարգային փոփոխությունները, անցումային ժողովրդավարության բարդ ընթացքը, իշխանություն-ընդդիմություն դիմակայությունը, ռազմական բախումները, հին և նոր քաղաքական էլիտայի անկարողությունը և նրա վերասերումը նախկին խորհրդային մի շարք հանրապետությունների կանգնեցրին քաղաքական արմատական նոր փոփոխությունների իրականացման անխուսափելիության առջև: Մի շարք դեպքերում այդ փոփոխությունները հանգեցրին հեղափոխությունների: Այսօրինակ իրավիճակը դիտարժան է հատկապես Հարավային Կովկասի երկու հանրապետությունների՝ Հայաստանի և Վրաստանի դեպքերում:

Երկու պետություններում տեղի ունեցած թավշյա հեղափոխություններն էապես ազդեցին թե՛ ներհասարակական-ներքաղաքական և թե՛ աշխարհաքաղաքական զարգացումների վրա՝ մեծապես պայմանավորելով այդ զարգացումների ուղղությունը:

ԽՍՀՄ փլուզումից 13 տարի անց Վրաստանում տեղի ունեցած թավշյա հեղափոխությունը թե՛ երկրում, թե՛ տարածաշրջանում առաջ բերեց նոր քաղաքական իրավիճակ՝ սկիզբ դնելով արագընթաց փոփոխությունների:

Հետխորհրդային Հայաստանում հեղափոխության մի քանի փորձերը ձախողվեցին՝ հաղթանակ արձանագրելով միայն 2018 թ. ապրիլին: Հայկական երկու թավշյա հեղափոխությունները՝ 1988 թ. փետրվարին սկզբնավորված Ղարաբաղյան շարժումը և 2018 թ. ապրիլյան հեղափոխությունները, ավարտվեցին հաղթանակով՝ երկիրը կանգնեցնելով քաղաքական և համակարգային փոփոխությունների հրամայականի առջև: Հայկական առաջին թավշյա հեղափոխությունը՝ Ղարաբաղյան շարժումը, պատմաքաղաքական մեծ ձեռքբերումներ և արդյունքներ ունեցավ՝ Հայաստանի անկախացումը և Ղարաբաղի ազատագրումը: 2018 թ. Նիկոլ Փաշինյանի գլխավորած ապրիլյան հեղափոխությունը Հայաստանում հնարավոր դարձրեց իշխանափոխությունը և ազատ, օրինական ընտրությունների վերականգ-

նումը, սակայն 2020 թ. դարաբաղյան 44-օրյա պատերազմի հետևանքով Հայաստանը կորցրեց վերահսկողությունը Ղարաբաղի տարածքների մեծ մասի վրա, ինչպես նաև լուրջ սպառնալիքների տակ հայտնվեց Հայաստանի Հանրապետության տարածքային ամբողջականությունը:

Այս մենագրության մեջ մենք չենք անդրադարձել 2018 թ. հայկական երկրորդ թավշյա հեղափոխությանը, ինչպես նաև չենք անդրադառնում 2018 թվականից հետո Հայաստանի ժողովրդավարացմանը ԱՄՆ ցուցաբերած աջակցությանը՝ այդ հետազոտությունը թողնելով առաջիկային: Միաժամանակ հարկ է նշել, որ հետհեղափոխական Հայաստանում ամերիկյան գործոնը ուշագրավ փոփոխություններ է կրել: ԱՄՆ-ն շարունակել է իր համձնաշրջությունը Հայաստանի և Վրաստանի ժողովրդավարացման, արդար կառավարման, կոռուպցիայի հաղթահարման, անվտանգության ապահովման և կարևոր այլ ոլորտներում:

Հարավկովկասյան երկու պետությունները՝ Հայաստանը և Վրաստանը, ինչպես աշխարհի զգալի մասը, վերջին մի քանի տարիների ընթացքում հայտնվեցին Քովիդի համաճարակի, ռուս-ուկրաինական պատերազմի, աշխարհաքաղաքական բարդ և տագնապալի փոփոխությունների հարահոսում: Իրադարձությունների արագընթաց զարգացումները և փոփոխվող աշխարհակարգը, տարածաշրջանում ընթացող թե՛ ռազմական, թե՛ աշխարհաքաղաքական, թե՛ քաղաքակրթական բախումները շարունակ փոփոխությունների են ենթարկում թե՛ պետությունների ներսում, թե՛ նրանց շուրջ ընթացող իրողությունները՝ հաճախ անկառավարելիություն և անկանխատեսելիություն հաղորդելով տարածաշրջանային զարգացումներին: Աշխարհաքաղաքական առկա և նոր փոփոխությունները կարող են հանգեցնել Հայաստանում և Վրաստանում ԱՄՆ ներազդավածության ընդլայնմանը և ամերիկյան գործոնի աճին:

Մենագրության մեջ կիրառվել են մի շարք մեթոդներ՝

- համեմատական. համեմատական քաղաքագիտությունն առանցքային է թե՛ Հայաստանի և Վրաստանի՝ ԱՄՆ աջակ-

ցության ժողովրդավարության ծրագրերի, թե՛ անցումային ժողովրդավարական գործընթացների առումով,

- վերլուծական. այս դեպքում կարելի է դիտարկել նաև քաղաքական վերլուծությունը և քաղաքական լրագրության սկզբունքների ներառումը,
- դիտարկման. ներքին և անմիջական,
- հետազոտական. փաստաթղթերի, վիճակագրության և տվյալների հետազոտություն:

Մենագրության մեջ առաջին անգամ համակարգված և համապարփակ ներկայացվում են ԱՄՆ ժողովրդավարության աջակցության ծրագրերը Հարավային Կովկասի երկու պետություններին՝ Հայաստանին ու Վրաստանին:

Մենագրությունը նախատեսված է թե՛ բուհերի հումանիտար ֆակուլտետների, թե՛ քաղաքական լրագրության, թե՛ քաղաքական վերլուծաբանների, թե՛ քաղաքական գործընթացներով հետաքրքվող շրջանակների համար:

ԳԼՈՒԽ 1.

ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԿԱՅԱՅՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ: ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ԴԵՐԸ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԱՐԱԾՄԱՆ ՄԵՋ

1.1. «Ժողովրդավարություն» հասկացության սահմանումը, բաղադրիչները և սկզբունքները

De'mokratia (de'mos kra'tos) – հին հունարեն ծագմամբ այս բառը արդի համաշխարհային քաղաքագիտական մտքի, հասարակական շարժումների, քաղաքական գործընթացների, քաղաքական առաջնորդների և առաջնահերթությունների, միջազգային կազմակերպությունների՝ մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների հարգման, արդար և արդյունավետ կառավարման պահանջների կարևոր բաղադրիչն է:

«Ժողովրդավարություն» հասկացության ծագման և ձևավորման պատմական ուղին երկար և հակասական է եղել: Դեռևս սկզբնավորման ժամանակներում ակնհայտ էր, որ ժողովրդավարությունը բարդ և բազմակողմանի երևույթ է: Այդ իսկ պատճառով անհնար է հետազոտել ժողովրդավարությունը՝ հենվելով միայն դրա քաղաքագիտական նշանակության վրա: «Ժողովրդավարություն» հասկացության կարևոր բաղադրիչը գործնական քաղաքականության մեջ նրա ձեռք բերած արդյունքներն են: Ժողովրդավարության քաղաքագիտական հետազոտությունը դեռ չի ավարտվել: Նորացող աշխարհի և նոր քաղաքական գործընթացների հետ ենթարկվելով որոշակի փոփոխությունների՝ այն ձեռք է բերում նոր նշանակություն: Այդ իսկ պատճառով «Ժողովրդավարություն» հասկացության ամփոփ և վերջնական սահմանում դեռ գոյություն չունի, ուստի անհրաժեշտ է վեր հանել ժողովրդավարության պատմական ուղին, քաղաքական արդյունքները, այն կատարելագործելու ուղիները:

Ժողովրդավարությունը որոշակի արժեքների և սկզբունքների, ժողովրդի միջոցով պետական իշխանության ձևավորման, արդար և արդյունավետ կառավարման ձևերի և ուղիների, կառավարման համակարգի և կառավարիչների՝ իշխանության գործունեության հասարակական վերահսկման, քաղաքացիների իրավահավասարության, մարդու հիմնարար իրավունքների և ազատությունների ապահովման մեխանիզմների, սկզբունքների, մեթոդաբանության ամբողջություն է: Այս խնդիրները դրված են եղել ժողովրդավարության սկզբնավորման հիմքում, որոնց շուրջն է ծավալվել հիմնական քաղաքական բանավեճը: Դրանցով են պայմանավորված եղել քաղաքագիտական մի շարք դպրոցների, հոսանքների, հասարակական-քաղաքական շարժումների ձևավորումը և զարգացումը: Տվյալ պետության քաղաքական տարաբնույթ գործընթացների հիմքում ոչ միայն ժողովրդավարական ազատությունների հռչակման, այլև դրանց հետևելու, հավատարիմ մնալու և կիրառումն ապահովելու պահանջներն են: Արդի աշխարհում ժողովրդավարությունը վերածվել է քաղաքական կարևոր գործոնի:

XX դարում ժողովրդավարական ազատությունների տարածումն աշխարհում հռչակվեց որպես ԱՄՆ քաղաքական առաջնահերթություն՝ էապես մեծացնելով ամերիկյան քաղաքական գործոնը միջազգային գործընթացներում: Ամերիկյան քաղաքական միտքը և կառավարող շրջանակները սկսեցին ուղիներ մշակել աշխարհում ժողովրդավարության տարածման համար, ինչը ժամանակակից քաղաքագիտությունը որակում է որպես «ժողովրդավարության արտահանում»: Աշխարհում ժողովրդավարական ազատությունների ձգտումները, այլ պետություններում ժողովրդավարության տարածման ԱՄՆ քաղաքական ուղեգիծն էապես նպաստեցին աշխարհում ամերիկյան գործոնի աճին:

1.2. Ժողովրդավարության ձևավորումը և կայացումը, խնդիրները և նպատակները

Ժողովրդավարության (դեմոկրատիայի) կամ ժողովրդի իշխանությունը հաստատելու նախնական պատկերացումներն իրենց սկզբնական ձևակերպումներն են գտել դեռևս անտիկ աշխարհում: Հին հունական պոլիսների արդյունավետ կառավարման որոնումները հին հույն մտածողների շրջանում սկզբնավորեցին փիլիսոփայական տարբեր ուղղություններ, որոնք, հետագա դարերում վերափոխվելով և զարգանալով, քաղաքական մոր հոսանքների և ուղղությունների ձևավորման կարևոր ազդակ դարձան: Ժողովրդավարության նախնական ձևակերպումներն ի հայտ եկան հին հույն փիլիսոփաներ Դեմոկրիտի (մ.թ.ա. 460-370) և Արիստոտելի (մ.թ.ա. 384-322) աշխատություններում: Արիստոտելի գաղափարները, դրանց գիտական ձևակերպումները, կիրառական առանձնահատկություններն այսօր ևս արդիական են. «Գերագույն իշխանությունը պատկանում է ժողովրդական զանգվածներին: Գոյություն ունի պետական կառուցվածքի երկու հիմնական տեսակ՝ դեմոկրատիան և օլիգարխիան, ինչպես գոյություն ունի հիմնականում երկու տեսակի քամի՝ հյուսիսային և հարավային, մյուսներն այդ երկուսի տարատեսակներն են»¹:

Աթենական ժողովրդավարության և հասարակագիտական մտքի կայացումը բախվել է լուրջ դիմակայության: Այդ ընթացքը անտիկ փիլիսոփայական ուսմունքների գիտակ Վ. Գորանն ամփոփում է այսպես. «Ժողովրդավարության կայացումը Աթենական պետության մեջ ուղեկցվում էր արիստոկրատիայի և դեմոկրատիայի շուրջ աշխարհայացքային կողմնորոշումների սուր բախումներով»²: Այս երևույթն ուղեկցել է Աթենական պետությանը սկզբնավորումից մինչև փլուզումը:

¹ Аристотель, Сочинения, М.: изд. «Мысль», 1983, т. 4, стр. 571.

² Горан В. П., Генетическая связь философии и демократии в Древней Греции, Гуманитарные науки в Сибири, Изд. Институт истории ЦО РАН, 1998, #1, стр. 18.

Աթենական պետության կառավարման մի շարք սկզբունքներ կիրառում գտան անտիկ աշխարհի մեկ այլ պետության մեջ՝ Հռոմեական կայսրությունում, որտեղ մ.թ.ա. 510 թ. հաստատվեցին համարապետական կարգեր: Երկրում բարձրագույն իշխանությունը պատկանում էր ժողովրդական ժողովին: Հռոմեական պետության մեջ ձևավորվեց իրավունքի առավել զարգացած համակարգ, որը հայտնի է որպես «հռոմեական իրավունք»: Հռոմում տարբերակել են իրավունքի երկու տեսակ՝ հանրային և մասնավոր: Մասնավոր իրավունքը դրեց անձի իրավական և տնտեսական սուվերենության հիմքերը՝ հետագայում փոխառնվելով Արևմտյան Եվրոպայում և կազմելով քաղաքացիական իրավունքի հիմքը: Հռոմեական պետության իրավունքի մոդելը հետագայում որդեգրեց նաև ԱՄՆ-ն:

Աթենական պետության մեջ ժողովրդավարական կառավարումը հնարավոր դարձավ ա) ժողովրդավարական համակարգի և կառավարման արդյունավետ ձևերի ու մեթոդների որոնումների արդյունքում, բ) փիլիսոփայական տեսությունների մշակման, գ) քաղաքացիական իրավունքների ապահովման շնորհիվ:

Աթենական պետությունը դարձավ քաղաքացիական իրավունքների և ազատությունների առաջին ժողովրդավարական կենտրոնը, որտեղից սկսեցին տարածվել իրավունքի և ազատության առաջադիմական գաղափարները:

Աթենական պետության անկումից հետո՝ «2000 տարի շարունակ, «ժողովրդավարություն» եզրույթն անհետացավ եվրոպական քաղաքական բառապաշարից, և եթե կիրառվեց էլ, ապա՝ միայն բացասական շեշտադրմամբ. «արխատոտելյան» ձևակերպումը նույնացավ ի սկզբանե սխալ, աղավաղված, այլակերպված կառավարման ձևի հետ, որը սասանում է պետության հիմքերը»,– ընդգծում է Վ. Պուգաչովը³:

Եվրոպայում միապետության հաստատումից հետո միապետի իրավասությունների սահմանափակման շուրջ դատողություններն ուղեկցեցին միապետությանը կառավարման ողջ ընթացում: Քրիս-

³ Пугачев В. П., Политология, М.: изд. АСТ, фил. общество СЛОВО, 1999, стр. 249.

տոնեական Եվրոպայում ժողովրդավարության ընկալումները բխում էին քրիստոնեական սկզբունքներից. Աստված ստեղծել է մարդուն իր պատկերով և նմանությամբ, և բոլոր մարդիկ հավասար են Աստծո առաջ:

XIV դարում Իտալիայում սկզբնավորված Վերածննդի գաղափարախոսության առանցքում ընկած էր մարդակենտրոնությունը. «Մարդը տիեզերքը կենտրոնն է»: Այդ գաղափարախոսությունը սկզբնավորեց հումանիստական քաղաքական ուղղությունը:

Արևմտյան Եվրոպայում ֆեոդալիզմի քայքայմամբ ու կապիտալիզմի սկզբնավորմամբ ձևավորվեցին նոր հոսանքներ և ուղղություններ, որոնք նպաստեցին նոր քաղաքական իրողությունների առաջացմանը: 1256 թ. Անգլիայում ձևավորված՝ աշխարհում առաջին պառլամենտը քաղաքական նշանակություն ձեռք բերեց միայն անգլիական բուրժուական հեղափոխությունից հետո՝ XVII դարում: Պառլամենտը դարձավ ժողովրդավարության անկյունաքարը՝ դնելով պառլամենտարիզմի հիմքերը:

Անգլիացի փիլիսոփա, պառլամենտական միապետության կողմնակից Ջոն Լոկը (1632-1704) առաջ էր քաշում «հասարակական դաշինքի» գաղափարը՝ հասարակության և պետության միջև, և եթե պետությունը չի իրականացնում իր պարտականությունները, ապա ազատ քաղաքացիներն իրավունք ունեն տապալելու այն: Լոկն ընդգծում էր. «Մարդիկ ի ծնե ազատ են, հավասար և անկախ»⁴: Անհատի ազատության սկզբունքները դրվեցին արևմտյան ազատական գաղափարախոսության՝ լիբերալիզմի հիմքում: Ջոն Լոկը վաղ լիբերալիզմի ներկայացուցիչն է, որի գաղափարական մի շարք սկզբունքներ հետագայում դրվեցին ԱՄՆ անկախության հռչակագրի և Սահմանադրության հիմքում:

XVII դարում Անգլիայում ձևավորվեց առաջին քաղաքական կազմակերպությունը՝ Վիգերի կուսակցությունը, որը հետագայում վերակազմավորվեց որպես Մեծ Բրիտանիայի Լիբերալ կուսակցություն: Անգլիան դարձավ լիբերալիզմի հայրենիքը: Չևավորում էր նոր

⁴ Расел Б., История западной философии, М.: изд. «Азбука», 1959, гл. 12, стр.128.

քաղաքական հոսանք՝ ազատական ժողովրդավարությունը՝ լիբերալ դեմոկրատիան:

XVII-XVIII դարերում Եվրոպայում սկսեց ձևավորվել լուսավորչական շարժումը: Լուսավորիչներն առաջ էին քաշում հասարակության վերափոխման, բանականության հաղթանակի, քաղաքական ազատությունների, իրավահավասարության գաղափարները, որոնց հաղթանակի դեպքում կստեղծվեր նոր հասարակարգ: Լուսավորիչները դարձան Եվրոպական բուրժուական հեղափոխությունների գաղափարախոսները: Լուսավորիչների համոզմամբ ազատության արժեքային համակարգը պետք է դրվեր հասարակության և պետության զարգացման հիմքում:

Լուսավորչական շարժման ազդեցիկ ներկայացուցիչներ, մեծ մտածողներ Վոլտերի (1694-1778), Ժան-ժակ Ռուսոյի (1712-1778), Դենի Դիդրոյի (1713-1784) գործունեությունը, աշխատություններն ու գաղափարները դարձան Եվրոպայի առաջադիմության, մարդու ազատության և իրավահավասարության սկզբնաղբյուր:

Ամհատի ազատության, լիբերալիզմի, լիբերալ տնտեսության գաղափարներն ամբողջացան շոտլանդացի երկու տնտեսագետների՝ Դեյվիդ Հյումի (1711-1776) և Ադամ Սմիթի (1723-1790) աշխատություններում: Ըստ նրանց՝ պետության դերը տնտեսության մեջ պետք է հասցնել նվազագույնի, մարդիկ պետք է գործեն ազատ, առանց սահմանափակումների, ազատ շուկայի և մրցակցության պայմաններում:

Արևմտյան Եվրոպայի առաջադիմական գաղափարները տարածվեցին Ռուսաստանում, որտեղ սկզբնավորվել էր ճորտատիրական իրավունքի դեմ պայքարը: Ռուս գրող Ալեքսանդր Ռադիշչևը (1749-1802) «Ճանապարհորդություն Պետերբուրգից Մոսկվա» գրքում առաջ էր քաշում մարդկանց իրավահավասարության գաղափարը: Նա մերժում էր Ռուսաստանը բարեփոխելու հայեցակարգը՝ պաշտպանելով ժողովրդի՝ ինքնակալությունը տապալելու հեղափոխական իրավունքը: Դեկաբրիստների շարժումը ևս կրում էր Եվրոպական քաղաքական հոսանքների ազդեցությունը:

Ժողովրդավարական ազատությունների շուրջ եվրոպացի հասարակագետների գաղափարները դրվեցին XVIII-XIX դարերի համաշխարհային հասարակական, քաղաքական մի շարք ազդեցիկ հոսանքների, իսկ XX դարում քաղաքական գործընթացներում շրջանառվող «եվրոպական արժեհամակարգ» հասկացության հիմնարար սկզբունքները՝ միջազգային կազմակերպությունների, եվրոպական կառույցների գործունեության և պահանջների հիմքում:

Եվրոպան դարձավ ժողովրդավարության երկրորդ կենտրոնը, որի գաղափարները և ազատությունների համար մղվող պայքարը տարածվեցին այլ երկրներում:

Ժողովրդավարությունը ձևավորվեց, կայացավ և զարգացավ որպես արևմտյան արժեքային համակարգ, որպես եվրոպական հումանիզմի դրսևորում, որպես եվրոպական քաղաքակրթության տարբերակիչ առանձնահատկություն: Եվրոպական արժեհամակարգի սկզբնաղբյուրը ժամանակի եվրոպացի մեծ հումանիստներն են, եվրոպական հասարակագիտական մտքի կրողները: Ինքնակալության դեմ մղվող պայքարում նրանց առաջադիմական հայացքներն ու սկզբունքները հաղթեցին աշխարհի տարբեր մայրցամաքներում:

**1.3. Ժողովրդավարության սկզբնավորման հասարակական-
քաղաքական նախադրյալները Հյուսիսային Ամերիկայում:
Կառավարման համակարգի և ժողովրդավարական
ազատությունների ձևավորումը Ամերիկայի Միացյալ
Նահանգներում**

Եվրոպական առաջադիմական հասարակագիտական միտքը, քաղաքական շարժումները մեծապես ազդեցին նաև Անգլիայի գաղութարար լուծը թոթափելու, Հյուսիսային Ամերիկայի՝ ազատության և անկախության համար մղվող պայքարի վրա:

XVIII դարում Հյուսիսային Ամերիկայի Մասաչուսեթս նահանգի մայրաքաղաք Բոստոնը դարձավ ազատության, անկախության համար մղվող պայքարի և ազատ մամուլի ձևավորման կենտրոն: Ազատ մամուլն իր հերթին վերածվեց ամերիկյան հեղափոխության կենտրոնի: Հեղափոխությունը կազմակերպեցին հայտնի հրապարակախոսներ և գործիչներ Ջեյմս և Բենջամին Ֆրանկլինները, Ջոն Ադամսը, Թոմաս Ջեֆերսոնը, որոնց ջանքերով 1776 թ. հուլիսի 4-ին ընդունվեց ԱՄՆ «Անկախության հռչակագիրը», որը հեղինակել էր Ջեֆերսոնը: Հռչակագիրը ստորագրեցին ամերիկյան 13 գաղութներ, որոնք հայտարարեցին բրիտանական կայսրությունից իրենց անկախության մասին: 1777 թ. նոյեմբերի 15-ին Ֆիլադելֆիայի Կոնգրեսը նորաստեղծ կոնֆեդերացիան անվանեց Ամերիկայի Միացյալ Նահանգներ: Անկախության համար մղվող ամերիկացիների պայքարը տևեց մինչև 1783 թվականը և ավարտվեց ամերիկյան բոլոր նահանգների անկախությամբ:

Անկախության հռչակագիրն առաջին պետական փաստաթուղթն էր, որն ամրագրում էր ժողովրդավարական պետության հիմնարար սկզբունքները: Հռչակագրի նախաբանն արձանագրում է. «Մենք գտնում ենք, որ ամենապարզ ճշմարտությունը մարդկանց հավասար ճանապարհն է: Բոլոր մարդիկ հավասար են ծնվում և Արարչի կողմից ունեն հավասար իրավունքներ: Այդ իրավունքների շարքում են դասվում կյանքի, ազատության, երջանկության ձգտման իրավունքները: Այդ իրավունքների ապահովման համար մարդիկ

ստեղծում են կառավարություն, արդարամիտ իշխանություն, և եթե երբևէ որևէ պետական կառույց խախտի այդ իրավունքները, ապա ժողովուրդն իրավունք ունի ապստամբելու կառավարության դեմ և ստեղծելու այնպիսի պետական կառույց, ձևավորելու այնպիսի իշխանություն, որը կապահովի ժողովրդի անվտանգությունը և բարեկեցությունը»⁵:

Հռչակագրի մի շարք սկզբունքներ հետագայում դրվեցին 1787 թ. սեպտեմբերի 17-ին ընդունված ԱՄՆ Սահմանադրության հիմքում (ուժի մեջ մտավ 1789 թ. սեպտեմբերի 3-ին): Կոնվենտի 55 պատվիրակներից Սահմանադրության տեքստի տակ ստորագրեց միայն 39-ը, որոնց ամերիկյան ժողովուրդը մեծաբեց որպես «հիմնադիր հայրեր»: Նրանք էին՝ Ջորջ Վաշինգտոնը, Ջոն Ադամսը, Թոմաս Ջեֆերսոնը, Ալեքսանդր Համիլտոնը, Բենջամին Ֆրանկլինը, Ջեյմս Մեդիսոնը, Ջոն Ջեյը և այլք: «Մենք՝ Ամերիկայի Միացյալ Նահանգների ժողովուրդս, նպատակ ունենալով ստեղծել առավել կատարյալ դաշինք, հաստատել արդարադատություն, ապահովել երկրի ներքին անդորրը, կազմակերպել համատեղ պաշտպանություն, նպաստել ընդհանուր բարեկեցությանը և ապահովել մեր և հաջորդ սերունդների ազատության բարիքները, ստեղծում և գործողության մեջ ենք դնում ԱՄՆ սույն Սահմանադրությունը»,– ընդգծում է Անկախության հռչակագրի նախաբանը⁶:

1789 թ. Սահմանադրության մեջ ընդունվեց Իրավունքների բիլլը՝ 10 ուղղումները, որոնք ամրագրեցին մարդու հիմնարար իրավունքների և ազատությունների պետական պաշտպանությունը՝ դառնալով ամերիկյան ժողովրդավարության հիմքը: Ըստ Առաջին ուղղման՝ «Կոնգրեսը չպետք է հրապարակի օրենքներ, որոնք սահմանափակում են որևէ կրոն կամ արգելում նրա ազատ քարոզը, խոսքի կամ մամուլի ազատությունը, ժողովրդի՝ խաղաղ նպատակներով հավաք-

⁵ Henry W. Bragdon, Samuel P. McCutchen, History of a free people, NY, London, Macmillan Publishing Company, 1981, p. 60.

⁶ Խաչատրյան Հ., Ամերիկայի Միացյալ Նահանգների Սահմանադրությունը, Եր., «Հայաստան» հրատ., 1991, էջ 90:

վելու և չարաշահումները դադարացնելու պահանջով կառավարությանը դիմելու իրավունքը»⁷:

1865 թ. հունվարի 31-ին Սահմանադրության 13-րդ ուղղմամբ ԱՄՆ ողջ տարածքում վերացվեց ստրկատիրությունը. դրանով իսկ Միացյալ Նահանգները կատարեց ժողովրդավարական պետության կայացման հաջորդ կարևոր քաղաքական քայլը ստրկատիրության դեմ մղվող քաղաքացիական պատերազմից հետո (1861-1865):

ԱՄՆ Սահմանադրության պատմաքաղաքական նշանակությունն անմիջական է. «Հիմնադիր հայրերը ստեղծել են այնպիսի համակարգ, որում կառավարությունը բավականին ուժեղ էր, որ կարողանար պաշտպանել ժողովուրդների իրավունքները, բայց ոչ այնքան ուժեղ, որ վտանգ ներկայացներ այդ իրավունքների համար»⁸, – ընդգծել է ԱՄՆ նախկին նախագահ Ռ. Նիքսոնը:

Պետական կառավարման, հասարակական հարաբերությունների կարգավորման, մարդու իրավունքների ապահովման, ներկայացուցչական հակակշիռների ստեղծման հիմնարար սկզբունքներով ԱՄՆ Սահմանադրությունը աշխարհում առաջին ժողովրդավարական պետության հիմքերը դրեց՝ ավելի քան 200 տարի ապահովելով ամերիկյան ժողովրդավարության կենսունակությունը:

Ժողովրդավարական համակարգի ձևավորումն ԱՄՆ-ում ընթացել է քաղաքական դիմակայության, հեղափոխության, քաղաքացիական բախումների պայմաններում: Ազատության, անկախության, մարդու հիմնարար իրավունքների հաստատման մեջ մեծ է եղել ամերիկյան մամուլի դերը: Ամերիկյան քաղաքական միտքն իր հեռատեսության, քաղաքական խնդիրների ճշգրիտ ընկալման շնորհիվ կարողացավ իրականացնել երկրի ժողովրդավարացումը:

Վերոհիշյալ իրողությունները նպաստեցին, որ Աթենական պետությունից և Եվրոպայից հետո, զգալիորեն կրելով նաև նրանց հասարակագիտական մտքի ազդեցությունը, ԱՄՆ-ն դառնա ժողովրդավարական երրորդ կենտրոնն աշխարհում:

⁷ «ՁԼՄ-ներն ու ժողովրդավարությունն ԱՄՆ-ում», Եր., 1997, էջ 4:

⁸ Ричард Н., На арене, М.: изд «Новости», 1992, стр. 344.

Իր քաղաքական ուղղության ընտրությամբ և դրա հանդեպ հավատ սերմանելով հետագա սերունդների մեջ՝ ԱՄՆ-ն կարողացավ ապահովել իր ազդեցիկ և անփոխարինելի դերը միջազգային գործընթացներում: Հետագայում ամերիկյան քաղաքական միտքը և կառավարող շրջանակները սկսեցին ուղիներ մշակել աշխարհում ժողովրդավարության տարածման համար, ինչը ժամանակակից քաղաքագիտությունը որակում է որպես «ժողովրդավարության արտահանում»:

Աշխարհում ժողովրդավարական ազատությունների ձգտումները, այլ պետություններում ժողովրդավարության տարածման ԱՄՆ քաղաքական ուղեգիծն էապես նպաստեցին աշխարհում ամերիկյան գործոնի աճին:

**1.4. Ներքին և արտաքին ազդակների ազդեցությունը հայ
հասարակագիտական մտքի վրա: Պետական կառավարման և
ժողովրդավարական սկզբունքների արտացոլումը հայ
հասարակագիտության մեջ**

Ժողովրդավարական ազատությունների շուրջ հայ հասարակա-
կան-քաղաքական միտքը քաղաքական օրակարգ չի մշակել. դրանք
արծարծվել են միայն առանձին գործիչների երկերում: Համակարգ-
ված, ամբողջական մոտեցումների բացակայությունը պայմանավոր-
ված է ներքին և արտաքին ազդակներով: Ներքին ազդակներից որո-
շիչը և առաջինը եղել է հայկական պետականության բացակայու-
թյունը, որի պայմաններում է ձևավորվել հայ քաղաքական միտքը,
որը հաճախ գործել է Հայաստանի սահմաններից դուրս: Օտարների
տիրապետության տակ գտնվող Հայաստանի դեպքում օրինաչափո-
րեն առաջացած գերխնդիրը հայ քաղաքական մտքի համար հայրե-
նիքի ազատագրումն էր, ուստիև առաջնային էր պետականության
վերականգնումը:

Արտաքին քաղաքական կարևոր ազդակը, որն էապես ազդել է
հասարակագիտական մտքի ձևավորման վրա և կանխորոշել դրա
ուղղություններն ու միտումները, Հայաստանի աշխարհագրական
դիրքն է եղել, որով պայմանավորվել են հանրային արժեհամակարգի
ընտրությունը և քաղաքական կողմնորոշումները՝ դառնալով աշ-
խարհայացքային խնդիր: Եվրոպայի և Ասիայի խաչմերուկում
գտնվող Հայաստանը ոչ միայն դարձել է Արևելքի և Արևմտքի պայ-
քարի ռազմաբեմ, այլև այդ քաղաքակրթությունների, գաղափարա-
կան տարբեր հոսանքների անդրադարձման թեժ կետ: Պայքարը տե-
ղավոխվել է մաս Հայաստանում և նրա սահմաններից դուրս լույս
ընծայվող հայկական թերթեր: Պետականության բացակայության
պայմաններում Արևելյան և Արևմտյան Հայաստանը չէր կարող ինք-
նուրույն որոշել երկրի ներքին և արտաքին ուղեգիծը, սակայն հայ
գործիչները ուղիներ էին փնտրում ապահովելու երկրի անվտանգու-
թյունն ու հասարակական զարգացումը:

Երկրորդ կարևոր ներքին գործոնը եղել է հանրային կառույցների, հանրային կյանքի կազմակերպումը, ինչի շուրջ բանավեճերը դարձել են հասարակական օրակարգի հիմնահարց՝ հաճախ լրջորեն մասնատելով հանրային կյանքը և քաղաքական միտքը:

Եկեղեցին հաճախ իրականացրել է պետության գործառնությունները՝ իր կառույցներով փոխարինելով նրան: Հայոց եկեղեցին եղել է երրորդ կարևոր ներքին ազդակը, որն էապես ազդել է հայ հասարակագիտական մտքի ձևավորման վրա, որն անդրադարձել է եկեղեցու գործառնություններին, նրա դերին և ազդեցությանը, դավանաբանական խնդիրներին:

Չնայած պետականագուրկ վիճակին՝ հայ հանրային, եկեղեցական կյանքն ընթանում էր որոշակի կանոնակարգմամբ: Վաղ միջնադարում ստեղծվեց հանրային կյանքը կարգավորող «Կանոնագիրք հայոց» երկը՝ «բաղկացած հոգևոր-եկեղեցական, բարոյախրատական, գաղափարաքաղաքական, տնտեսական հարաբերությունները սահմանող կանոնական հոդվածներից: Հայ եկեղեցական ժողովների աստիճանակարգումը, ինքնավարությունը, ժողովրդավարության տարրերը հիմք էին տալիս այդ ժողովները համարելու «եվրոպական պառլամենտի նախատիպ»⁹:

Պետականության վերականգնումը համարելով առաջնային խնդիր՝ հայ քաղաքական-հասարակագիտական միտքը մշակել է հզոր, կենտրոնացված պետության հիմունքները՝ ստեղծելով արժեքավոր երկեր, որոնցից է XII դարի փիլիսոփա, առակագիր Մխիթար Գոշի (1120-1213) «Դատաստանագիրքը» (1184): Գոշն ընդգծում է պետական արդար կառավարման, վստահելի դատարանների կարևորությունը, առաջ քաշում տղամարդու և կնոջ իրավունքների պայմանական հավասարության խնդիրները:

Միջնադարի վերջին նշանավոր գործիչ Գրիգոր Տաթևացին (1346-1409) իր երկերում («Գիրք հարցմանց», «Գիրք քաչոգութեան», «Ոսկեփորիկ») ավելի առաջ է անցնում՝ կարևորելով մարդկանց իրավահավասարության խնդիրը, քանի որ «նրանք բոլորն էլ

⁹ Մանուչարյան Հ., Դավազներ հայ քաղաքական մտքի պատմության, Եր., 2002, էջ 84:

նույն նյութից են և միևնույն նախահոր ժառանգները»¹⁰: Ըստ Տաթևացու՝ հանրությունը մեկ միասնական օրգանիզմ է, և յուրաքանչյուրը կատարում է իր դերը:

XVIII դարում հայ հասարագիտական միտքը վերելք է ապրում Հայաստանից դուրս: 1787 թ. Մադրասում լույս է տեսնում Շահամիր Շահամիրյանի «Որոգայթ փառաց» երկը՝ աշխարհի առաջին սահմանադրական նախագծերից մեկը: Կարևորելով իրավական պետության ստեղծման խնդիրը՝ նա գրում է. «Մի ամբողջ ազգի համար անհնարին չէ և ոչ էլ դժվարին իրենց փառքն ու ազատությունը զարդարել օրենքով ու կարգադրությամբ»¹¹: Շահամիրյանի համոզմամբ «յուրաքանչյուր մարդ ազատորեն կարող է խորհել, խոսել ու կատարել ամեն ինչ՝ կրելով թե՛ իր բարի, թե՛ չար գործերի պատասխանատվությունը»¹²:

XVIII դարի հայ քաղաքագիտական միտքն ամբողջացրեց Մովսես Բաղրամյանը (1777-1788), որն իր գործունեությունն իրականացրել է Մադրասում: Իր «Նոր տետրակ, որ կոչի հորդորակ» երկում (1773) Բաղրամյանը միապետական կարգերը համարում է հակաբնական. երկրում բարձրագույն իշխանությունը պետք է լինի խորհրդարանը՝ «անխախտելի սահմանադրութեամբ և անեղծանալի օրինոք»¹³: Հայաստանի ազատագրության հույսը նա կապում էր հայ ուսյալ երիտասարդության հետ: Մովսես Բաղրամյանը հայ քաղաքագիտական միտք ներմուծեց առաջադիմական գաղափարները՝ կազմելով ժամանակի եվրոպացի մտածողների կողքին:

Հայ ազգային, հանրային կյանքի հետադիմությունը, համաշխարհային քաղաքական գործընթացներին Հայաստանի անհաղոր-

¹⁰ Մանուչարյան Հ., Դրվագներ հայ քաղաքական մտքի պատմության, Եր., 2002, էջ 136:

¹¹ Շահամիր Շահամիրյան, Որոգայթ փառաց, https://hycatholic.ru/pro/biblioteca/%D5%85%D5%A1%D5%AF%D5%B8%D5%A2%D5%A1%D5%B5_%D5%87%D5%A1%D5%B0%D5%A1%D5%B4%D5%AB%D6%80%D5%A5%D5%A1%D5%B6%D6%81_%D5%88%D6%80%D5%B8%D5%A3%D5%A1%D5%B5%D5%A9_%D5%93%D5%A1%D5%BC%D5%A1%D6%81.pdf, էջ 109, դիտվել է 01.12. 2017, դիտվել է դեկտեմբեր, 2015:

¹² Նույն տեղում:

¹³ Բաղրամյան Մ., Երկեր, Եր., 1991, էջ 13:

դությունը, պետականության բացակայությունը հնարավորություն չեն ընձեռել, որ առաջադիմական ուղիությունները ձևավորվեն երկրի ներսում. դրանք կազմավորվել են հայրենիքի սահմաններից դուրս:

Հալածվելով հայրենիքում՝ Ռուսաստանում իր քաղաքական գործունեությունն է ծավալել Միքայել Նալբանդյանը (1829-1866): Լինելով ժամանակի ուսյալ մարդկանցից մեկը, շրջագայելով Եվրոպայում, ծանոթանալով քաղաքական հոսանքների հետ, կապեր հաստատելով ռուս առաջադիմականների հետ՝ Նալբանդյանն ուղենշային դեր խաղաց հայ մոր հասարակագիտական մտքի ձևավորման մեջ: Նա լայնածավալ գործունեություն է ծավալել մամուլում՝ Ս. Նազարյանի հետ հրատարակելով «Հյուսիսափայլը»: Հեղափոխական դեմոկրատ Նալբանդյանի «կյանքի բուն խորհուրդը և նպատակն» է՝ «պաշտպանել էն հայի առաքուր կոխված իրավունքը», և դրա համար «չէ պիտո ընկրկինք ոչ բանտի, ոչ արստրի առջև, ոչ միայն բանիվ և գրչով, այլև զենքով և արյունով...»¹⁴: Ազատության գաղափարը հատում է պետությունների սահմանները. «Ռուսիո մեջ խմորված ազատությունը, ընդհանուր մարդկության ազատության վերաբերությամբ, մեծ խորհուրդ ունի»¹⁵: Նալբանդյանն առաջ է քաշում խղճի և կրոնի ազատության խնդիրը. «Կրոնական հավատալիքը, վերացական բաներ լինելով, այլև խղճմտանքի սահմանի մեջ ամփոփված, պիտի վերանորոգվին կամ հնաման յուրաքանչյուր անձին սրտի և հոգու մեջ լրացյալ ազատությամբ...»¹⁶: Նալբանդյանն անդրադառնում է նաև ԱՄՆ ստրկատիրության խնդրին՝ այն համարելով «մարդկության նախատինքը», և ստրկատիրության վերացումը բնութագրում է որպես «Հյուսիսային Ամերիկայի դյուցազնական անձնագոհություն»:

Միքայել Նալբանդյանը քաղաքական մտքի մի ամբողջ դարաշրջան է մարմնավորում:

XIX դարի ավարտին հայ քաղաքական միտքը սկսում է համակարգման առաջին արդյունքները տալ. ձևավորվում են կուսակցու-

¹⁴ Նալբանդյան Մ., Երկեր, Եր., 1985, էջ 442:

¹⁵ Նույն տեղում, էջ 442:

¹⁶ Նույն տեղում, էջ 443:

թյունները՝ Արմենակյանը (1885), Հնչակյանը (1887), Դաշնակցությունը (1890), որոնց ծրագրերում ներառված էին ազգային-ազատագրական պայքարի խնդիրներ: Սակայն 1915 թ. հայոց ցեղասպանությունը, պատմական հայրենիքի կորուստը խարխլում են հայ քաղաքական մտքի հիմքերը, որոնք արդեն սկսել էին ճաքեր տալ քաղաքական տարաձայնությունների հետևանքով: Աշխարհաքաղաքական փոփոխությունների արդյունքում 1918 թ. վերականգնվում է հայոց անկախ պետականությունը, ստեղծվում են նրա հիմքերն ապահովող հաստատություններ: Սակայն անկախ Հայաստանի Հանրապետությունը միայն 2,5 տարվա կյանք ունեցավ: Իսկ Խորհրդային Հայաստանն ամբողջատիրական համակարգի մի մասն էր:

Ամփոփելով հայ հանրային, քաղաքական կյանքում ժողովրդավարության ընկալման առանձնահատկությունները՝ հարկ է ընդգծել.

- պետականության վերականգնումը համարելով գլխավոր խնդիր՝ հայ քաղաքական միտքը հիմնականում անդրադարձել է պետաիրավական խնդիրներին,
- հայ հանրային, եկեղեցական կյանքը կարգավորվում էր ինքնակառավարման, ինքնավարության սկզբունքներով,
- հայ քաղաքական միտքը մշտապես կրել է Արևմուտքի և Արևելքի ազդեցությունը,
- հայ առանձին գործիչներ կանգնեցին ժամանակի առաջադեմ մտածողների հետ նույն հարթության վրա՝ տարածելով ազատության, արդարության գաղափարները:

Ըստ այդմ՝ հիմնագուրկ է դառնում այն պնդումը, թե ժողովրդավարությունը խորթ է հայ ժողովրդին: Դրա վկայությունն է XX դարի վերջում Վերակառուցման քաղաքական փոփոխություններին Հայաստանի հասարակության արձագանքը՝ ազգերի ինքնորոշման, ժողովրդավարական ազատությունների պահանջներով:

ԳԼՈՒԽ 2.

ԱՄԵՐԻԿԱՆ ԳՈՐԾՈՂ ՄԻԱՅՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԻ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԵՎ ԵՐԿՐՈՐԳ- ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԻ ԸՆԹԱՅՔՈՒՄ ԵՎ ՀԵՏՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

2.1. Ամերիկյան աջակցությունը հայ ժողովրդին Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում

Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում վերանայելով չեզոքության ուղեգիծը՝ ԱՄՆ-ն հայտարարեց Անտանտի երկրների կազմում պատերազմի մեջ ներգրավվելու մասին (1917 թ., ապրիլի 6): Նախագահ Վիլսոնը (1913-1921) ուղերձով դիմեց ամերիկացիներին. «Նժարի վրա է քաղաքակրթության բախտը: Իրավունքն ավելի արժեքավոր է, քան խաղաղությունը, և մենք պետք է կռվենք նրա համար, ինչը միշտ պահել ենք մեր սրտում, ժողովրդավարության, այն մարդկանց իրավունքների համար, որոնք իրենց կառավարություններում ձայն ունենալու իրավունքով են օժտված, փոքր ժողովուրդների իրավունքների և ազատության, իրավունքի համընդհանուր տիրապետության՝ ազատ ժողովուրդների այնպիսի ներդաշնակության, որը կբերի խաղաղություն, ապահովություն և աշխարհն ինքնին ազատ կդարձնի»¹⁷:

ԱՄՆ մասնակցությունը պատերազմին մեծացրեց նրա դերն ու ազդեցությունը միջազգային հարաբերություններում: ԱՄՆ դերակատարումը հատկապես կարևոր էր տեղահանության և ցեղասպանության ենթարկված հայ ժողովրդի համար՝ պատերազմի ծանր հետևանքները հաղթահարելու, հումանիտար օգնության, տեղահանվածներին ԱՄՆ-ում ապաստան հատկացնելու առումով:

¹⁷ “The Makings of America: The United States and the world: Since 1865, Woodrow Wilson’s War Message”, Lexington, MA, Toronto, 1993, Vol. II, p. 117.

Մինչև 1914 թվականը Օսմանյան Թուրքիայում ԱՄՆ դեսպանատան հովանու ներքո գործող հաստատությունները մեծ աջակցություն էին ցուցաբերում հայկական բնակավայրերին: Ըստ 1915 թ. «The Missionary Review of the World» հանդեսի նոյեմբերի համարում հրապարակված «Ամերիկյան միսիոներների հետաքրքրությունները» հոդվածի՝ «ԱՄՆ-ն մեծ հետաքրքրություններ ունի Թուրքիայում: Դրանք քաղաքական հետաքրքրություններ չեն, այլ մարդասիրական: 1819 թ. ամերիկացի միսիոներները ներդրեցին տպագրական մեքենան, նոր արտադրություններ, արևմտյան կրթական համակարգը, որն իր լավագույն դրսևորումն ունեցավ հատկապես հայերի շրջանում: Ամերիկյան հայտնաբերեց հայերին և նրանց դուրս բերեց դեպի արևմտյան քաղաքակրթություն: Նաև այդ պատճառով է, որ ԱՄՆ-ն առաջիններից մեկը բարձրացրեց իր բողոքի ձայնը հայերի կոտորածների դեմ և աջակցություն ցուցաբերեց, որ փրկի այդ տաղանդավոր ժողովուրդին և պահպանի նրան»¹⁸:

1913-1916 թթ. Թուրքիայում ԱՄՆ դեսպան չենրի Մորգենթաուն իր դիվանագիտական ներուժն ի սպաս դրեց երիտթուրքերի ցեղասպան ծրագրերը կանխելու համար: Թալեաթին Մորգենթաուն զգուշացնում էր. «Ամերիկացիները զայրացած են հայերի ոչնչացման ձեր ծրագրերից: Դուք ձեր ծրագրերը պետք է կառուցեք՝ ելնելով մարդասիրական սկզբունքներից, այլ ոչ թե ազգային խտրականության»¹⁹: Մորգենթաուի առաջարկով ԱՄՆ կառավարությունը ցեղասպանությունից փրկվածներին 550 հազ. դոլար օգնություն հատկացրեց և 1 մլն դոլար երիտթուրքերի կառավարությանը՝ տեղահանված հայերի համար փոխադրամիջոցներ հատկացնելու համար: Մորգենթաուն հանդես եկավ հումանիզմի սկզբունքների հետևողական պաշտպանությամբ:

XX դարասկզբին ԱՄՆ 38-րդ նախագահ նախագահ Վուդրո Վիլսոնի վրա Սևրի պայմանագրով դրվեց Հայաստանի սահմանների

¹⁸ The Missionary Review of the World, 1915, <https://babel.hathitrust.org/cgi/pt?id=mdp.39015010805615>.

¹⁹ Vardanyan Q., Henry Morgenthau and the Armenians, Yerevan, publishing house “Hayastan”, 1984, p. 148.

հատակեցման խնդիրը: Կարևորելով Սևրի պայմանագիրը, որով Հայաստանը ճանաչվեց որպես ազատ և անկախ պետություն, Ն. Ադոնցն ընդգծում է. «Հայաստանի սահմանների կարևորագույն հարցը գործնականում բաց է մնում, ինչը նվազեցնում է այս ակտի գործած տպավորությունը: Վերջնական վճիռը կախված է մեծ իրավաբանից՝ ԱՄՆ պրեզիդենտից»²⁰: Ըստ Ադոնցի՝ որևէ պետություն չի կարող մեկուսացված ապրել, և պետք է հնարավորություն ունենա հաղորդակցվելու աշխարհի հետ. «Սրանից են կախված պետությունների կենսունակությունը, նրանց քաղաքական և մշակութային արժեքը: Հետևաբար, եթե ժողովուրդների ինքնորոշման սկզբունքը ազգային բաղձանքների ժամանակավոր բավարարման հրավառության ցուցադրում չէ, նա պետք է այնպիսի ձևեր ընդունի, որ կարողանա երաշխավորել պետության անկախ գոյությունը»²¹:

Հայաստանի սահմանների հարցն այդպես է չլուծվեց, քանի որ Հայաստանի Հանրապետությունը կորցրեց իր անկախությունը և խորհրդայնացվեց:

²⁰ Նիկողայոս Ադոնց, Հայկական հարցի լուծման շուրջ, Երևանի համալսարանի հրատ., Եր., 1986, էջ 16:

²¹ Նույն տեղում, էջ 24-25:

2.2. Մարշալի պլանը հետպատերազմական Եվրոպայի համար որպես ԱՄՆ քաղաքական և տնտեսական աջակցության ծրագիր: ԽՍՀՄ-ԱՄՆ հարաբերությունները. «սառը պատերազմից» մինչև Գորբաչովյան վերակառուցում

ԽՍՀՄ կազմավորումից մեկ տասնամյակ անց ԱՄՆ-ն հրաժարվում էր դիվանագիտական հարաբերություններ հաստատել ԽՍՀՄ-ի հետ և չէր ճանաչում այն:

Երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում (1939-1945), հանդես գալով հակահիտլերյան դաշինքի կազմում, ԱՄՆ-ն շեշտակիորեն մեծացրեց իր քաղաքական դերն ու ազդեցությունը միջազգային հարաբերություններում:

1941 թ. մարտի 11-ին ԱՄՆ Կոնգրեսն ընդունեց Լենդ-Լիզլի օրենքը, որով նախատեսվում էր պատերազմի ընթացքում հակահիտլերյան կոալիցիայի երկրներին վարձակալությամբ կամ փոխարինաբար զինամթերք, հումք, մթերք տալու համակարգ: Լենդ-Լիզլով ԱՄՆ ծախսերը 1941-1945 թթ. կազմեցին 46 մլրդ դոլար: Պատերազմից հետո հրատապ էին պատերազմի հետևանքների հաղթահարման, Եվրոպայի քաղաքական քարտեզի փոփոխման խնդիրները, որոնք էլ թելադրում էին միջազգային հարաբերությունների ուղղությունը:

1948 թ. հունիսին Բերկլիի համալսարանում ԱՄՆ նախագահ Տրումենը (1945-1953) հայտարարեց. «Թող յուրաքանչյուր ազգ իմանա, որ մենք կվճարենք ցանկացած զին, կկրենք ցանկացած բեռ, կհաղթահարենք ցանկացած դժվարություն, կաջակցենք ցանկացած բարեկամի, հանդես կգանք ցանկացած թշնամու դեմ ազատության հաղթանակի ապահովման համար: ԱՄՆ-ն ազատ ազգերին կցուցաբերի այն օգնությունը, ինչը կթելադրի իրավիճակը»²²:

ԱՄՆ Կոնգրեսում սուր բանավեճ ծավալվեց հետպատերազմական Եվրոպային տնտեսական աջակցության հարցի շուրջ: Աջակցության ծրագրի մշակումը հանձնարարվեց ԱՄՆ պետքարտուղար

²² “America”, W. W.-Norton and Company, NewYork, London, 1993, Vol. 1, p. 126.

Ջորջ Մարշալին, որը ձևավորեց բարձրակարգ դիվանագետներից կազմված աշխատանքային խումբ՝ ԽՍՀՄ-ում ԱՄՆ դեսպան Ջոն Քենանի գլխավորությամբ: Խմբի կազմած փաստաթղթի եզրակացության մեջ պետքարտուղարին ներկայացված առաջարկներից մեկի համաձայն՝ «պետք է այնպես վարվել, որ բոլորը գիտակցեն, որ ամերիկյան օգնության ընդլայնումը քաղաքական հարց է: Այն կարող է տրամադրվել միայն այն դեպքում, երբ արդյունքները կհամապատասխանեն մեր ջանքերին և ծախսերին»²³:

ԱՄՆ Կոնգրեսում ծրագիրը ներկայացնելիս պետքարտուղար Ջորջ Մարշալը, որի անունով այն կոչվել է, կարևորելով ԱՄՆ-ի ժողովրդավարությունը պաշտպանելու հետևողականությունը, ընդգծում էր. «Յուրաքանչյուր ժողովուրդ կանգնած է «կենսակերպի ընտրության առջև. մի կենսակերպը հիմնված է մեծամասնության կամքի վրա՝ ներկայացուցչական կառավարմամբ, ազատ ընտրություններով, խոսքի, կրոնի, քաղաքական ճնշումներից անհատի ազատությունների ապահովմամբ: Մյուս կենսակերպը հենվում է բռնի ուժով մեծամասնությանը հարկադրված փոքրամասնության կամքի վրա՝ վերահսկվող մամուլի, կանխորոշված ընտրությունների, անհատի ազատությունների ճնշման վրա»²⁴: ԱՄՆ-ն պետք է օգնի ազատ ազգերին՝ դիմադրելու «հպատակեցման փորձերին»՝ «ընտրելու սեփական կենսակերպը»: Այդ աջակցությունը պետք է կրի ֆինանսատնտեսական բնույթ, ըստ ՄԱԿ-ի կանոնադրության՝ առանց «քաղաքական ներարկումների»:

Կոնգրեսում քեթ բանավեճերից հետո Մարշալի պլանն ընդունվեց և ուժի մեջ մտավ 1948 թ. ապրիլին, երբ ԱՄՆ-ում ընդունվեց «Օտարերկրյա պետություններին օգնելու» քառամյա ծրագիրը, կնքվեցին երկկողմ պայմանագրեր, որոնցով ծրագրի մասնակիցները պարտավորվում էին նպաստել ազատ ձեռներեցությանը, խրախուսել ամերիկյան մասնավոր ներդրումները, իջեցնել մաքսատուրքերը: 1948-1951 թթ. օգնությունը կազմեց 17 մլրդ դոլար: 1951 թ. դեկտեմբեր-

²³ Джордж Кеннан, Дипломатия второй мировой войны, М.: изд. "Центрполиграф", 2002, стр. 237.

²⁴ Նույն տեղում, էջ 315:

րի 30-ին պաշտոնապես դադարեց Մարշալի պլանի գործողությունը: Այն փոխարինվեց «Անվտանգության փոխադարձ ապահովման» օրենքով (1951 թ. հոկտեմբեր):

Մարշալի պլանի աշխատանքային խմբի ղեկավար Ջորջ Քենանը «Երկրորդ համաշխարհային պատերազմի դիվանագիտությունը ԽՍՀՄ-ում» գրքում գրում է. «Ես եկա այն եզրակացության, որ չի կարելի օգնել ժողովրդին առանց օգնելու վարչակարգին, ինչպես չի կարելի վնասել վարչակարգին առանց վնասելու ժողովրդին: Եվ ամենալիմաստունը մեր կողմից պետք է լինի ո՛չ օգնել, ո՛չ վնասել՝ հնարավորություն տալով, որ ժողովուրդն ինքը լուծի իր խնդիրները»²⁵:

Մարշալի ծրագիրը դարձավ հետպատերազմյան Եվրոպայի հանդեպ ամերիկյան հումանիզմի և քաղաքական շահերի ներդաշնակման կարևոր վկայություն:

Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից հետո ԽՍՀՄ-ի և Արևմուտքի միջև առաջացած տարաձայնությունները հանգեցին քաղաքական դիմակայության: Արևմուտքը ձգտում էր կասեցնել ԽՍՀՄ-ի և կոմունիստական գաղափարախոսության ազդեցության ընդլայնումը հետպատերազմական Եվրոպայում: 1948 թ. օգոստոսին ԱՄՆ ազգային անվտանգության խորհրդի՝ «ԱՄՆ նպատակները Ռուսաստանի հանդեպ» հանձնարարականով սկիզբ դրվեց ԽՍՀՄ-ի հանդեպ «սառը պատերազմի» քաղաքականությանը, որը հանգեցրեց երկկողմ հարաբերությունների սառեցման:

Շուրջ հինգ տասնամյակ տևած «սառը պատերազմը» շարունակվեց մինչև Գորբաչովյան վերակառուցումը: 1985 թ. ապրիլին հռչակված Վերակառուցման քաղաքական ուղեգիծը ներառում էր հետևյալ սկզբունքները՝ պետական կյանքի ժողովրդավարացում, հրապարակայնության ապահովում, բազմակացութաձև տնտեսության ստեղծում: Մոսկվան վերանայեց ԱՄՆ-ի հետ վարվող քաղաքականությունը: Ապրիլյան պլենումում Գորբաչովը հայտարարեց. «Մենք գիտակցում ենք և հաշվի ենք առնում ԱՄՆ հսկայական դերն

²⁵ Джордж Кеннан, Дипломатия второй мировой войны, М.: изд. «Центрполиграф», 2002, стр. 179.

արդի աշխարհում, գնահատում ամերիկացիների ներդրումը համաշխարհային քաղաքակրթության մեջ, հաշվի ենք նստում ԱՄՆ օրինական ազգային շահերի հետ, գիտակցում, որ առանց այդ երկրի անհնար է վնասագերծել միջուկային հնարավոր աղետը և ապահովել անվտանգ և կայուն աշխարհ: Մենք չունենք չար մտադրություններ ԱՄՆ-ի հանդեպ և ձգտում ենք համագործակցել բոլոր ուղղություներով»²⁶:

ԱՄՆ նախագահ Ռ. Ռեյգանի (1981-1989) և ԽՍՀՄ կենտկոմի գլխավոր քարտուղար Գորբաչովի (1985-1991) կառավարման ընթացքում սկիզբ դրվեց Վաշինգտոնի և Մոսկվայի միջև համագործակցությանը:

1989 թ. Գերմանիայի վերամիավորմամբ, Աֆղանստանից և Արևելյան Եվրոպայից խորհրդային զորքերի դուրսերմամբ ԽՍՀՄ-ի հանդեպ Արևմուտքի վերաբերմունքը փոխվեց: 1990 թ. Փարիզում Մ. Գորբաչովը ստորագրեց «Նոր Եվրոպայի խարտիան», որով ավարտվեց «սառը պատերազմը»:

²⁶ Горбачов М. С., Перестройка и новое мышление, М.: Изд. политической литературы, 1988, стр. 11.

2.3. Ղարաբաղյան շարժման սկզբնավորումը և պատմաքաղաքական արդյունքները

Վերակառուցման հռչակած հրապարակայնության քաղաքականության արդյունքում փոխվեց պատմական, ազգային խնդիրների հանդեպ խորհրդային հասարակության վերաբերմունքը, բացվեցին փակ պահուցները, հրատարակվեց արգելված գրականությունը: Առավել արությանք երևացին ազգային խնդիրների հանդեպ ԽՍՀՄ նախկին ղեկավարների կողմից ժողովուրդներին պարտադրված լուծումները: Ազգային ինքնագիտակցության կտրուկ վերելքը նպաստեց ԽՍՀՄ-ում ծայր առած ազգային շարժումների ձևավորմանն ու ծավալմանը:

Հետևելով ազգերի ինքնորոշման միջազգային սկզբունքներին՝ ԼՂԻՄ մարզխորհուրդը Հայաստանի հետ վերամիավորման որոշում կայացրեց: Ստեփանակերտում սկզբնավորված Ղարաբաղյան շարժումը կարճ ժամանակ անց տեղափոխվեց Հայաստան, ուր տեղի ունեցող բազմահազարանոց հանրահավաքներն իրենց վրա էին կենտրոնացրել միջազգային հանրության ուշադրությունը: Մոսկվան նման զարգացումներ չէր կանխատեսել և չէր կարողանում լուծումներ գտնել ազգային խնդիրների համար:

Հայաստանում շարժման ղեկավարությունը ստանձնած «Ղարաբաղ» կոմիտեն ձգտում էր Մոսկվայի վրա գործադրվող հանրային ճնշմամբ հասնել Ղարաբաղի վերամիավորմանը: Շարժման պահանջները ներառում էին նաև երկրի ժողովրդավարացման խնդիրներ: «Ղարաբաղ» կոմիտեի անդամ Լևոն Տեր-Պետրոսյանը 1988 թ. հոկտեմբերի 14-ի հանրահավաքում հայտարարեց. «Հայ ժողովուրդը պատմական հանգամանքների բերումով հայտնվել է խորհրդային հասարակարգի իսկական վերակառուցման և ժողովրդավարության հաստատման ավանգարդում»²⁷, և «Հայաստանը պետք է դառնա ԽՍՀՄ առաջին հանրապետությունը, ուր պետք է իշխեն համամարդկային արժեքների, ազգերի ինքնորոշման, մարդու իրավունքների և

²⁷ Լևոն Տեր-Պետրոսյան, Ընտրանի, Եր., «Փրինսիփն» հրատ., 2006, էջ 40:

սոցիալական արդարության սկզբունքները», «պետք է վերացվի կոմունիստական կուսակցության մենիշխանությունը, հաստատվի բազմակուսակցական համակարգ, խոսքի, մամուլի, խղճի լիակատար ազատություն»²⁸:

Ղարաբաղյան շարժումը ԽՍՀՄ-ում առաջին համաժողովրդական շարժումն էր, որն ընթացավ խաղաղ և սահմանադրական ճանապարհով: Շարժման քաղաքական ազդեցությունը սկսեց տարածվել Մերձբալթյան հանրապետություններ՝ վերածվելով անկախության շարժման: Խորհրդային Հայաստանում տեղի ունեցող առաջին թավշյա հեղափոխությունն իր վրա էր սկսեռել միջազգային հանրության ուշադրությունը:

Գորբաչովն ի գործու չէր վերահսկելու իրավիճակը: Խորհրդային նոմենկլատուրան մեղադրում էր Արևմուտքին ԽՍՀՄ-ում վիճակը սրելու մեջ: Գործընթացները հանգեցրին քաղաքական նոր իրողությունների՝ մերձբալթյան հանրապետությունների անկախության և նոր ընտրությունների:

1990 թ. մայիսի 20-ի ՀԽՍՀ Գերագույն խորհրդի ընտրությունները դարձան առաջին այլընտրանքային ընտրությունները, որոնց արդյունքում խորհրդարան մտան կոմկուսի և Հայոց համագգային շարժման ներկայացուցիչները: Զաղաքական գործիչների այդ նոր սերունդն էլ 1991 թ. սեպտեմբերին հայ ժողովրդին առաջնորդեց դեպի անկախություն: 1990 թ. օգոստոսի 4-ին ԳԽ նախագահի պաշտոնում «Ղարաբաղ» կոմիտեի անդամ Լևոն Տեր-Պետրոսյանի ընտրությամբ հաղթանակ տարան նոր ժողովրդավարական ուժերը, և կոմունիստական համակարգը Հայաստանում տապալվեց:

ԽՍՀՄ-ում իրավիճակը շարունակեց լարված մնալ մինչև 1991-ի օգոստոսյան հեղաշրջումը, որից հետո երկիրը կանգնեց քաղաքական նոր իրավիճակի առջև: Ելնելով երկրի հետագա վերափոխման անհնարինությունից՝ 1991 թ. դեկտեմբերի 8-ին սլավոնական երեք հանրապետությունների՝ Ռուսաստանի, Բելառուսի, Ուկրաինայի ղեկավարների ստորագրած Բելովեժյան փաստաթղթով Խորհրդա-

²⁸ Լևոն Տեր-Պետրոսյան, Ընտրանի, Երև., «Փրինսիփն» հրատ., 2006, էջ 63-64:

յին Միությունը փլուզվեց, և հռչակվեց Անկախ Պետությունների Համագործակցության (ԱՊՀ) ստեղծման մասին: ԽՍՀՄ հանրապետությունները միմյանց հետևից հռչակեցին անկախ պետություններ:

Գեկտեմբերի 25-ին Գորբաչովը հրաժարական ներկայացրեց ԽՍՀՄ նախագահի պաշտոնից՝ դառնալով ԽՍՀՄ առաջին և վերջին նախագահը:

Հայաստանի անկախության գործընթացը սկզբնավորվեց 1990 թ. օգոստոսի 23-ին ՀԽՍՀ Գերագույն խորհրդի ընդունած Անկախության հռչակագրով: Հռչակագիրն ընդգծում էր. «Գերագույն խորհուրդը, արտահայտելով Հայաստանի ժողովրդի միասնական կամքը, ելնելով Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի սկզբունքներից և միջազգային իրավունքի հանրաճանաչ նորմերից, կենսագործելով ազգերի ազատ ինքնորոշման իրավունքը, հիմնվելով 1989 թվականի դեկտեմբերի 1-ի «Հայկական ԽՍՀ-ի և Լեռնային Ղարաբաղի վերամիավորման մասին» Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի և Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհրդի համատեղ որոշման վրա, զարգացնելով 1918 թվականի մայիսի 28-ին ստեղծված անկախ Հայաստանի Հանրապետության ժողովրդավարական ավանդույթները, խնդիր դնելով ժողովրդավարական, իրավական հասարակարգի ստեղծումը, հռչակում է անկախ պետականության հաստատման գործընթացի սկիզբը»²⁹:

1991 թ. սեպտեմբերի 21-ին Անկախության հանրաքվեի 94.39 «այո» արդյունքներով Հայաստանն անկախացավ: Հայաստանի Հանրապետությունն անկախացավ մինչև Բելովեժյան համաձայնագիրը:

Թեպետ ժամանակակից պատմագրությունն ու քաղաքագիտությունը առաջին «թավշյա հեղափոխություն» համարում են 1989 թ. չեխոսլովակյան հեղափոխությունը, սակայն XX դարի թավշյա հեղափոխության նախակարապետը եղել է Խորհրդային Հայաստանը:

²⁹ Հայաստանի Հանրապետության «Անկախության հռչակագիրը», ՀՀ Կառավարության պաշտոնական կայք, <https://www.gov.am/am/independence/>, դիտվել է 29.01.2016:

Ամփոփելով վերոշարադրյալը՝ հարկ է արձանագրել.

- ԱՄՆ օգնությունը հայ ժողովրդին սկիզբ է առել XIX դարում՝ ամերիկյան պետության հիմնադրումից արդեն մեկ դար անց: Այն կրում էր կրթական, տնտեսական, հումանիտար բնույթ: Այդ հանգամանքը հնարավորություն ընձեռեց, որ Արևմտյան Հայաստանում հայերը ներգրավվեն արևմտյան քաղաքակրթության մեջ (Արևելյան Հայաստանը ավանդաբար ռուսական ազդեցության տակ էր):
- Առաջին համաշխարհային տարիներին ԱՄՆ-ն շարունակեց մարդասիրական աջակցության ծրագրերը՝ մարդու իրավունքների պաշտպանությունը հռչակելով որպես երկարաժամկետ ռազմավարական նպատակ:
- Երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում, հանդես գալով հակահիտլերյան դաշինքի կազմում, ԱՄՆ-ն շեշտակիորեն մեծացրեց իր քաղաքական դերն ու ազդեցությունը միջազգային հարաբերություններում:
- Մարշալի ծրագիրը դարձավ հետպատերազմական Եվրոպայի հանդեպ ամերիկյան հումանիզմի և քաղաքական շահերի ներդաշնակման կարևոր վկայություն:
- Տնտեսական, հումանիտար օգնությունը մեծացրեց ԱՄՆ դերն աշխարհում, հատկապես այն տարածաշրջաններում, որտեղ առաջնահերթություններ ունեին:
- XX դարում ժողովրդարավարական ազատությունների տարածումն աշխարհում հռչակվեց որպես ԱՄՆ քաղաքական առաջնահերթություն՝ էապես մեծացնելով ամերիկյան քաղաքական գործունը միջազգային գործընթացներում:

ԳԼՈՒԽ 3.
ԱՄԵՐԻԿՅԱՆ ԳՈՐԾՈՂԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱԶԱՅՑՄԱՆ
ԳՈՐԾԸՆԹԱՅՆԵՐՈՒՄ

**3.1. ՀՀ-ԱՄՆ միջպետական երկկողմ հարաբերությունների
ձևավորումը: Հայաստանի անցումային ժողովրդավարության
առանձնահատկությունները**

***(3) 1.1. Ամերիկյան գործոնի չհավորման հիմնական բաղա-
դրիչները***

XX դարում ժողովրդավարական ազատությունների տարածումն աշխարհում հռչակվեց որպես ԱՄՆ քաղաքական առաջնահերթություն՝ էապես մեծացնելով ամերիկյան քաղաքական գործոնը միջազգային գործընթացներում: Ամերիկյան քաղաքական միտքը և կառավարող շրջանակները սկսեցին ուղիներ մշակել աշխարհում ժողովրդավարության տարածման համար, ինչը ժամանակակից քաղաքագիտությունը որակում է որպես «ժողովրդավարության արտահանում»: Աշխարհում ժողովրդավարական ազատությունների ձգտումները, այլ պետություններում ժողովրդավարության տարածման ԱՄՆ քաղաքական ուղեգիծն էապես նպաստեցին աշխարհում ամերիկյան գործոնի աճին:

Ներքին և արտաքին գործոնները տվյալ երկրում հաճախ հանդես են գալիս խիստ փոխկապակցված կարգով: Տվյալ երկրում արտաքին գործոնի ընդլայնման, խորացման և արմատավորման հետ մեկտեղ մեծ փոփոխություններ և տեղաշարժեր կարող են կատարվել ներքին գործոնների դաշտում: Արտաքին գործոնը կարող է իրականացնել իրարամերժ մի շարք գործառույթներ՝ 1. թուլացնել ներքին գործոնների կապը և դերը երկրի կյանքում, 2. փոխակերպել ներքին գործոնները, 3. փոխել երկրի հասարակական-քաղաքական զար-

գացման ուղղությունը, 4. վեր հանել, բացահայտել երկրի ներուժը, աջակցել դրան, որով՝ մաս պետության ու հասարակության զարգացմանը: Միաժամանակ, իր լավագույն նպատակներով հանդերձ, արտաքին գործոնը կարող է միայն բացասաբար անդրադառնալ տվյալ երկրի կյանքում, եթե արտաքին գործոնով ձևակերպված խնդիրները երկրի ներքին խնդիրներին բախվելիս կամ տվյալ հասարակական-քաղաքական կարգի հետ անհամատեղելիության հետևանքով այլակերպվեն, ձևախեղվեն, արժեզրկվեն:

Գերադասելի է, որ երկիրն իր զարգացման խնդիրները կարողանա լուծել՝ բացառելով կամ նվազագույնի հասցնելով արտաքին գործոնը, սակայն տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման, տեղեկատվական ընդհանուր համակարգի, գլոբալիզացիայի պայմաններում երկրները չեն կարող խուսափել արտաքին գործոնի ազդեցությունից: Միջազգային հանրության առջև ծառացած բազում խնդիրներ միասնական լուծմանն են հանգում: Մի շարք պետություններ մաս արտաքին աջակցության կարիք են զգում, ինչն անհնար է իրականացնել առանց արտաքին գործոնի ներազդեցության:

Ամերիկյան արտաքին գործոնը բազմակողմ է և բազմաբաղադրիչ՝ հասարակական, փիլիսոփայական, տնտեսական, ռազմական, քաղաքական: Այդ գործոնի հասարակական բաղադրիչը պետություններում ԱՄՆ-ի և ամերիկացիների մասին դրական վարկանիշի ձևավորումն է, ամերիկյան հանրային հաստատությունների փորձի տարածումը, որոշումների կայացման վրա հանրային կարծիքի և նրա դերակատարման ազդեցության մեծացումը:

Ամերիկյան գործոնի փիլիսոփայական բաղադրիչը արևմտյան արժեքների, ժողովրդավարական ազատությունների տարածումն է աշխարհում ամերիկյան կառույցների, ծրագրերի, ժողովրդավարության ամերիկյան փորձի ուսուցման միջոցով:

Ամերիկյան գործոնի տնտեսական բաղադրիչն ամերիկյան դոլարի դիրքերի ամրակայումն ու ընդլայնումն է, միջազգային ֆինանսատնտեսական հեղինակավոր կառույցներում ԱՄՆ վճռորոշ ձայնը, հաղորդակցության ուղիների վերահսկումը, արտաքին առևտրի վրա կառավարման ազդեցությունը, շուկայական հարաբերությունների,

ազատական տնտեսաձևի ընդլայնումն աշխարհում, միջազգային ֆինանսատնտեսական գործընթացներում երկրի տնտեսական շահերի պաշտպանությունը, Մեծ ութնյակի և Մեծ քսանյակի երկրներում ԱՄՆ ազդեցության ապահովումը:

Ամերիկյան գործոնի ռազմական բաղադրիչն առանձնանում է ԱՄՆ ռազմուժի, այս կամ այն երկրում ռազմական ներկայության, միջուկային ծրագրերի վերահսկման, աշխարհում սպառազինության սահմանափակման, միջազգային անվտանգության համակարգերում, ռազմական դաշինքներում ԱՄՆ ազդեցիկ ներկայության ապահովմամբ:

Ամերիկյան գործոնի քաղաքական բաղադրիչն ԱՄՆ քաղաքական ազդեցության ամրապնդումը և ընդլայնումն է, միջազգային հարաբերություններում առաջատար դիրքերի պահպանումը, աշխարհաքաղաքական ծրագրերում, տարածաշրջանային հակամարտությունների լուծման գործընթացներում ԱՄՆ դերակատարումը:

Ամերիկյան գործոնի այս բոլոր հիմնական բաղադրիչները փոխկապակցված են և կարող են հանդես գալ թե՛ առանձին-առանձին, թե՛ միասին՝ ձևավորելով ամերիկյան գործոնը:

(3) 1.2. Աշխարհաքաղաքական փոփոխությունները և Միացյալ Նահանգների մուտքը Անդրկովկաս. հայ-ամերիկյան հարաբերությունների սկզբնավորումը

Իր աշխարհաքաղաքական դիրքի շնորհիվ Կովկասը մշտապես համարվել է քաղաքակրթությունների և պետությունների խաչմերուկ, ուստի և նրա համար մղվող պայքարը դաժան է եղել: Միաժամանակ պատմական իրողությունների արդյունքում թե՛ Հյուսիսային և թե՛ Հարավային Կովկասն ընկալվել և եղել են Ռուսական կայսրության ազդեցության գոտի: Ըստ այդմ՝ անսպասելի չէր այն հանգամանքը, որ ԽՍՀՄ փլուզումից և պետական անկախ միավորների ստեղծումից հետո կովկասյան երկրներում տարբեր ուժգնությամբ դրսևորվեցին հակառուսական տրամադրությունները: ԽՍՀՄ փլուզումն արմատապես փոխեց մաս Կովկասի գեոպոլիտիկ իրավիճակը:

1990-ական թթ. ԽՍՀՄ փլուզման հետ նորանկախ պետությունների մի մասը հռչակեց ժողովրդավարական պետության կայացման գործընթացի մասին: 1991 թ. Հայաստանի անկախության հանրաքվեի դրված հարցադրմանը՝ «Ուզո՞ւմ եք, որ Հայաստանի Հանրապետությունը լինի անկախ ժողովրդավարական պետություն ԽՍՀՄ կազմից դուրս», բնակչության 94,39 տոկոսը «այո» էր պատասխանել:

Համաշխարհային փոփոխությունների և զարգացումների մեջ նորանկախ պետությունները փորձում էին գտնել անվտանգության հնարավորություններ: Աշխարհաքաղաքական վերադասավորումների ընթացքում Միացյալ Նահանգները ձգտում էր մուտք գործել կովկասյան տարածաշրջան: Ժամանակն աշխատում էր ԱՄՆ-ի օգտին, մանավանդ որ Ռուսաստանն իր հիմնախնդիրների համար էր լուծումներ որոնում: Վաշինգտոնի համար Անդրկովկասը դեռ մեկ միասնական և ընդհանուր համակարգ չէր, և Միացյալ Նահանգները գործընկերներ էր փնտրում Անդրկովկասում, որը հետագայում վերանվանեց Հարավային Կովկաս:

Միաժամանակ ԽՍՀՄ փլուզումը Հարավային Կովկասի պետություններում ուղեկցվեց քաղաքացիական բախումներով, հեղաշրջումներով, իսկ ազգերի, ժողովուրդների ինքնորոշման ձգտումները ռազմական հարթություն տեղափոխվեցին: Ըստ այդմ՝ օրինաչափ էր ԱՄՆ նախկին պետքարտուղար Հենրի Զիսինջերի հետևյալ դիտարկումը. «Խորհրդային կոմունիզմի փլուզումը ամերիկյան գաղափարների և արժեքների ողջամիտ հաղթանակն էր, բայց ճակատագրի ծաղրով այդ փլուզումը Ամերիկային դեմ առ դեմ կանգեցրեց այնպիսի աշխարհի առջև, որից իր ողջ պատմության ընթացքում Ամերիկան խուսափել է»³⁰:

Անդրկովկասի պետություններից Միացյալ Նահանգներն առաջինը մուտք գործեց Հայաստան՝ 1991 թ. դեկտեմբերի 25-ին ճանաչելով Հայաստանի Հանրապետության անկախությունը, իսկ 1992 թ. հունվարի 7-ին՝ հաստատելով դիվանագիտական հարաբերություն-

³⁰ Киссинджер Г., Дипломатия, М.: изд. «Лодомир», 1997, стр. 11.

ներ: Ադրբեջանի հետ ԱՄՆ դիվանագիտական հարաբերություններ է հաստատել 1992 թ. փետրվարի 19-ին, իսկ Վրաստանի հետ՝ 1992 թ. մարտի 24-ին: 1992 թ. փետրվարին 3-ին ԱՄՆ-ն դեսպանություն հիմնեց Երևանում. «Հրազդան» հյուրանոցում բարձրացվեց ԱՄՆ պետական դրոշը: Հայաստանում ԱՄՆ դեսպանատան գործերի ժամանակավոր հավատարմատար Սթիվըն Մանն ընդգծեց. «Անկախ Հայաստանում մենք տեսնում ենք այն գոյակները, որոնք առավել բարձր են գնահատվում ԱՄՆ-ում»³¹:

Հարավկովկասյան պետություններից հետխորհրդային Հայաստանն առաջինն էր, որտեղ դրվել էին ժողովրդավարական հաստատությունների հիմքերը. ձևավորվել էր ընդդիմադիր և ազատ մամուլը, բազմակուսակցականությունն իրողությունն էր, 1991 թ. անկախության հանրաքվեն և ՀՀ նախագահի 1-ին ընտրություններն անցել էին հասարակական ակտիվության և օրինապաշտության մթնոլորտում, որպես ներկայացուցչական մարմին ձևավորվել և գործում էր խորհրդարանը: Ժողովրդավարական արժեքները պետական-հասարակական գործընթացների զարգացման հիմքում դնելու, ազատական տնտեսություն կայացնելու Երևանի հավաստիացումներն ու պատրաստակամությունը թերահավատություն չէին առաջացնում միջազգային հանրության մոտ, որի համար Հայաստանը տարածաշրջանի «ժողովրդավարության կոլոսկն» էր և առանձնանում էր ներքաղաքական իրավիճակի կայունությամբ. ի տարբերություն հարավկովկասյան մյուս պետությունների՝ ընդդիմության պայքարն այստեղ երբևէ չվերածվեց զինված ընդհանրումների, և երկիրը զերծ մնաց քաղաքացիական կռիվներից: ԱՄՆ-ում 1 միլիոնից ավել հայկական սփյուռքի առկայությունն արդեն իսկ կամուրջ էր ստեղծել երկու երկրների միջև:

1992 թ. փետրվարին կայացավ ԱՄՆ պետքարտուղար Ջեյմս Բեյքերի այցը Երևան: 1992 թ. մարտին Վաշինգտոնում բացվեց Հայաստանի Հանրապետության դեսպանությունը, դեսպան նշանակվեց Ալեքսանդր Արզումանյանը: (1993 թ. մարտի 1-ին նրան փոխարինեց

³¹ «Հայք», 5 փետրվարի, 1992:

Ռուբեն Շուգարյանը: 2000 թ. դեսպան է նշանակվել Արման Կիրակոսյանը, 2005 թ.՝ Թաթուլ Մարգարյանը, 2014 թ.՝ Տիգրան Մարգարյանը, 2016 թ.՝ Գրիգոր Հովհաննիսյանը, 2018 թ.՝ Վարուժան Ներսեսյանը, 2021 թվականից՝ Լիլիթ Մակունցը): 1993 թ. հուլիսին կայացավ ՀՀ արտգործնախարար Վահան Փափազյանի այցը Վաշինգտոն: 1994 թ. օգոստոսին աշխատանքային այցով Վաշինգտոն մեկնեց ՀՀ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը:

1993 թ. նշանակվեց Հայաստանի Հանրապետությունում ԱՄՆ առաջին դեսպանը՝ Հենրի Գիլմորը: (1995 թ. նրան փոխարինեց Պիթեր Թոմսոնը, 1998 թ.՝ Մայքլ Լեմոնը, 2001 թ.՝ Ջոն Օրդվեյը, 2003 թ.՝ Ջոն Էվանսը (լիազորությունները վաղաժամկետ դադարեցվեցին), 2007 թ.՝ Մարի Յովանովիչը, 2011 թ.՝ Ջոն Հեֆֆերնը, 2015 թ.՝ Ռիչարդ Միլը, 2019 թ. փետրվարին՝ Լին Թրեյսին, 2023 թ. փետրվարին՝ Քրիստինա Քվինը):

Կովկասում հաստատվելու ճանապարհին Հայաստանը նոր և կարևոր գործընկեր էր Միացյալ Նահանգների համար: Հայ-ամերիկյան հարաբերությունների սկզբնավորումը արդյունավետ և հեռանկարային շարունակություն էր նախանշում: Նաև այդ պատճառով է, որ Հայաստանի անկախացումից մեկ տարի չանցած՝ ԱՄՆ-ն սկսեց օգնության տրամադրումը Հայաստանին:

(3) 1.3. Հայաստանը որպես անցումային երկիր

ԽՍՀՄ փլուզումից հետո նախկին խորհրդային հանրապետությունները կանգնեցին նոր քաղաքական իրողությունների, տնտեսական նոր իրավիճակի առջև: ԽՍՀՄ փլուզումը ոչ միայն աշխարհի քաղաքական քարտեզի փոփոխման և միջազգային նոր հարաբերությունների հաստատման պատճառ էր դարձել, այլև նորանկախ պետություններում առաջ էր բերել քաղաքական նոր իրավիճակ՝ կանգնեցնելով այդ երկրներին անխուսափելի փոփոխությունների առջև: ԽՍՀՄ նախկին հանրապետությունների մեծ մասում տեղի էին ունենում տնտեսական և քաղաքական համակարգերի փոփոխություններ: Անցումը սոցիալիզմից կապիտալիզմին, պետական սեփական

նությունից մասնավոր սեփականության, շուկայական հարաբերությունների և ազատական տնտեսաձևի, ամբողջատիրությունից ժողովրդավարության ուղեկցվում էր սոցիալ-տնտեսական, հասարակական-քաղաքական բարդ գործընթացներով:

Նախկին խորհրդային հանրապետությունների կենտրոնացված տնտեսական կապերը փլուզվում էին, ազգամիջյան բախումների լուծման համար որպես տնտեսական պատժամիջոց էին ընտրվում հաղորդակցության ճանապարհների արգելափակումներն ու պայթեցումները: Նոր տնտեսաձևի կայացումը դժվարանում էր նաև կազմակերպված տնտեսական նենգադուլների (սաբոտաժների) հետևանքով: Բարդ իրողությունների էր բախվում նաև սեփականաշնորհման գործընթացը, որը պատճառ էր դառնում պետական ունեցվածքի կողոպուտի և փոշիացման: Սկսում էին ձևավորվել կապիտալիստական տնտեսակարգի խավերը՝ սեփականատերերի նոր խավը, դրան զուգահեռ՝ նաև ունեգուրկների խավը, իսկ միջին խավի ձևավորումը ձգձգվում էր: Նախկին ԽՍՀՄ հանրապետություններից առաջինը Հայաստանում տեղի ունեցավ հողի սեփականաշնորհումը, որը փրկեց Հայաստանը համատարած սովից: Անցումը շուկայական հարաբերությունների և ազատական տնտեսության Հայաստանում ուղեկցվում էր նաև ժողովրդավարական հաստատությունների ձևավորմամբ: Ընդ որում, տնտեսական և քաղաքական համակարգերի փոփոխությունները, ամբողջատիրական համակարգից անցումը ժողովրդավարական համակարգին Հայաստանում տեղի էին ունենում դարաբաղյան պատերազմին զուգահեռ, ինչն էլ ավելի էր բարդացնում այդ գործընթացները:

Վերլուծելով ամբողջատիրական համակարգերի ժողովրդավարացման գործընթացը՝ ժողովրդավարագիտության տեսաբաններից Ա. Մելվիլը հանգում է այն եզրակացության, որ այն պետությունները, որոնք հաջողությամբ են հաղթահարել անցումային փուլերը, այդ երկրներում հիմնականում փոփոխությունների նախաձեռնությունը եկել է վերևից՝ իշխող վերնախավից, ուր գերակշռել և քաղաքական ազդեցություն են ունեցել բարեփոխումների կողմնակիցները: Ընդ որում, ըստ Մելվիլի, այդպիսի պետություններն առաջնային են հա-

մարել տնտեսության և վարչակարգի ազատականացումը: Այդ ազատականացումն ամբողջությամբ ղեկավարվել է իշխող բարեփոխիչների կողմից, և կարող էին ցանկացած պահի իշխանության դերակատարների կամ կառավարության քաղաքական կուրսի փոփոխման հետևանքով կասեցվել ազատական բարեփոխումները: Ըստ Մելվիլի՝ ազատականացումը դեռ ժողովրդավարացում չէ, այլ պարունակում է ժողովրդավարության որոշ տարրեր՝ քաղաքատարկյալների ազատ արձակում, գրաքննության արգելում, քաղաքացիական ազատությունների ընդլայնում և այլն: Մելվիլն ավելի հեռուն է գնում՝ ընդգծելով, որ այդ գործընթացները կարող են տեղի ունենալ նաև ամբողջատիրական համակարգից ավտորիտար համակարգին անցման ժամանակ և չհասնել ժողովրդավարական համակարգի ձևավորման³²:

Մելվիլի անցումային տեսության մեջ, մեր համոզմամբ, առկա են քաղաքական զարգացումների և ժողովրդավարության տեսության որոշ հակասություններ: Մի կողմից նա պնդում է, որ գործընթացը ձգտում է կատարելագործման, մյուս կողմից անցումային ժողովրդավարացման փուլում գտնվող պետություններում տեղի ունեցող քաղաքական գործընթացները չի դիտարկում որպես ժողովրդավարական հաստատությունների ձևավորման առաջին փուլ: Բացի այդ՝ Մելվիլի այն պնդումը, թե ազատականացումը դեռ ժողովրդավարություն չէ, իհարկե, ճիշտ է, միաժամանակ հարկ է հավելել, որ թեպետ քաղաքական և տնտեսական համակարգերի ազատականացումը դեռ ժողովրդավարություն չէ, սակայն առանց ազատականության անհնար է կայացնել արդյունավետ և կենսունակ ժողովրդավարություն:

Հայաստանի անցումային ժողովրդավարությունն ունեցել է մի շարք առանձնահատկություններ: Դեռևս ԽՍՀՄ կազմում Հայաստանը կատարեց ամբողջատիրական համակարգից ժողովրդավարականի անցման առաջին քայլը՝ 1990 թ. մայիսի 20-ին կայացան

³² St'u Мельвиль А. Ю., Демократические транзиты (теоретико-методологические и прикладные аспекты), Московский общественный научный фонд, изд.центр научных и учебных программ, 1999, стр. 20-23:

ՀԽՍՀ Գերագույն խորհրդի առաջին այլընտրանքային, ազատ և քաղաքական մրցակցություն ապահովող խորհրդարանական ընտրությունները, երբ Հայոց համագգային շարժման կամ նրա աջակցությունը վայելող թեկնածուները ձեռք բերեցին մանդատների շուրջ 40 տոկոսը՝ դրանով իսկ սկիզբ դնելով միակուսակցական համակարգի փլուզմանը:

Հայաստանի անցումային ժողովրդավարության երկրորդ առանձնահատկությունն այն էր, որ Գերագույն խորհրդի նախագահի պաշտոնում երկարատև բանավեճերից հետո ընտրվեց ոչ կոմունիստ թեկնածուն՝ Լևոն Տեր-Պետրոսյանը: Արդեն այդ պաշտոնում 1990 թ. հոկտեմբերի 22-ին ելույթ ունենալով ՀՀ ԳԽ նիստում՝ Տեր-Պետրոսյանն անդրադառնում է Հայաստանի ժողովրդի անվտանգության ապահովման քաղաքական երաշխիքներին, որոնցից առաջինը համարելով դրսից ղեկավարվող կոմունիստական վարչակազմի փոխարինումը ժողովրդավարական իշխանությամբ, նաև տեղական խորհուրդներում՝ նա ընդգծում է. «Երկրորդ երաշխիքն է՝ սոցիալ-տնտեսական զարգացման մեջ առաջ անցնել մեր անմիջական հարևաններից՝ Վրաստանից և Ադրբեջանից, որոնց հետ մենք չենք կարող չափվել ո՛չ մարդկային, ո՛չ էլ բնական հարստություններով: Մեր միակ առավելությունը նրանց նկատմամբ պետք է լինի զարգացման մեջ էապես առաջ անցնելը: Եվ դրա համար արդեն ստեղծված են լուրջ նախադրյալներ, որոնցից ամենակարևորը Հայաստանում ժողովրդավարական վարչախմբի հաստատումն է: Օգտվելով ժողովրդավարության ընձեռած ազատություններից և ինքնուրույն քաղաքականություն վարելու հնարավորությունից՝ Հայաստանը, առաջ անցնելով Ադրբեջանից ու Վրաստանից, ի վիճակի է իրագործելու իր զարգացումն ապահովող արմատական սոցիալ-տնտեսական վերափոխումներ»³³:

Տևական ժամանակահատված Հայաստանը, իրավամբ, համարվում էր Հարավային Կովկասում «ժողովրդավարության կղզյակ»: Անցումային ժողովրդավարության գործընթացների առանձնահատ-

³³ Լևոն Տեր-Պետրոսյան, Ընտրանի, Եր., «Փրինսիփո» հրատ., 2006, էջ 147-148:

կություններին համապատասխան՝ Հայաստանում ձևավորվում էին ժողովրդավարական հաստատությունների հիմքերը՝ ազատ և ընդդիմադիր մամուլը, բազմակարծությունը, բազմակուսակցական համակարգը, հավաքների, երթերի, բողոքների այլ ձևերի իրականացման ապահովումը և այլն:

Հայաստանյան անցումային ժողովրդավարության երրորդ առանձնահատկությունն այն է, որ այն ընթանում էր դարաբաղյան պատերազմին զուգահեռ. հանգամանք, որն էապես մեծացնում էր ռազմական հաստատությունների դերն ու ազդեցությունը քաղաքական գործընթացներում և քաղաքական որոշումների ընդունման վրա: Այդ հանգամանքը մեծ դեր ունեցավ 1995 թ. խորհրդարանական ընտրությունների անցկացման և արդյունքների ձևավորման վրա: Այդ ընտրությունները պետք է դառնային ազատ, օրինական ընտրական համակարգի կայացման ստուգատես: Սակայն ընտրություններից մեկ տարի առաջ՝ 1994 թ. դեկտեմբերին, ՀՀ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի հրամանագրով կասեցվեց ՀՅԴ գործունեությունը: Դադարեցվեց դաշնակցական ՉԼՄ-ների գործունեությունը, ազատագրված դատապարտվեցին ՀՅԴ ղեկավար և շարքային անդամներ:

Խորհրդարանական ընտրաբշավին զուգահեռ Հայաստանում ընթանում էին նաև Սահմանադրության նախագծի քննարկումներ: Առաջարկվող պաշտոնական նախագիծը մերժվում էր քաղաքական ընդդիմության կողմից, որը կողմ էր կառավարման խորհրդարանական համակարգի: Ըստ ընդդիմության պնդման՝ պաշտոնական նախագիծով հաստատվող կիսանախագահական համակարգը կարող է ամրակայել ավտորիտար կառավարման համակարգը Հայաստանում: 1995 թ. հուլիսի 5-ին մեկտեղ կայացած Սահմանադրության նախագծի հանրաքվեն և խորհրդարանի ընտրություններն ուղեկցվեցին բռնություններով, անօրինականություններով, ընտրախախտումներով:

Նույն իրավիճակում են կայացել նաև 1999, 2003, 2007, 2012, 2017 թթ. ԱԺ ընտրությունները, երբ իշխանությունը կամ իշխանական դաշինքները խորհրդարանում մեծամասնություն են կազմել:

1995 թվականից ի վեր բոլոր ընտրությունների արդյունքները վիճահարույց են եղել: 1996, 2003, 2008, 2013 թթ. ՀՀ նախագահի ընտրություններում ընդհանրիւր թեկնածուներից և ոչ մեկը, ըստ ԿԸՀ-ի, չի դարձել ՀՀ նախագահ:

Ազատ ընտրական համակարգը Հայաստանում չկայացավ: Հայաստանը չկարողացավ հաղթահարել անցումային ժողովրդավարության դժվարությունները, երկրում սկսեցին հաստատվել ավտորիտար կառավարման սկզբունքներն ու մեխանիզմները:

Անդրադառնալով նմանօրինակ քաղաքական զարգացումներին՝ ԱՄՆ գիտական ընկերությունների նախկին նախագահ Ստեյլի Ն. Կացը «Ժողովրդավարական քաղաքական կառույցների ձևավորում» հոդվածում ընդգծում է. «Շատ ավելի բարդ խնդիր է այն, թե ինչ ծավալի և բնույթի ժողովրդավարություն կարող է պաշտպանել անցումային շրջանի վարչակարգը: Նվազագույն ելակետը պետք է համարվի քաղաքացիների մեծ մասի ազատ ընտրությունների ապահովումը, սակայն միայն ընտրություններով ժողովրդավարություն չի հաստատվում, ինչը պիտի որ պարզ լինի սոցիալիզմի դարաշրջանի վերլուծություններով»³⁴:

Հայաստանի Հանրապետությունը չկարողացավ ապահովել անցումային ժողովրդավարության շեմը՝ ձևավորել ազատ ընտրական համակարգ: Ազատ ընտրական համակարգի թերարժեք կայացվածությունը պատճառ դարձավ ժողովրդավարական մյուս հաստատությունների թերարժեք կայացման և դրանց ոչ արդյունավետ գործունեության:

³⁴ «Ժողովրդավարությունը բավական է», ՀՀ-ում ԱՄՆ դեսպանատուն, էջ 13:

ԳԼՈՒԽ 4.

ԱՄԵՐԻԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

4.1. Հայաստանին ցուցաբերվող ամերիկյան աջակցության ծրագրերի հիմնական ուղղությունները և փուլերը


1992 թվականից Հայաստանի Հանրապետությանը տրամադրվող ամերիկյան օգնությունը կարելի է բաժանել յոթ տարբեր փուլերի:

Առաջին փուլը 1992-1995 թթ. դարաբաղյան պատերազմի ծանր տարիներն էին, երբ օգնությունը մարդասիրական բնույթ էր կրում: 1992 թ. օգոստոսին ԱՄՆ Կոնգրեսի և Սենատի համատեղ ընդունված «Ազատության աջակցության ակտով» նախատեսվում էր նորանկախ պետություններին օգնության տրամադրում ազատ շուկայի և ժողովրդավարության աջակցման համար: Նույն թվականին ամերիկահայ լոբբիի ջանքերով ընդունվեց «907 բանաձևը», որով արգելվում էր օգնության տրամադրումը Ադրբեջանին Հայաստանի շրջափակման և ռազմական գործողությունների պատճառով: Ադրբեջանը ԱՄՆ կառավարության աջակցությունից զրկված հետխորհրդային միակ պետությունն էր: 2001 թ. սեպտեմբերին Նյու Յորքի ահաբեկչությունից հետո «907 բանաձևն» առկախվեց:

Երկրորդ փուլը տևեց 1996 թվականից մինչև 1998 թվականը, երբ ԱՄՆ-ն աստիճանաբար նվազեցրեց մարդասիրական օգնության ծավալները և սկսեց իրականացնել զարգացման ծրագրեր, այդ թվում՝ նաև տնտեսական և էներգետիկայի ոլորտի բարեփոխումներին նպաստակամիտված ծրագրեր: Այս փուլում էլ սկսվեցին ժողովրդավարական աջակցության ծրագրերը: 1996 թ. ֆինանսական տարվա ընթացքում (ԱՄՆ-ում ֆինանսական տարին սկսվում է հոկտեմբերի 1-ին և վերջանում է սեպտեմբերի 30-ին. 1996 թ. ֆինանսական տարին սկսվում է 1995 թ. հոկտեմբերի 1-ից և ավարտվում է 1996 թ. սեպտեմբերի 30-ին) ԱՄՆ-ն Հայաստանին տրամադրել է 150

միլիոն դոլարի օգնություն: Ընդհանուր գումարի մոտ 75 տոկոսը (112 մլն դոլար) տրամադրվել է որպես մարդասիրական օգնություն, 25 տոկոսը (38 մլն դոլար) զարգացման և տեխնիկական օգնություն:


1996 թվական



Զարգացման և տեխնիկական օգնության հիմնական ծրագրերն էին.

- 4 մլն դոլար՝ ժողովրդավարական ծրագրերի համար. օրենսդրական և դատաիրավական բարեփոխումներ, քաղաքացիական հասարակություն, ՋԼՄ-ներ, քաղաքական կուսակցություններին և ընտրական գործընթացին,
- 6.7 մլն ԱՄՆ դոլար՝ էներգետիկայի բնագավառում վերակառուցման, բարելավման և օրենսդրական դաշտի բարեփոխումների համար,
- 6.5 մլն ԱՄՆ դոլար՝ տնտեսական վերակառուցման համար՝ հիմնական շեշտը դնելով բանկային բարեփոխումների իրականացմանը,

- 2 մլն ԱՄՆ դոլար՝ փոխանակման, կրթական և վերապատրաստման ծրագրերի համար, որոնց շրջանակում ՀՀ քաղաքացիներ կարողացան մասնագիտանալ ԱՄՆ-ում,
- 2 մլն ԱՄՆ դոլար՝ Հայաստանում ամբողջական գյուղատնտեսական մոնիթորինգի իրականացման ծրագրի համար,
- 11.5 մլն ԱՄՆ դոլար մասնավոր սեկտորի և ժողովրդավարական զարգացման համար «Եվրասիա» հիմնադրամի և «Անդրկովկասի ներդրումային հիմնադրամի» միջոցով³⁵:




1997 թ. ֆինանսական տարվա ընթացքում Հայաստանին տրամադրվող օգնությունը կազմել է 150 մլն ԱՄՆ դոլար, ինչպես նախորդ տարի: 1997 թ. օգնության ծրագրերը հիմնականում վերաբերում են ֆինանսական և բանկային բարեփոխումներին, ժողովրդավարությանը, էներգետիկային, մասնավոր սեկտորի զարգացմանը և մարդասիրական օգնությանը: Նախկինում մարդասիրական օգնության վրա դրված շեշտադրումն աստիճանաբար տեղափոխվել է զարգացման և ներդրումային ծրագրերի վրա: 1997 թ. օգնության 65 տոկոսը

³⁵ «Ազգ», 13 փետրվարի, 1997:

տրամադրվել է որպես մարդասիրական օգնություն, իսկ 35 տոկոսը՝ որպես զարգացման օգնություն և աջակցություն մասնավոր սեկտորին:

1997 թվական




1997 Ֆինանսական տարում իրականացվել են օգնության հետևյալ ծրագրերը.

- 11 մլն ԱՄՆ դոլար՝ մասնավոր սեկտորի զարգացման համար «Եվրասիա» հիմնադրամի և Անդրկովկասի ներդրումային հիմնադրամի միջոցով, որոնք վարկեր և դրամաշնորհներ են տրամադրել հայ ձեռներեցներին,
- 7.5 մլն ԱՄՆ դոլար տնտեսական վերակառուցման՝ ֆինանսական, բանկային և անշարժ գույքի բնագավառներում բարեփոխումների համար,
- 12.5 մլն ԱՄՆ դոլար՝ էներգետիկայի բնագավառում բարեփոխումների, այդ թվում՝ 6 մլն ԱՄՆ դոլար Մեծամորի ատոմակայանի անվտանգության համար,
- 5 մլն ԱՄՆ դոլար՝ դատաիրավական, քաղաքացիական կազմակերպություններում, ԶԼՄ-ներում ժողովրդավարական բարեփոխումների իրականացման համար,

- 30 մլն ԱՄՆ դոլար՝ բնական գազ գնելու և Հայաստան ներմուծելու համար,
- 4 մլն ԱՄՆ դոլար՝ 1997-1998 թթ. նավթի ծրագրի համար, ըստ որի՝ նավթ բաշխվում էր դպրոցներին և կարիքավոր ընտանիքներին,
- 3 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա գյուղատնտեսական մարքեթինգի օգնության ծրագիրը շարունակելու համար,
- 2 մլն ԱՄՆ դոլար՝ հայ-ամերիկյան փոխանակման, կրթական և վերապատրաստման ծրագրերի համար,
- 11 մլն ԱՄՆ դոլար՝ սննդամթերքի համար,
- 25 մլն ԱՄՆ դոլար մարդասիրական օգնություն՝ հիմնականում դեղորայքի, բժշկական սարքավորումների և սննդամթերքի համար, որոնք որպես նվիրատվություն տրամադրվել են մասնավոր կամավորական կազմակերպությունների և պաշտպանության նախարարության կողմից³⁶:

1997 թվական



³⁶ Տե՛ս «Միացյալ Նահանգների օգնությունը Հայաստանին», Եր., ՀՀ-ում ԱՄՆ դեսպանատուն, 2001, էջ 18:

1998 թ. առաջին անգամ զարգացման ծրագրերի համար հատկացված գումարը գերազանցեց մարդասիրական օգնության համար նախատեսված գումարը:

Երրորդ փուլը սկսվեց 1999 թ. և ավարտվեց 2001 թ.: Հիմնական ուղղությունը մասնավոր սեկտորի զարգացման, ներդրումների և աշխատատեղերի ստեղծման ծրագրերն էին:

Չորրորդ փուլը սկսվեց 2001 թ., երբ ԱՄՆ-ն Հայաստանում սկսեցին իրականացնել իրավական սոցիալականացման, ժողովրդավարության բազմակողմ աջակցության ծրագրեր: 2001 Ֆինանսական տարում ԱՄՆ կառավարության բոլոր գերատեսչությունների կողմից Հայաստանին տրամադրվելիք օգնության ընդհանուր ծավալը կազմել է 110 մլն ԱՄՆ դոլար: Ընդհանուր գումարը ներառում է նաև 90 մլն դոլարը, որը ԱՄՆ Կոնգրեսը հատկացրել է Հայաստանին 2001 թ. «Արտասահմանյան օգնություն սփյուռքի շրջանակում»³⁷:

1991-2001 թթ. ընթացքում Հայաստանին տրամադրված ԱՄՆ աջակցությունը



**1991-2001 թթ. ընթացքում
ԱՄՆ-ն Հայաստանին է
տրամադրել 1,4 մլրդ դոլարի
մարդասիրական և
տեխնիկական աջակցություն**

³⁷ “Partners for the future. US Assistance in Armenia”, US Embassy in Armenia, 2001.

ԱՄՆ ՄԶԳ-ի տրամադրած ֆինանսավորումը՝ ընդամենը և ըստ ծրագրերի³⁸

(մլն դոլար, կլորացման պատճառով տոկոսների ընդի. գումարը կարող է 100 չլինել)

Ֆինանսական տարի

1993	1994	1995	1996	1997	1998	1999	2000	2001	2002
37,91	78,73	52,28	69,72	79,49	61,69	50,49	55,07	76,37	61,30,

որից ժողովրդավարության ծրագրերին.

0	0,98	0,45	1,39	5,38	6,66	4,92	8,70	10,02	8,86
0%	1%	1%	2%	7%	11%	10%	16%	13%	14%:

Ակնհայտ է, որ ԱՄՆ օգնության ծրագրերում ժողովրդավարության աջակցության ծրագրերն աստիճանական աճ են արձանագրել՝ 1994 թ. 1 տոկոսից 2002 թ. հասնելով 14 տոկոսի:

Օգնության ծրագրերի շրջանակում կոռուպցիայի դեմ պայքարը դիտարկվում է որպես կարևորագույն խնդիր: ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության ծրագրերը ներառում են կոռուպցիայի ռիսկերի կրճատման, քաղաքական և տնտեսական մրցակցությանը նպաստելու, ինստիտուցիոնալ հաշվետվության համար մեխանիզմներ մշակելու, անկախ մամուլը զարգացնելու և քաղաքացիական հասարակություն ամրապնդելու խնդիրները:

2001 թ. ԱՄՆ-ն Հայաստանին հատկացրել է 11 մլն դոլար՝ ժողովրդավարության և կառավարման ծրագրերին, որոնք կարևորում են որոշումներ ընդունելու գործընթացին քաղաքացիների մասնակցության աստիճանի, խորհրդարանի մասնագիտական հմտությունների բարձրացումը, անկողմնակալ, թափանցիկ և անկախ դատական համակարգի խթանումը: 13,7 միլիոն դոլար հատկացվել է հայ-ամերիկյան փոխանակման ծրագրերին: 2001 թվականից Հայաստանին ամերիկյան աջակցության գործընթացը ներառել է նաև պաշտ-

³⁸ Տե՛ս <https://www.usaid.gov/armenia>, դիտվել է 2019 թ. փետրվարին:

պանության և անվտանգության համակարգի բարեփոխումները, աղքատության, կոռուպցիայի հաղթահարման, թրաֆիքինգի կանխարգելման ծրագրեր³⁹: 2003 թ. ավարտվեց չորրորդ փուլը, և սկսվեց հինգերորդ փուլը:

Հինգերորդ փուլի ընթացքում, որը տևեց 2003-2006 թթ., Հայաստանի համապետական երեք ընտրությունների ընթացքում ԱՄՆ-ի կողմից մեր երկրին տրամադրվող օգնության մեջ կարևոր տեղ են գրավում ժողովրդավարության աջակցման ծրագրերը: 2005 թ. մարտին Վաշինգտոնում ՀՀ Կառավարության և ԱՄՆ պետքարտուղարության միջև ստորագրվեց «Հազարամյակի մարտահրավերներ» Միացյալ Նահանգների օգնության հնգամյա ծրագիրը, որի գործունեությունը, սակայն, հետագայում ժամանակավոր սառեցվեց Հայաստանի կողմից ժողովրդավարության չափանիշներին չհամապատասխանելու պատճառով:

2005 Ֆինանսական տարում ԱՄՆ կառավարության հատկացած 84,4 մլն ԱՄՆ դոլարը բաշխվել է այսպես.

- ժողովրդավարական ծրագրեր – 11.4 մլն,
- տնտեսական և հասարակական բարեփոխումներ – 43,5 մլն,
- անվտանգություն և օրենսդրական զարգացում – 19,1 մլն,
- մարդասիրական օգնություն – 1,5 մլն,
- այլ – 8,9 մլն⁴⁰:

Ժողովրդավարության և կառավարման ծրագրերին ուղղված հատկացումները կազմում էին 11.4 մլն ԱՄՆ դոլար, որը ներառում էր քաղաքացիական հասարակության, անկախ մամուլի կայացման, օրենքի իշխանության մեծացման, պետական և ՏԻՄ համակարգերի բարելավման, իրավունքների մասին քաղաքացիների ուսուցման ծրագրերի ֆինանսավորումը, որոնց նպատակն էր կրթել «Հայաստանի հաջորդ սերնդի առաջնորդներին և նրանց տալ անմիջական

³⁹ Տե՛ս «Partners for the future. US Assistance in Armenia», US Embassy in Armenia, 2002- 2003:

⁴⁰ «Partners for the future. US Assistance in Armenia», US Embassy in Armenia, 2004-2005.

փորձառություն շուկայական հիմքի վրա կառուցված ժողովրդավարության ամենօրյա գործունեության մեջ»⁴¹:

2005 թ. ԱՄՆ կառավարությունը 186 ՀՀ քաղաքացի է ուղարկել ԱՄՆ ակադեմիական և մասնագիտական փոխանակման ծրագրերով: 1993-2000 թվականներից ի վեր ԱՄՆ-ն ֆինանսավորել է 4500 ՀՀ քաղաքացիների ուղևորությունը կառավարման, ժողովրդավարության ամրապնդման, ՀԿ-ների զարգացման ծրագրերով:

2005 թ. 18 մլն դոլար է հատկացվել մասնավոր հատվածի զարգացմանը՝ օրենսդրական և ինստիտուցիոնալ դաշտի ստեղծման նպատակով, ցուցաբերվել է ուղղակի օգնություն տնտեսավարողներին: 18 միլիոնից 6 մլն դոլարը տրվել է սեփականաշնորհման, ֆինանսահարկային և մաքսային համակարգերի, բանկերի հսկողության և կապիտալի շուկաների զարգացմանը⁴²:

11,5 մլն դոլար հատկացվել է էներգետիկայի ոլորտի բարեփոխումների ու էներգետիկ անվտանգության ամրապնդմանը, որից 7,5 միլիոնը՝ կենսունակ և էկոլոգիապես ավելի մաքուր էներգետիկ համակարգի զարգացմանը, էլեկտրաէներգիայի պետական բաշխիչ ընկերությունների սեփականաշնորհմանը, գնագոյացման կայացմանը, էներգիայի նոր աղբյուրների որոնմանը և տարածաշրջանային էներգետիկ համագործակցությանը:

2006 թ. հունիսի 9-ին ԱՄՆ Ներկայացուցիչների պալատի լիագումար նիստում ընդունվել է որոշում 2006 թ. Արտաքին գործությունների օրենքի շրջանակում Հայաստանին հատկացնել 62 մլն դոլար, իսկ Լեռնային Ղարաբաղին՝ 5 մլն դոլար:

Վեցերորդ փուլը սկսեց 2006 թ. և տևեց մինչև 2009 թվականը:

Յոթերորդ փուլը տևեց 2009-2016 թվականները. այն առանձնաժամանակ էր ԱՄՆ օգնության աստիճանական նվազմամբ:

2007 թ. ԱՄՆ ֆինանսական օգնությունը Հայաստանին կազմել է 58,5 մլն ԱՄՆ դոլար, իսկ Լեռնային Ղարաբաղին հատկացվել է 6 մլն դոլար:

⁴¹ “Partners for the future. US Assistance in Armenia, US Embassy in Armenia”, 2005-2006.

⁴² “Partners for the future. US Assistance in Armenia, US Embassy in Armenia”, 2005-2006.

2008 թ. Հայաստանին հատկացվել է 50.5 մլն, Լեռնային Ղարաբաղին՝ 5 մլն ԱՄՆ դոլար:

2009 թ. ֆինանսական տարվա համար ԱՄՆ Կոնգրեսը Հայաստանին հատկացրեց 48 մլն ԱՄՆ դոլար, իսկ ռազմական համագործակցության համար՝ 3 մլն 450 հազ., Լեռնային Ղարաբաղին՝ 8 մլն ԱՄՆ դոլար:

2010 թ. ֆինանսական տարվա համար օտարերկրյա պետություններին տրամադրվող օգնության շրջանակում ԱՄՆ-ն ՀՀ-ին հատկացրել է 41 մլն, 3 մլն՝ որպես ռազմական օգնություն, իսկ Լեռնային Ղարաբաղին՝ 2 մլն ԱՄՆ դոլար:

2011 թ. ՀՀ-ին հատկացված օժանդակության ծավալը կազմել է 44,7 մլն ԱՄՆ դոլար:

2012 ֆինանսական տարվա համար կազմել է 44.2 մլն ԱՄՆ դոլար:

2013 ֆինանսական տարվա համար կազմել է 36.6 մլն ԱՄՆ դոլար:

2014 ֆինանսական տարվա համար կազմել է 24 մլն 719 հազ. ԱՄՆ դոլար:

2015 ֆինանսական տարվա համար կազմել է 20 մլն 700 հազ. ԱՄՆ դոլար:

2016 ֆինանսական տարվա համար ՀՀ-ին ԱՄՆ օգնությունը կազմել է 18 մլն 360 հազ. դոլար⁴³:

2017 ֆինանսական տարվա համար ՀՀ-ին ԱՄՆ օգնությունը կազմել է 24.1 մլն ԱՄՆ դոլար:

2018 ֆինանսական տարվա համար Հայաստանին արտաքին աջակցությունը կազմել է մոտ 21 մլն դոլար:

2019 ֆինանսական տարվա համար ԱՄՆ-ի կողմից Հայաստանին հատկացվող աջակցության ծավալներն աճել են՝ կազմելով 60 մլն ԱՄՆ դոլար:

ԱՄՆ պետքարտուղարությունը 5.9 մլն ԱՄՆ դոլար աջակցություն է ցուցաբերել Հայաստանին նաև COVID-19-ի համավարակին


⁴³ Տե՛ս ՀՀ արտգործնախարարության պաշտոնական կայքէջ, ԱԳՆ տարեկան հաշվետվություն, <http://mfa.am/hy/annualreport/>, դիտվել է 24.03.2017:

հակազդելու նպատակով, այդ թվում՝ ԱՀԿ-ի, ՅՈՒՆԻՍԵՖ-ի, «Կարմիր խաչի» և «Կարմիր մահիկի» ընկերությունների միջազգային ֆեդերացիայի միջոցով:

2020թ. ԱՄՆ համակարգված աջակցությունը Հայաստանին կազմել է 31.5 մլն դոլար: ԱՄՆ Foreign Assistance-ի խողովակով արտաքին օգնությունը Հայաստանին կազմել է 6.75 մլն դոլար:

2021 թ. ԱՄՆ աջակցությունը Հայաստանին կազմել է 22780 մլն ԱՄՆ դոլար:

2022 ֆինանսական տարվա համար ԱՄՆ-ն Հայաստանին հատկացրել է 45 մլն, Արցախին՝ 2 միլիոն ԱՄՆ դոլարի օգնություն:



Միացյալ Նահանգների օգնությունը Հայաստանին տրամադրվում է հետևյալ գործակալությունների միջոցով՝ ԱՄՆ պետքարտուղարություն, Միացյալ Նահանգների միջազգային զարգացման գործակալություն (USAID), Միացյալ Նահանգների գյուղատնտեսության նախարարություն (USDA), Խաղաղության կորպուս, ֆինանսների նախարարություն, Էներգետիկայի և պաշտպանության նախարարություններ:

2005-2014 թթ. ընթացքում ԱՄՆ-ն Հայաստանին է տրամադրել 413 մլն ԱՄՆ դոլարի աջակցություն: Հայաստանը բնակչության մեկ շնչի հաշվով աշխարհում ԱՄՆ օգնության մասով 2-րդ տեղում է Իսրայելից հետո:

1992-2001 թվականներից ի վեր երկու պետությունների միջև ստորագրվել են ավելի քան 20 միջկառավարական և միջգերատեսչական համաձայնագրեր առևտրատնտեսական, գիտատեխնիկական, մշակույթի, անվտանգության և այլ բնագավառներում: 1992 թ. Հայաստանի և ԱՄՆ-ի միջև կնքվել են տնտեսական ոլորտին վերաբերող երեք՝ «Առևտրային հարաբերությունների մասին» (Agreement on Trade Relations) և «Ներդրումների խրախուսման մասին» (Investment Incentive Agreement) համաձայնագրերը, «Ներդրումների փոխադարձ քաջալերման և պաշտպանության մասին» (Reciprocal Encouragement and Protection of Investment) պայմանագիրը (իրավաբանական այս փաթեթն ընդունված է անվանել «Ներդրումների երկկողմ պայմանագիր», Bilateral Investment Treaty, BIT), որոնք ուժի մեջ են մտել 1996 թ.:

1994 թվականից հետո Հայաստանում սկսվեց իշխանությունների նահանջը որդեգրած արժեքներից: Տարբեր մակարդակի ընտրական գործընթացների խեղաթյուրումների, ընտրությունների միջոցով իշխանություններ ձևավորելու անհնարինության, մամուլի և խոսքի ազատության սահմանափակումների հետևանքով Հայաստանը նահանջեց իր դիրքերից:

Մենք թեպետ չամդրադարձանք ԱՄՆ հայկական կազմակերպությունների դերակատարմանը, նշանակությանը և ազդեցությանը, սակայն հարկ է նշել, որ դրանք՝ Ամերիկայի հայկական համագումարը, Վաշինգտոնի Հայ դատի գրասենյակը, Հայկական ազգային ինստիտուտը, լուրջ դերակատարում են ստանձնել հայ-ամերիկյան հարաբերությունների արդյունավետության զարգացման գործում:

4.2. «Հազարամյակի մարտահրավերներ» ծրագիրը. տրամադրման և սառեցման պատճառները

2006 թ. մարտի 26-ին Վաշինգտոնում ԱՄՆ «Հազարամյակի մարտահրավերներ» կորպորացիան Հայաստանի հետ ստորագրեց 235.65 մլն ԱՄՆ դոլարի արժողությամբ հնգամյա համաձայնագիր, որը ստորագրեցին կորպորացիայի գործադիր տնօրեն Ջոն Դանիլովիչը և ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախկին նախարար Վարդան Խաչատրյանը: Արարողությանը ներկա էին կորպորացիայի նախագահ, ԱՄՆ նախկին պետքարտուղար Քոնդոլիզա Ռայսը և ՀՀ նախկին արտգործնախարար Վ. Օսկանյանը: Ծրագիրը նպատակամիտված էր նպաստելու ՀՀ 35 տոկոս կազմող գյուղական բնակչության աղքատության հաղթահարմանը և գյուղական ճանապարհների շինարարությանը: Իր ելույթում Դանիլովիչն ասաց. «Հայաստանն արժեքավոր գործընկեր է մեզ համար: Հուսով եմք, որ մեր ջանքերը կնպաստեն բոլոր հայերի համար ավելի լավ կյանքի ստեղծմանը»⁴⁴: Նա մաս նշեց, որ ֆինանսական հատկացումների տրամադրումը պայմանավորված է տնտեսական ազատության սկզբունքների պաշտպանությամբ. վերահսկվելու է ՀՀ քաղաքականության արդյունավետությունը: Ըստ համաձայնագրի՝ «Հայաստանը բավարարում է 2005 թ. դրամաշնորհի ստանալու «Հազարամյակների մարտահրավերներ» ծրագրի պայմաններին» և «նշանակալից առաջադիմություն է կատարել քաղաքական և տնտեսական բարեփոխումների գործում»⁴⁵:

2008 թ. փետրվարին կայացած նախագահական ընտրություններից և մարտի 1-ի ողբերգական իրողություններից հետո «Հազարամյակների մարտահրավերներ» ծրագրի գործունեությունը սառեցվեց ՀՀ ժողովրդավարության չափանիշներին չհամապատասխանելու պատճառով: Հայաստանի հանդեպ ԱՄՆ քաղաքականությունը նկատելի փոփոխություններ կրեց: Վաշինգտոնի դիրքորոշման

⁴⁴ Millennium Challenge Corporation (MCC), <https://www.mcc.gov/where-we-work/country/armenia>, <http://www.mcc.org>, դիտվել է 15.06.2017:

⁴⁵ Millennium Challenge Corporation (MCC), դիտվել է 15.06.2017:

կարծրացումը երևում է Դանիլովիչի՝ 2008 թ. մարտի 11-ին ՀՀ նախկին նախագահ Ռ. Քոչարյանին հասցեագրած նամակից, որին կից ի մի են բերված «արդար կառավարման» այն 4 ցուցիչները, որոնցով «Հայաստանի քաղաքական ղեկավարումն անկում է ապրում»⁴⁶:

ՀՀ քաղաքական ղեկավարման, արդար կառավարման անկման առաջին ոլորտը քաղաքական իրավունքներն են, որոնց առումով Հայաստանի ցուցիչն անկում է ապրել: Դանիլովիչը հիշատակում է «Ֆրիդլըն Հաուզի» գնահատականը. «2005 թ. Հայաստանին տրված միավորների անկումը քաղաքական իրավունքների մասով պայմանավորված է 2004 թ. «ապրիլին բողոքի խաղաղ ցույցերի դեմ իշխանության բռն արձագանքով, քաղաքական հալածանքներով, իշխանությունների անտարբեր ու ոչ ժողովրդավարական կառավարմամբ»⁴⁷: Դանիլովիչը նշում է, որ «քաղաքական իրավունքների մասով ՀՀ միավորների վրա իր բացասական ազդեցությունը կունենա նաև 2005 թ. նոյեմբերի սահմանադրական հանրաքվեն», որից հետո դիտորդները մտահոգություններ հայտնեցին կեղծիքների, ընտրական գործընթացների ոչ պատշաճ վարման ու ընդդիմադիր կուսակցության գործիչների նկատմամբ վատ վերաբերմունքի վերաբերյալ: Չնայած իշխանությունների հավաստիացումներին, որ ընտրախախտումները հետաքննվելու են, 2006 թ. մարտին հետաքննություն սկսելու խորհրդարանական նախաձեռնությունը կասեցվեց»⁴⁸:

Երկրորդ ցուցիչը, որով Երևանի քաղաքականությունն անկում է ապրել, քաղաքացիական ազատություններն են (ըստ «Ֆրիդլըն Հաուզի»): «ՀՀ միավորը քաղաքացիական ազատությունների մասով շարունակաբար եղել է 4 (7-բալանոց սանդղակով, որի ամենալավ ցուցանիշը 1-ն է, իսկ ամենավատը՝ 7-ը): Հայաստանի գործունեությունն այս ոլորտում սկսել է վատանալ ու կարող է 4-ից դառնալ 5 այն ժամանակ, երբ ՀՄԿ-ն 2008 թ. ֆինանսական տարվա ընտրությունն է կատարում: Հիմնական մտահոգությունները վերաբերում են ՀՀ գործող օրենսդրության խախտումներին, ուստի այս ցուցանիշի

⁴⁶ «Ամբիոն», 30 հունիսի, 2006:

⁴⁷ Նույն տեղում:

⁴⁸ Նույն տեղում:

բարելավումը պահանջում է գործող օրենքների առավել անաչառ կիրառում և հետաքննության ու քրեական հետապնդման իրականացում այնպիսի խախտումների նկատմամբ, ինչպիսիք են ոստիկանական բռնությունները, կամայական կամ կեղծ ձերբակալումները, մամուլի ազատության, հանրահավաքների ազատության ու դատական անկախության սահմանափակումները»⁴⁹:

Երևանն անբավարար է ստացել ձայնի իրավունք և հաշվետվողականություն ոլորտի համար: Միավորը հաշվարկվում է՝ հիմնվելով այն հաղորդումների վրա, որոնք վերաբերում են կառավարության գործողություններին՝ ուղղված անկախ ՁԼՄ-ների հեռարձակման իրավունքների խաթարմանը, լրագրողների նկատմամբ թշնամանքին ու բռնություններին, հանրահավաքներում ոստիկանական ուժային գործողություններին, ինքնաարտահայտման ու հանրահավաքների ազատության սահմանափակումներին⁵⁰:

Արդար կառավարման անկման հաջորդ ցուցիչը վերաբերում է «օրենքի գերակայության» ոլորտին. «Այդ համաթվի վրա անդրադարձել են «Ֆրիդոմ Հաուզի» կողմից 2005 թ. տրված դատական անկախության համաթվի անկումն ու 2005 թ. «Մարդու իրավունքների մասին» ԱՄՆ պետքարտուղարության ամենամյա գեկույցի հաղորդումները ոստիկանական բռնությունների վերաբերյալ: Դանիլովիչը նշում է վերոհիշյալ 4 ոլորտներն արմատապես բարեփոխելու պահանջները: Ներկայացվում են «օրենքի գերակայություն» ապահովելու պահանջները սեփականություն իրավունքի հանդեպ՝ հետաքննել և քրեական հետապնդում իրականացնել սեփականության իրավունքների խախտումների, ընդլիմսողի գործիչների նկատմամբ գույքային իրավունքների ապօրինի գրկման քաղաքական ճնշումների դեպքերով»⁵¹:

Այնուհետև՝ նամակի շարունակության մեջ, ՀՄԿ գործադիր տնօրենը ձևակերպում է վերոհիշյալ 4 ոլորտները արմատապես բարեփոխելու պահանջները: Այսպես՝ մամուլի ազատության ապահով-

⁴⁹ «Ամբիոն», 30 հունիսի, 2006:

⁵⁰ Նույն տեղում:

⁵¹ Նույն տեղում:

ման և ամրապնդման համար Վաշինգտոնը պահանջում է. «Հատուկ նախագգուշական միջոցներ ձեռնարկել, որ քաղաքական գործունեության առաջիկա թեժացման պայմաններում ռադիոյի, հեռուստատեսության ու տպագիր ՁԼՄ-ների անկախությունը բարելավվի ու հարգվի», «ամբողջությամբ հետաքննել ՁԼՄ-ների նկատմամբ ոտնձգությունների, կալանավորման, ահաբեկման, սպառնալիքների ներկայացման կամ հարձակումների վերաբերյալ մեղադրանքները և դրանց համապատասխան դատական ընթացք տալ»⁵²:

Նամակում անդրադարձ կա քաղաքական և քաղաքացիական իրավունքների ոտնահարման դեպքերին և պահանջ՝ «հետևել օրենքի 2004 թ. փոփոխություններին ու թույլ տալ քաղաքացիական ու քաղաքական կուսակցությունների օրինական հավաքները, հետաքննել օրինական հանրահավաքները կանխելու կամ ցրելու նպատակով ոստիկանների կողմից ահաբեկում կիրառելու դեպքերը, անհրաժեշտության դեպքում իրականացնել քրեական հետապնդում»⁵³:

Անդրադառնալով ընտրություններին՝ Վաշինգտոնը պահանջում է. «հրապարակային քայլեր ձեռնարկել նախորդ ընտրությունների ժամանակ տեղ գտած խախտումների հետաքննման ուղղությամբ.

- հետամուտ լինել բազմակուսակցական, հավասարակշռված ընտրական հանձնաժողովների ձևավորմանը և մշակել բողոքարկման հստակ մեխանիզմներ,
- ապահովել, որ քվեատուփի անձեռնմխելիությունը հարգվի ընտրատեղամասային պաշտոնյաների կողմից,
- հավատարմագրել միջազգային ու տեղական դիտորդներին»⁵⁴:

Դանիլովիչն անդրադառնում է նաև ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեությանը. Վաշինգտոնը պահանջում է «խուսափել օմբուդսմենի հետաքննություններին, պարտականություններին կամ զեկույցներին խոչընդոտելուց կամ ընդհատելուց», «պաշտպանել օմբուդսմենի իրավունքները՝ բողոքների հետաքննման ժամանակ

⁵² «Ամբիոն», 30 հունիսի, 2006:

⁵³ Նույն տեղում:

⁵⁴ Նույն տեղում:

օգտվելու կառավարության ունեցած տեղեկատվությունից», «հարգել բողոքներ ներկայացնողների կամ օմբուդսմենի հետաքննություննե-րին աջակցող անձանց անամոնությունը»⁵⁵:

Ժողովրդավարական ազատություններն ապահովելու՝ ԱՄՆ պահանջները Հայաստանում չիրականացվեցին, ինչի հետևանքով 2009 թ. «Հազարամյակի մարտահրավերներ» կորպորացիան որոշում ընդունեց չարունակել ծրագրի ֆինանսավորումը՝ մինչև օրս հատկացնելով նախատեսված գումարի միայն 27 տոկոսը, որը կազմում է 63,096,452.00 ԱՄՆ դոլար:

«Կորպորացիան ավստոսանք է հայտնում, որ չի կարողանալու շարունակել Հայաստանում ճանապարհաշինարարական աշխատանքների ֆինանսավորումը: Այս որոշման պատասխանատվու-թյունը կրում է Հայաստանի կառավարությունը, որի գործողություն-ները չեն համապատասխանել ծրագրի շարունակական մասնակցու-թյան համար անհրաժեշտ ցուցիչներին» լինելու մեր գործընկերները ապագայում զարգացում ապահովելու մեջ»⁵⁶, – ընդգծել է «Հազարա-մյակի մարտահրավեր» կորպորացիայի Տնօրենների խորհրդի ան-դամ Ռոդնի Բենտոլ:

2009 թվականից հետո, ըստ «Հազարամյակի մարտահրավեր-ներ» կորպորացիայի ցուցանիշների, ժողովրդավարության և մարդու իրավունքների ազատության Հայաստանի ցուցանիշները բարելավ-վեցին, և մեր երկիրն իրավունք ստացավ դիմելու կորպորացիային՝ ծրագրերի դրամաշնորհային ֆինանսավորման համար: 2012-2017 թթ. ընթացքում Հայաստանը մի քանի անգամ դիմել է «Հազարամյա-կի մարտահրավերներ» կորպորացիային, սակայն Հայաստանի բո-լոր հայտերը դարձյալ մերժվել են: Հայաստանի համար ռիսկային էր շարունակում մնալ կոռուպցիայի ընկալման համաթիվը, թեպետ կո-ռուպցիան մերժումների միակ պատճառը չէր: Այդ տարիների ըն-թացքում Հայաստանի հայտերի մերժման պատճառները տարբեր են եղել: 2018 թվականի համար Հայաստանը դարձյալ դիմել էր կորպո-րացիային: 2017 թվականի համար Հայաստանը 20-ից 14 ցուցանի-

⁵⁵ «Ամբիոն», 30 հունիսի, 2006:

⁵⁶ <https://www.azatutyun.am/a/1751832.html>, դիտվել է 25.06.2016:

շով դրական է գնահատվել, որից մեկը «քաղաքացիական ազատություններ» ցուցանիշն էր, սակայն մնացյալ 6 ցուցանիշները, որոնց թվում՝ և կոռուպցիայի ցուցանիշը, բացասական էին գնահատվել: Այդ վեց ցուցանիշների մասով Հայաստանը չի կարողացել ապահովել պահանջվող նվազագույն շեմը. բացասական գնահատված 6 ցուցանիշների թվում էր նաև կոռուպցիայի ցուցանիշը:

2017 թ. դեկտեմբերին 2-ին կորպորացիան որոշում է կայացրել չբավարարել Հայաստանի հայտը 2018 թ. ծրագրային ֆինանսավորման համար:

1994 թվականից հետո Հայաստանում սկսվեց իշխանությունների նահանջը որդեգրած արժեքներից: Տարբեր մակարդակի ընտրական գործընթացների խեղաթյուրումների, ընտրությունների միջոցով իշխանություններ ձևավորելու անհնարինության, մամուլի և խոսքի ազատության, քաղաքական և քաղաքացիական այլ ազատությունների սահմանափակումների հետևանքով Հայաստանը նահանջեց իր դիրքերից:

Հայաստանը չբռնեց ժողովրդավարության քննությունը:

ԳԼՈՒԽ 5.
ԱՄԵՐԻԿԱՆ ԳՈՐԾՈՂԸ ՎՐԱՍՏԱՆԻ
ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱԶԱՅՑՄԱՆ
ԳՈՐԾԸՆԹԱՅՆԵՐՈՒՄ

5.1. Ներքաղաքական գործընթացները հետխորհրդային
Վրաստանում

(5.1.1. Վրաստանն անցումային փուլում)

Հետխորհրդային Վրաստանի ներքաղաքական գործընթացները բարդ բնույթ էին կրում: Անկախացումից հետո Վրաստանում պայ- քարն իշխանության համար զուգակցվում էր ինքնավար միավորում- ների ինքնորոշման կամ անջատողական ձգտումներով: Այս ամենն ավելի էր բարդացնում երկրի ներքաղաքական կյանքը:

Մինչ այդ՝ 1990 թ. հոկտեմբերի 28-ին, Վրաստանում անցկացվե- ցին առաջին բազմակուսակցական խորհրդարանական ընտրու- քյունները, ուր հաղթանակ տարավ «Ազատ Վրաստան-Կլոր սեղան» ազգային-հայրենասիրական կուսակցությունը՝ Զվիադ Գամսա- խուրդիայի գլխավորությամբ, որն էլ դարձավ Վրաստանի Գերա- գույն խորհրդի նախագահ: 1991 թ. ապրիլի 9-ին ԳԽ-ն ընդունեց «Վրաստանի անկախ պետականության վերականգման մասին» փաստաթուղթը: 1991 թ. մայիսի 26-ին կայացած նախագահի ընտ- րություններում հաղթեց Զ. Գամսախուրդիան:

Հետխորհրդային շրջանի Վրաստանի քաղաքական զարգա- ցումների առաջին փուլում ռազմական խռովություններն ու հեղա- շրջումները երկրի ներքաղաքական զարգացումների անբաժան մասն են կազմել: Այսպես՝ 1991 թ. դեկտեմբերի 21-ին Ազգային գվարդիայի մի մասը՝ Թենգիզ Կիտովանիի գլխավորությամբ, խռո- վություն բարձրացրեց, որին միացավ Ջաբա Իոսելիանիի զինված խմբավորումը՝ «Մխեդրոնին»։ 1992 թ. հունվարի 6-ին Գամսախուր- դիան ստիպված եղավ լքել Վրաստանը: Հետագա քաղաքական

զարգացումներն ընթացան հետևյալ սցենարով. 1992 թ. մարտին Վրաստանի Պետական խորհրդի նախագահ ընտրվեց ԽՍՀՄ նախկին արտգործնախարար Էդվարդ Շևարդնաձեն: 1992 թ. օգոստոսի 14-ին ազգայինգվարդիականները՝ Կիտովանիի գլխավորությամբ, մտան ապստամբած Աբխազիայի տարածք. սկսվեց վրաց-աբխազական բախումը: 1993 թ. սեպտեմբերի 28-ին կնքվեց հաշտության պայմանագիր, դադարեցվեցին ռազմական գործողությունները, սակայն աբխազական կողմն իր վերահսկողության տակ վերցրեց Աբխազիայի տարածքը, և սկսվեց էթնիկ վրացիների տարահանումն Աբխազիայից:

1993 թ. սեպտեմբերին Չվիադ Գամսախուրդիան վերադարձավ Վրաստան՝ գլխավորելով Արևմտյան Վրաստանի զինված խմբավորումները: Իր իշխանությունը պահպանելու համար Շևարդնաձեն դիմեց Ռուսաստանին և Վրաստանի՝ ԱՊՀ-ին անդամակցելու դիմաց աջակցություն ստացավ:

Անցումային փուլը Վրաստանի համար բավականին բարդ էր: Մի կողմից՝ սոցիալական ծանր իրավիճակը, ազգաբնակչության ցածր կենսամակարդակը, մյուս կողմից՝ մարդու իրավունքների զանգվածային և պարբերական խախտումները, կոռուպցիայի բարձր մակարդակը լի էին հասարակական-քաղաքական անկանխատեսելի զարգացումներով:

Երկրում իրավիճակը բարդացավ 2003 թ. նոյեմբերի 2-ի խորհրդարանի ընտրությունների արդյունքների հրապարակումից հետո, երբ քաղաքական ընդդիմությունը՝ Սիխայել Սահակաշվիլու, Ջուրաբ Փվանիայի և Նինո Բուրջանաձեի գլխավորությամբ, հրաժարվեց ընդունել ընտրությունների արդյունքները՝ վկայակոչելով դրանց կեղծումները: Երիտասարդ ցուցարանների «Կմարա» (թարգմ.՝ «Հերիք է») շարժման մասնակիցները Թբիլիսիի Ռուսթավելու հրապարակում բողոքի հանրահավաք կազմակերպեցին: Նոյեմբերի 21-23-ը Թբիլիսիի հրապարակներն ու փողոցները չէին լքում հարյուր հազարավոր քաղաքացիներ՝ պահանջելով ընտրությունների արդյունքների վերահաշվարկ կամ նոր ընտրություններ: Հանրահավաք-

ներն ընթանում էին «Վրաստանն առանց Շևարդնաձեի» կարգախոսի ներքո:

Երկրում քաղաքական ճգնաժամ առաջացավ: Հանրահավաքները և բողոքի այլ միջոցառումներն ուղիղ եթերով հեռարձակվում էին ամերիկյան CNN հեռուստաընկերությամբ, հանգամանք, որը Շևարդնաձեին զրկեց բռնությունների և ռազմական ուժ կիրառելու հնարավորությունից:

Նոյեմբերի 22-ին, երբ խորհրդարանը նոր կազմով հավաքվեց գումարելու առաջին նիստը, ցուցարարները՝ Սահակաշվիլու գլխավորությամբ, գրոհեցին խորհրդարանի շենքը և դահլիճ ներխուժեցին Շևարդնաձեի ելույթի պահին: Սահակաշվիլու ձեռքին կարմիր վարդերի փունջ էր՝ որպես խորհրդանիշ թավշյա հեղափոխության: Հատուկ ջոկատայինները նահանջեցին առանց կրակոցի, իսկ թիկնապահները Շևարդնաձեին արագ հեռացրին նախագահի քաղաքամերձ մատավայր, որտեղից նա հայտարարեց պետական հեղաշրջման փորձի մասին, մտցրեց արտակարգ դրություն, սակայն նոյեմբերի 23-ին ստիպված եղավ հրաժարական ներկայացնել երկրի նախագահի պաշտոնից: Նոյեմբերի 25-ին Գերագույն դատարանը չեղյալ հայտարարեց ԿԸՀ-ի ներկայացրած նոյեմբերի 2-ի ընտրությունների արդյունքները: Խորհրդարանի նախագահ Նինո Բուրջանաձեն հռչակվեց որպես երկրի նախագահի պաշտոնակատար:

Վրաստանի թավշյա հեղափոխության արդյունքում, որն այդ երկրի նորագույն շրջանի պատմության մեջ մտավ «վարդերի հեղափոխություն» անվանմամբ, հաղթահարվեց քաղաքական ճգնաժամը: 2004 թ. հունվարի 4-ին Վրաստանում անցկացված նախագահի ընտրությունների արդյունքում Վրաստանի նախագահ ընտրվեց Միխայել Սահակաշվիլին: Հաջորդ տարվա մարտին կայացած խորհրդարանի ընտրություններում հաղթանակ տարավ Սահակաշվիլու, Ժվանիայի և Բուրջանաձեի գլխավորած դաշինքը:

2004 թ. ապրիլի 5-ին Թբիլիսիին հաջողվեց պաշտոնաձև անել Աջարիայի ղեկավար Ասլան Աբաշիձեին և վերականգնել վերահսկողությունը Աջարիայի վրա: 2004 թ. նոյեմբերի 6-ին Վրաստանը 300

զինծառայող ուղարկեց Իրաք՝ դրանով իսկ աջակցություն ցուցաբերելով ամերիկյան կողմին:

(5) 1.2. Վրաստանը «վարդերի հեղափոխությունից» հետո

«Վարդերի հեղափոխությունից» երեք ամիս անց, ելույթ ունենալով ԱՄՆ Ջոնս Հոփկինսի համալսարանում, Մ. Սահակաշվիլին անդրադարձավ «վարդերի հեղափոխության երեք կարևոր դասերին», որոնցից առաջինը «քաղաքական ժառանգականության անցման ճանապարհի» հաղթահարումն էր: Երկրորդ դասը, ըստ Սահակաշվիլու, այն է, որ «վրացիները, լինելով եվրոպական ազգերի ընտանիքի անդամ թե՛ աշխարհագրորեն և թե՛ ազգային ինքնագիտակցության առումով», միավորվեցին ազատական և ժողովրդավարական սկզբունքների պաշտպանության շուրջ⁵⁷: «Վարդերի հեղափոխությունը» համարելով ազատության և ժողովրդավարական պետության մեջ ապրելու, իրենց դեկլարներին ընտրելու և իրենց ճակատագիրը որոշելու Վրաստանի քաղաքացիների իրավունքի հաղթանակը՝ Սահակաշվիլին ընդգծեց. «Ես ժողովրդավարության նախագահն եմ»⁵⁸: Երրորդ դասի հիմքում ընկած են Վրաստանի և ԱՄՆ-ի միջև «առանձնահատուկ հարաբերությունները». «Վրացիներն ամերիկացիների հետ կիսում են նույն համոզմունքները, նույն արժեքները, նույն ձգտումները»⁵⁹:

Իր ելույթում Վրաստանի նախագահն անդրադարձավ նաև երկրի առջև կանգնած մի շարք խնդիրների, որոնք հանգում էին քաղաքական և տնտեսական բարեփոխումների անխոչընդոտ իրականացմանը: «Մենք պետք է առաջ ընթանանք: Մենք հնարավորություն ունենք ողջ տարածաշրջանում դրական փոփոխությունների սկիզբը դնելու: Եթե այս հեղափոխությունը Վրաստանը հաջողությամբ

⁵⁷ Տե՛ս https://www.unipage.net/eng/johns_hopkins_university, դիտվել է 31.07.2017:

⁵⁸ https://www.unipage.net/eng/johns_hopkins_university, դիտվել է 31.07.2017:

⁵⁹ https://www.unipage.net/eng/johns_hopkins_university, դիտվել է 31.07.2017:

ավարտին հասցնի, ապա այն հաջողության կհասնի ողջ տարածաշրջանում»⁶⁰, – ընդգծեց Սահակաշվիլին:

«Վարդերի հեղափոխությունից» հետո նոր իշխանությունները՝ Սահակաշվիլու գլխավորությամբ, ձեռնամուխ եղան ներպետական կյանքում արմատական փոփոխությունների իրականացմանը, որոնցից առանցքայինը երկրում առկա լայնածավալ կոռուպցիայի հաղթահարումն էր: Սահակաշվիլին իրականացրեց կանխարգելիչ և պատժիչ միջոցառումներ: Հակակոռուպցիոն պայքարն ընթանում էր «Զրո հանդուժողականություն կոռուպցիայի հանդեպ» կարգախոսի ներքո: Ամենակոռումպացված ոլորտը համարվող ճանապարհային ոստիկանությունը լուծարվեց, ստեղծվեց պարեկային ծառայություն: Ոստիկանական համակարգից հեռացվեց 10 հազարից ավելի աշխատակից:

Այս գործողությունների արդյունքներով էր պայմանավորված հանրային տրամադրությունների փոփոխությունը ոստիկանության հանդեպ: Այսպես՝ 2016 թ. տվյալներով Վրաստանում ոստիկանությանը վստահում է բնակչության 87 տոկոսը. սա Արևելյան Եվրոպայում ամենաբարձր ցուցանիշն է:

Հեռահեղափոխական Վրաստանում ընդունվեցին այնպիսի օրենքներ, որոնք դյուրացրին կոռումպացված պաշտոնյաների կալանավորումը և նրանց գույքի պետականացումն այն դեպքում, եթե նրանք չկարողանային ապացուցել այդ ունեցվածքի ծագման օրինական աղբյուրները: Չերբակալվեցին մեծ թվով նախկին բարձրաստիճան պաշտոնյաներ, քրեական հեղինակություններ: Վրաստանը կարողացավ կտրել պետության և կազմակերպված հանցագործության Շևարդնաձեի կառավարման տարիներին էլ ավելի ամրացած կապը: Պետական և կազմակերպված հանցագործության առումով, ըստ հանրային կարծիքի ուսումնասիրության Միջազգային բյուրոյի 2011 թ. հաշվետվության, Վրաստանի ցուցանիշներն ամենացածրն էին ողջ Եվրոպայում:

Ըստ «Transparency International» միջազգային հակակառուպցիոն կազմակերպության կոռուպցիայի ընկալման համաթվի, եթե

⁶⁰ https://www.unipage.net/eng/johns_hopkins_university, դիտվել է 31.07.2017:

2002 թ. Վրաստանը զբաղեցնում էր 89-րդ տեղը աշխարհում, ապա՝ 2009 թ.՝ 67-րդը⁶¹:

Սկսեցին արագորեն բարեփոխվել օրենքները, տեղեկատվական տեխնոլոգիաները գործադրելով՝ պետական կառավարման համակարգը դարձավ բաց և թափանցիկ: Վերացան վերահսկողական մի շարք կառույցներ: Կրճատվեց նախարարությունների և պետծառայողների թիվը, մնացյալ պետծառայողների աշխատավարձերն աճեցին 15 անգամ:

Լուրջ փոփոխություններ կատարվեցին արտաքին քաղաքականության ոլորտում. Վրաստանը որդեգրեց հստակ եվրոպական ուղի: Նախատեսվել էՄ անդամակցության հեռանկարը: Անվտանգության ոլորտում հիմնական առանցքը դարձավ ՆԱՏՕ-ի հետ հարաբերությունների խորացումը՝ անդամակցության հեռանկարով: Վրաստանը դադարեցրեց անդամակցությունն ԱՊՀ-ին:

Տնտեսության մեջ Սահակաշվիլուն հաջողվեց հասնել լուրջ քայլերի. հարկային ուստիկանության ստեղծմամբ կտրուկ կրճատվեց ստվերային տնտեսությունը: Վրաստանի տնտեսությունն այդ տարիներին տղաճի նվազագույն մակարդակն արձանագրեց: Արձանագրվեց տնտեսական աճ: Աղքատությունը 1998-2003 թթ. 28.4 տոկոսից նվազեց 2004-2009 թթ. մինչև 24.5 տոկոսի: Գործարարության բարելավման առումով Վրաստանը հասավ այնպիսի արդյունքների, որ մոտք գործեց տնտեսապես արագ զարգացող երկրների շարք⁶²:

Զնայած այսևայլ արմատական բարեփոխումներին՝ հեղափոխությունից մի քանի տարի անց Սահակաշվիլու կառավարման հանդեպ ավելացան իշխանության գերկենտրոնացման և իշխանությունների տարանջատման սկզբունքի անտեսման մեղադրանքները:

«Վարդերի հեղափոխությունը» որոշ ժամանակահատված նկատելիորեն նվազեցրեց Վրաստանի ներքաղաքական կյանքում առկա լարվածությունը, թեպետ ինքնավար միավորումների ինքնորոշման

⁶¹ Տե՛ս https://www.transparency.org/news/feature/corruption_perceptions_index, դիտվել է 24.12.2016:

⁶² Տե՛ս Georgia's democratic transformation, published by the Government of Georgia, Jan., 2007:

անջատողական ձգտումները ժամանակ առ ժամանակ դարձյալ ի հայտ էին գալիս: 2006 թ. հուլիսին Կողորի կիրճում Էմգար Կվիզանին խռովություն բարձրացրեց: 2007 թ. դժգոհությունն իր քաղաքական ուղեգծից Սահակաշվիլուն ստիպեց գնալ նախագահի արտահերթ ընտրությունների, որոնց արդյունքում 2008 թ. հունվարի 5-ին նա վերընտրվեց նախագահի պաշտոնում:

2008 թ. օգոստոսի 7-ի լույս 8-ի գիշերը վրաց-օսեթական ճգնաժամը հանգեցրեց պատերազմի, որի արդյունքում ռուսական զինուժի աջակցությունը ստացած Աբխազիան և Հարավային Օսեթիան հայտարարեցին Վրաստանից անկախանալու մասին: 2008 թ. օգոստոսի 26-ին ՌԴ- նախագահ Դմիտրի Մեդվեդևը ստորագրեց հրամանագիր, որով ճանաչեց Աբխազիան և Հյուսիսային Օսեթիան:

Եվ չնայած այն հանգամանքին, որ օգոստոսի ավարտին Վրաստանի մայրաքաղաք Թբիլիսիում կայացած հանրահավաքում նախագահ Սահակաշվիլին հայտարարեց. «Մենք հաղթեցինք», ակնհայտ էր, որ Վրաստանը պատերազմից դուրս էր եկել կորուստներով ու պարտություններով: Ռազմական գործողությունների հետևանքով քաղաքական դաշտում ուժերի հարաբերակցությունը փոխվեց հօգուտ ռուսական կողմի, սակայն ռուս-վրացական քաղաքական ճգնաժամը ոչ միայն չհաղթահարվեց, այլև ավելի խորացավ՝ աստիճանաբար վերածվելով տարածաշրջանային ճգնաժամի, լուրջ սպառնալիք դառնալով հաղորդակցության ուղիների, պետական ենթակառուցվածքների, հասարակական անվտանգության համար: Միաժամանակ հաշվի առնելով ռուս-վրացական հակամարտության մեջ ներգրավված միջազգային դերակատարների պատկառելի ներկայությունը՝ ճգնաժամը դրանով իսկ վերածվեց աշխարհաքաղաքական ճգնաժամի:

Հոկտեմբերի 10-ին «Բի-Բի-Սի» ռադիոկայանին տված հարցազրույցում Վրաստանի խորհրդարանի նախկին նախագահ, Սահակաշվիլու երեկվա համախոհն ու թիմակիցը, հետագայում նրա ընդդիմախոսն ու «Ժողովրդավարություն և զարգացում» հիմնադրամի նախագահ Նինո Բուրջանաձեն այսպես է գնահատում պատերազմի արդյունքները. «Մենք չհաղթեցինք, սակայն Ռուսաստանը ևս

չհաղթեց: Ռուսաստանը ձեռք բերեց ներքին խնդիրներ իր երկրամասերում, նա արժանացավ Արևմուտքի բացասական արձագանքին: Ռուսաստանը ցույց տվեց, որ կարող է լինել անկանխատեսելի երկիր, և որ պայմանագրերը, որոնք ստորագրում է ինքը՝ Ռուսաստանի նախագահը, առ ոչինչ են»⁶³:

Ակնհայտ էր, որ Հարավային Օսեթիային և Աբխազիային ռազմական աջակցություն ցուցաբերելով՝ Ռուսաստանը ճնշում էր գործադրում նաև Վրաստանի հասարակության և անձամբ Սահակաշվիլու վրա՝ վերջինիս դրդելով հրաժարական տալ: «Որքան էլ մենք քննադատաբար վերաբերվենք մեր կառավարությանը և անձամբ Սահակաշվիլուն, մենք թույլ չենք տա Ռուսաստանին իշխանափոխություն իրականացնել Վրաստանում: Ռուսաստանն իրավունք չունի մեր փոխարեն որոշելու, թե ով պետք է մեզ ղեկավարի»⁶⁴, – վերոհիշյալ հարցազրույցում է Բուրջանաձեն:

Ռուս-վրացական պատերազմին հաջորդած քաղաքական իրողությունները՝ Փարիզի միջնորդական առաքելությունը, Ռուսաստանի կողմից Աբխազիայի և Հարավային Օսեթիայի ճանաչումը և նրանց հետ ռազմաքաղաքական դաշինք կնքելու հեռանկարը, եվրոպական և միջազգային կառույցների՝ Ռուսաստանին ուղղված, թեպետ իրականության չվերաժված սպառնալիքները, ՀԱՊԿ անդամ երկրների ընդունած հռչակագիրը, թուրքական քաղաքական մեծ նախաձեռնությունը, մի կողմից, ընդգծում են թե՛ մասնակիցների միջև առկա տարաձայնությունները, թե՛ նրանց ընդհանուր շահերն ու հետաքրքրությունները:

2012 թ. հոկտեմբերի խորհրդարանի ընտրություններում Սահակաշվիլու ղեկավարած «Միացյալ ազգային շարժումը» պարտություն կրեց: Սահակաշվիլին հայտարարեց, որ դառնում են ընդդիմություն: Պարտության պատճառը վրացական բանտերում իրականացվող

⁶³ http://news.bbc.co.uk/hi/russian/international/newsid_7663000/7663310.stm, դիտվել է 04.09.2016:

⁶⁴ http://news.bbc.co.uk/hi/russian/international/newsid_7663000/7663310.stm, դիտվել է 04.09.2016:

աղմկահարույց խոշտանգումների մի քանի դեպքերն էին, որոնք հանրայնացվեցին ընտրությունների նախօրեին:

2013 թ. ավարտվեց նախագահի պաշտոնում Սահակաշվիլու լիազորությունները ժամկետը:

«Վարդերի հեղափոխության» դերը շատ մեծ է Վրաստանի ժողովրդավարացման և արդիականացման, կոռուպցիայի հաղթահարման, արտաքին քաղաքականության հայեցակարգային փոփոխությունների առումով: Վրացական թավշյա հեղափոխության և հետագա արմատական բարեփոխումների մեջ առանցքային է հենց Միխայել Սահակաշվիլու դերը Վրաստանում ժողովրդավարական հաստատությունների կայացման, արդյունավետ կառավարման, արևմտյան արժեհամակարգի և սկզբունքների ներդրման և այլ կարևոր առումներով: «Վարդերի հեղափոխությունը» Վրաստանը դուրս բերեց առաջընթացի և զարգացման ճանապարհ:

5.2. Ամերիկյան օգնության ընդհանուր նկարագիրը և առաջնային ուղղությունները Վրաստանում

(5) 2.1. Վրաց-ամերիկյան հարաբերությունների սկզբնավորումը և զարգացումը

Նորանկախ Վրաստանի Հանրապետության հետ Միացյալ Նահանգները դիվանագիտական հարաբերություններ հաստատեց 1992 թ. մարտի 24-ին, իսկ ապրիլի 23-ին Թբիլիսիում բացվեց ԱՄՆ դեսպանատունը: 1992 թ. սեպտեմբերին Վրաստանում նշանակվեց ԱՄՆ առաջին արտակարգ և լիազոր դեսպանը՝ Քենթ Բրաունը, որը պաշտոնավարեց մինչև 1995 թ. օգոստոսը: Նույն թվականի սեպտեմբերին նրան փոխարինեց Վիլյամ Քաուրթնեյը, որի լիազորություններն ավարտվեցին 1997 թ. օգոստոսին: 1998 թ. հուլիսից մինչև 2001 թ. հունիս ընկած ժամանակահատվածում Վրաստանում ԱՄՆ դեսպանն է եղել Քենեթ Յալիովիչը, 2002 թ. մայիսից մինչև 2005 թ. օգոստոսը՝ Ռիչարդ Միլսը, 2005 թ. օգոստոսից մինչև 2009 թ. սեպտեմբերը՝ Ջոն Թեֆֆեր, 2009 թ. հոկտեմբերից մինչև 2012 թ. հուլիսը՝ Ջոն Բասսը, 2012 թ. սեպտեմբերից մինչև 2015 թ. հուլիսը՝ Ռիչարդ Նորլանդը, 2015 թ. սեպտեմբերից մինչև 2018 թ. մարտը՝ Յան Քելլին, 2022 թվականից մինչև օրս Վրաստանում ԱՄՆ արտակարգ և լիազոր դեսպանն է Քելլի Դեզմանը:

1993 թ. օգոստոսից մինչև 1994 թ. հուլիսը Պետեր Չխեիաձենն եղել է ԱՄՆ-ում Վրաստանի առաջին արտակարգ և լիազոր դեսպանը: Նրան փոխարինել է Թեդո Ջափարիձեն, որը պաշտոնավարել է 1994 թ. հուլիսից մինչև 2002 մարտը: 2002 թ. հունիսից մինչև 2006 թ. հունվարը ԱՄՆ-ում Վրաստանի արտակարգ և լիազոր դեսպան է եղել Լևան Միքելաձեն, 2006 թ. փետրվարից մինչև 2009 թ. մարտը՝ Վասիլ Միխարուլիձեն, 2009 թ. մարտից մինչև 2011 թ. փետրվարը՝ Բաթո Բութելիան, 2011 թ. փետրվարից մինչև 2013 թ. ապրիլը՝ Թեմուր Յակոբաշվիլին, 2013 թ. ապրիլից մինչև 2015 թվականը՝ Արչիլ Գեգեշիձեն, 2015 թ.՝ Գիեորգի Յիկուլիան, ապա՝ Գիեորգի Խելաշվիլին, 2016 թ. մինչ 2022 թ. ապրիլը՝ Դավիթ Բաքրաձեն, նույն թվակա-

մից մինչև օրս ԱՄՆ-ում Վրաստանի արտակարգ և լիազոր դեսպանն է Դավիթ Զակալիանին):

1994 թ. մարտին ԱՄՆ պետքարտուղարի տեղակալ Փիթեր Թարնոֆը հայտարարեց. «ԱՄՆ-ն մինչև հիմա անհրաժեշտ ուշադրություն չի դարձրել Ռուսաստանին սահմանակից երկրներին: Այս իրավիճակը պետք է փոխվի, քանի որ այն երկրները, որոնք վտանգ են տեսնում ռուսական ներխուժումից, ունեն օրինական շահեր ու հետաքրքրություններ, որոնք ԱՄՆ-ն չի կարող անտեսել»⁶⁵:

Սկզբնավորման, անգամ կայացման շրջանում վրաց-ամերիկյան հարաբերությունները պակաս գործնական և արդյունավետ էին, քան հայ-ամերիկյան հարաբերությունները մույն ժամանակահատվածում: Ասվածի վկայություն են այն հանգամանքները, որ տվյալ ժամանակահատվածում՝ 1993 թվականից մինչև 1995 թվականը, ԱՄՆ-ի կողմից Հայաստանի Հանրապետությանը հատկացվող օգնության ծավալներն ավելի մեծ են եղել, ինչպես նաև Երևանի ու Վաշինգտոնի միջև փոխայցերը և կնքված պայմանագրերն ավելի շատ և բազմաբնույթ են եղել:

Վաշինգտոնի հարավկովկասյան քաղաքականության մոր փուլի սկիզբը կարելի է համարել 1997 թվականը, երբ ԱՄՆ տարածաշրջանային առաջնահերթությունների շարքում հայտնվեց Վրաստանը: Նույն թվականին Կոնգրեսի պահանջով ԱՄՆ պետքարտուղարությունը զեկույց պատրաստեց Կասպյան ավազանում Միացյալ Նահանգների քաղաքական հետաքրքրությունների մասին: Նույն թվականի հոկտեմբերին Կոնգրեսին ներկայացվեց օրենքի մոր նախագիծ՝ «Մետաքսի ճանապարհի ռազմավարությունը», որն ընդունվեց 1999 թ.: Ըստ օրինագծի՝ նախատեսվում էր.

«- ստեղծել Կասպյան տարածաշրջանում ԱՄՆ ազդեցության հաստատման համար նպաստավոր պայմաններ,

- ստեղծել ԱՄՆ հետաքրքրություններին համապատասխանող տրանսպորտի և հաղորդակցության ենթակառուցվածքներ,

⁶⁵ www.usa.state.gov/georgia, դիտվել է 09.09.2016:

- պաշտպանել ամերիկյան մասնավոր կազմակերպությունների շահերը տարածաշրջանում»⁶⁶:

Ամերիկյան աջակցության կարևոր բաղադրիչն է կազմում Վրաստանի կառուցվածքների արագ վերականգման ծրագիրը, որն ընդունվեց 1999 թ. ապրիլին ԱՄՆ ՄԶԳ-ի հետ համատեղ: Ծրագրով նախատեսվում էր ֆինանսական, խորհրդատվական աջակցություն հինգ հիմնական ուղղություններով՝ կոռուպցիայի դեմ պայքար, ֆիսկալ համակարգի զարգացում, էներգետիկայի, տրանսպորտի և կապի ոլորտների սեփականաշնորհում, հողի բարեփոխումների ծրագրի իրականացում, փոքր և միջին բիզնեսի աջակցություն: Բացի դրանից՝ պետական աշխատողների աշխատավարձերը վճարում էր ամերիկյան կողմը:

1999 թ. օգոստոսի 1-ին պաշտոնական այցով Վրաստան է ժամանում ԱՄՆ պաշտպանության նախարար Ու. Քոենը: ԱՄՆ-ն աջակցում էր նաև Վրաստանի ռազմական դոկտրինի մշակմանը, վրացական զինուժի բարեփոխումներին, որոնք պետք է իրականացվեին ՆԱՏՕ-ի չափանիշներին համապատասխան: 2001 թ. փետրվարին Թբիլիսի ժամանեց ԱՄՆ պաշտպանության փոխնախարարի օգնական Դ. Սթարը, որի այցի նպատակն էր աջակցություն ցուցաբերումը Վրաստանին: Այցին հաջորդեց Վրաստանում ԱՄՆ պաշտպանության նախարարի օգնականի պաշտոնի ստեղծումը, այնուհետև՝ ԱՄՆ պետքարտուղարի էներգառեսուրսների գծով օգնականի այցը, ապա՝ նաև ԿՀՎ-ի տնօրեն Լ. Ֆրիի և Եվրոպայում ԱՄՆ զինուժի ղեկավար Ֆուլֆորդի այցերը:

2001 թ. ԱՄՆ միջազգային զարգացման գործակալությունը Վրաստանում սկսում է իրականացնել «Տեղական կառավարման բարեփոխումների նախաձեռնություն» ծրագիրը՝ «Ուրբան ինստուտուտ» ամերիկյան միջկառավարական գերատեսչության ղեկավարությամբ: Ծրագրով նախատեսվում է դրամաշնորհների հատկացում բնակչությանը:


⁶⁶ www.usa.state.gov/georgia, դիտվել է 09.09.2016:

(5) 2.3. ԱՄՆ աջակցության ծրագրերը Վրաստանին «Վարդերի հեղափոխությունից» հետո

«Վարդերի հեղափոխությունից» հետո Վրաստանին ցուցաբերվող ԱՄՆ աջակցության ծրագրերի ծավալներն աճեցին, ինչպես նաև փոխվեցին դրանց ուղղությունները: 2004 թ. ամերիկյան աջակցության ծրագրերում առանձին տողով ընդգծվեց ժողովրդավարական բարեփոխումների ուղղությունը: 2004 թ. ֆինանսական տարում ամերիկյան օգնությունը կազմեց շուրջ 102.1 մլն ԱՄՆ դոլար, որը բաշխվել է հետևյալ կերպ.

- ժողովրդավարության զարգացում՝ 14.4 մլն դոլար,
- սոցիալ-տնտեսական բարեփոխումներ՝ 35.5 մլն դոլար,
- անվտանգության և դատախարական համակարգի բարեփոխումներ՝ 38.5 մլն դոլար,
- մարդասիրական բնույթի օգնություն՝ 9.9 մլն դոլար
- միջգերատեսչական նախաձեռնություններ՝ 3. 8 մլն դոլար⁶⁷:

2004 ֆինանսական տարի



ԱՄՆ ժողովրդավարական աջակցության ծրագրերը Վրաստանին ուղղված էին ընտրողների իրավական գիտակցության բարձրացմանը, խեղաթյուրված ընտրական համակարգի շտկմանը, ՁԼՄ-

⁶⁷ Տե՛ս http://www.infogrant.ru/fulldoc_sr.dws?dui=28090, դիտվել է 11.09.2016:

ների ազատության և անկախության ամրապնդմանը, կուսակցությունների և ոչ կառավարական կազմակերպությունների դերի բարձրացմանը, օրենսդրության բարելավմանը, կոռուպցիայի հաղթահարմանը:

ԱՄՆ-ն ավելացրեց Վրաստանի նոր կառավարությանը հատկացվող տեխնիկական օգնության ծավալը՝ նպաստելու կառավարության բաց և թափանցիկ աշխատանքին և հասարակական հատվածի հետ կառավարության երկխոսությանը:

ԱՄՆ կրթական և փոխանակման ծրագրերը նպաստակառողված են Վրաստանի նոր սերնդի՝ ազատ շուկայի և ժողովրդավարության փորձի յուրացմանը: 2003 թ. այս ծրագրերի շրջանակում ԱՄՆ-ում է եղել Վրաստանի 350, իսկ 1993-2003 թթ. ընթացքում՝ 3800 քաղաքացի:

Ամերիկյան օգնությունը Վրաստանի էներգետիկ համակարգին օգնում է ամրապնդել և համակարգի անկախությունը և անվտանգությունը:

Ամերիկյան օգնությունը անվտանգության, իրավականության և չտարածման ոլորտներում ուղղված է Վրաստանի կարողությունների, սահմանների պաշտպանունակության ամրապնդմանը, դատավարական համակարգի բարեփոխմանը, թմրանյութերի վաճառքի կանխմանը և ահաբեկչության դեմ պայքարին: Ամերիկյան կողմը ուսուցանում է Վրաստանի սահմանապահներին, մաքսային ծառայության աշխատակիցներին:

Վրաստանի իրավապահ համակարգին ուղղված ԱՄՆ աջակցության ծրագրերն օգնում են ոստիկանական ոլորտի բարեփոխմանը, փողերի լվացման դեմ արդյունավետ պայքար ծավալելուն:

2004 թ. Վրաստանի առավել անապահով խավերին ամերիկյան մարդասիրական օգնությունը կազմել է 25 մլն ԱՄՆ դոլար: ԱՄՆ գյուղատնտեսության դեպարտամենտը Վրաստանի կառավարությանը և մասնավոր բարեգործական կազմակերպություններին հատկացրել է 65000 տոննա հացահատիկ:

1998-2001 թթ. վրացական սահմանների պաշտպանության ապահովման համար ԱՄՆ-ն Վրաստանին հատկացրել է 72 միլիոն

դուլար: Դա զգալի գումար է, մանավանդ եթե հաշվի առնենք, որ Վրաստանի ռազմական բյուջեն 1998 թ. կազմել է մոտ 41 մլն դուլար, իսկ 1999 թ.՝ 24 մլն ԱՄՆ դոլար:

2002 ֆինանսական տարում ԱՄՆ-ն Վրաստանին հատկացրել է 187 մլն ԱՄՆ դոլար, որից 91 միլիոնը՝ «Ազատության աջակցության ակտի» շրջանակում.

- 31 մլն ԱՄՆ դոլարը՝ օտարերկյա ֆինանսավորում ռազմական ոլորտին,
- 9 մլն ԱՄՆ դոլարը՝ գյուղատնտեսության ոլորտին,
- 12 մլն դոլարը՝ կառավարության այլ ոլորտներին,
- 45 մլն դոլարը՝ անձնական նվիրատվություններ⁶⁸:

2005 թ. Պենտագոնը սկսել է 60 մլն դոլար արժողությամբ «Կառավարության ապահովման ծրագիրը»՝ աջակցելով Իրաքում տեղակայված վրացական զորքերին:

2005 թ. մայիսին Թբիլիսի այցելեց ԱՄՆ նախագահ Ջորջ Բուշը: Դա հետխորհրդային շրջանում ԱՄՆ նախագահների առաջին և առաջմ միակ այցն է Հարավային Կովկաս: Այդ այցով Վաշինգտոնը ցուցաբերեց իր երկրի աջակցությունը Վրաստանում տեղի ունեցող փոփոխություններին, և պատահական չէ, որ 2007 թ. նոյեմբերյան դեպքերի ընթացքում ԱՄՆ պետդեսպարտամենտը հիշեցրեց Թբիլիսին, որ սատար է կանգնել այդ երկրի ղեկավարության ժողովրդավարական բարեփոխումներին և կոչ արեց հավատարիմ մնալ դրանց՝ վերացնելով արտակարգ դրությունը, չխոչընդոտելով ՉԼՄ-ների աշխատանքը:

2009 թ. հունվարին 9-ին Վաշինգտոնում ԱՄՆ-ն և Վրաստանը ստորագրեցին «Ռազմավարական գործընկերության մասին խարտիան» (Charter on Strategic Partnership): Վաշինգտոնի կողմից խարտիան ստորագրել է նախկին պետքարտուղար Քոնդոլիզա Ռայսը, վրացական կողմից՝ արտգործնախարար Գրիգոլ Վաշաձեն: Ստորագրման արարողության ժամանակ Ք. Ռայսը հայտարարել է. «Վրաստանը ԱՄՆ-ի համար շատ կարևոր և արժեքավոր գործընկեր

⁶⁸ http://www.infogrant.ru/fulldoc_sr.dws?dui=28090, դիտվել է 11.09.2016:

է: Մեր հարաբերությունները կառուցված են ընդհանուր արժեքների վրա, Միացյալ Նահանգները պաշտպանել և շարունակելու է պաշտպանել Վրաստանի ինքնիշխանությունը, տարածքային ամբողջականությունը, նրա հյուսիսատլանտյան ձգտումները»⁶⁹: Իր ելույթում Վաշաձեն ընդգծել է. «Սա պատմական օր է իմ ժողովրդի համար: Սա այն է, ինչին Վրաստանը վաղուց է ձգտել: Վրաստանը պետք է վերադառնա արևմտյան աշխարհ: Ես շատ հպարտ եմ, որ ապրել եմ մինչև այս օրը»⁷⁰:

Խարտիան ամրագրում է՝ երկու երկրները, որոնք ստորագրել են այս փաստաթուղթը, «կիսում են կենսական հետաքրքրությունները և շահերը Վրաստանը դարձնել ուժեղ, բարգավաճ, ինքնիշխան և տարածքային անձեռնմխելիությամբ»⁷¹:

ԱՄՆ-ն ստանձնում է վրացական բանակի արդիականացման և պաշտպանունակության բարձրացման պարտավորություն: «Այս փաստաթուղթը ցույց է տալիս, թե որքան են առաջացել մեր հարաբերությունները անվտանգության, պաշտպանության, մշակույթի և տնտեսության ոլորտներում: Վրաստանը կարող է վստահ լինել, որ ի դեմս ԱՄՆ-ի՝ հուսալի ընկեր ունի», – ասել է Ռայսը⁷²: Խարտիան բաղկացած է նախաբանից և հինգ մասից: Խարտիան ընդգծում է երկու երկրների «հավատարմությունը ժողովրդավարական կառավարմանը որպես քաղաքական լեգիտիմության հիմքի»⁷³:

Փաստաթղթում ընդգծվում է նաև ԱՄՆ-ի և Վրաստանի միջև ռազմավարական ընկերակցության կարևորությունը. «Մենք՝ Միացյալ Նահանգներն ու Վրաստանը, ընդգծում ենք, որ մեր ժողովրդավարությունների միջև համագործակցությունը հիմնված է ընդհանուր արժեքների և ընդհանուր շահերի վրա, նույն թվում՝ ժողովրդավարու-

⁶⁹ Georgia's democratic transformation, published by the Government of Georgia, January 2007, p. 18.

⁷⁰ Грузия Онлайн, 10.01.2009, Подписано в Вашингтоне, округ Колумбия, 9 января 2009 года, Неофициальный перевод - "Грузия Онлайн", դիտվել է 21.09.2016:

⁷¹ Грузия Онлайн, 10.01.2009, Подписано в Вашингтоне, округ Колумбия, 9 января 2009 года, Неофициальный перевод - "Грузия Онлайн", դիտվել է 21.09.2016:

⁷² Грузия Онлайн, 10.01.2009, դիտվել է 21.09.2016:

⁷³ Грузия Онлайн, 10.01.2009, դիտվել է 21.09.2016:

քյան և տնտեսական ազատության զարգացման, անվտանգության և տարածքային ամբողջականության, օրենքի գերակայության հաստատման և մարդու իրավունքների հարգանքի վրա»⁷⁴: Ընդգծելով, որ «մեր բարեկամությունը հիմնված է համատեղ գիտակցության և միասնական հավատի վրա, որ ժողովրդավարությունը քաղաքական լեգիտիմության և, հետևաբար, կայունության գլխավոր հիմքն է»՝ խարտիան կարևորում է «հզոր, անկախ, ինքնիշխան և ժողովրդավարական Վրաստանի ներդրումը ազատ և խաղաղ Եվրոպայի ողջ քաղաքացիների անվտանգության և բարօրության հաստատման գործում»⁷⁵: Խարտիան սահմանում է մաս Գ-ործընկերության սկզբունքները և Վրաստանին ԱՄՆ աջակցության ուղղությունները՝ Վրաստանի եվրաստլանդյան համագործակցության խորացում, Վրաստանի՝ եվրոպական և տրանսատլանտիկ քաղաքական, տնտեսական կառուցներին լիարժեք ինտեգրացիայի աջակցություն, Վրաստանի հնարավորությունների ուժեղացում և ՆԱՏՕ-ին անդամակցելու նախապատրաստում:

Վկայակոչելով Վրաստանի և Ռուսաստանի միջև կրակի դադարեցման մասին օգոստոսի 12-ի համաձայնագրից բխող պարտավորությունները՝ ԱՄՆ-ն լայն համագործակցություն է առաջարկում Վրաստանին պաշտպանության և անվտանգության ոլորտներում:

Տնտեսության, առևտրի և էներգետիկայի ոլորտներում ԱՄՆ-ն և Վրաստանը նպատակադրվում են «ուսումնասիրել Վրաստանում էներգիայի արտադրության հնարավորությունները, ուժեղացնել Վրաստանով եվրոպական շուկաներ գնացող էներգետիկ տրանզիտի էներգաարդյունավետությունը և դրանց ֆիզիկական անվտանգությունը: Մենք նպատակ ունենք զարգացնելու մեր բազմամյա համագործակցությունը Ադրբեյջանի և Թուրքիայի հետ, որի արդյունքը Բաքու-Թբիլիսի-Ջեյհան և Բաքու-Սուպսա մավրատարերն են և Բաքու-Թբիլիսի-Էրզրում գազատարը, որպեսզի ստեղծվի մոր հարավային միջանցք, որը կօգնի Վրաստանին և մնացյալ Եվրոպային

⁷⁴ Грузия Онлайн, 10.01.2009, դիտվել է 21.09.2016:

⁷⁵ Грузия Онлайн, 10.01.2009, Подписано в Вашингтоне, округ Колумбия, 9 января 2009 года, Неофициальный перевод - "Грузия Онлайн", դիտվել է 21.09.2016:

դիվերսիֆիկացիայի ենթարկել բնական գազով ապահովումը Ադրբեյջանից և Միջին Ասիայից»⁷⁶:

Խարտիայի 4-րդ մասն ամբողջությամբ նվիրված է ժողովրդավարության ամրացմանը: ԱՄՆ-ն պարտավորվում է աջակցել Վրաստանին ՁԼՄ-ների ազատության, տեղեկատվության հասանելիության, քաղաքացիական հասարակության ուժեղացման, դատարանի անկախության և իրավունքի գերակայության ապահովման, քաղաքացիների իրավունքների և հիմնարար ազատությունների հարգման, կոռուպցիայի հաղթահարման, Վրաստանի գործադիր իշխանության թափանցիկության և հաշվետվության ապահովման հարցերում⁷⁷:

Խարտիան վրաց-ամերիկյան հարաբերություններին նոր որակ և արդյունավետություն հաղորդեց՝ հաստատելով Վրաստան-Միացյալ Նահանգներ հարաբերությունների նոր ռազմավարության սկիզբը:

Ամփոփելով ասվածը՝ հարկ է ընդգծել, որ ԱՄՆ-Վրաստան հարաբերությունները սկզբնապես պակաս խորությամբ և լայնությամբ են զարգացել, քան Հայաստան-ԱՄՆ հարաբերությունները, և ամերիկյան աջակցության ծրագրերը Հայաստանին ավելի մեծ և ընդգրկուն են եղել վրաց-ամերիկյան ծրագրերից: Միաժամանակ Վրաստանում ժողովրդավարության հաստատությունների կայացման և ամրացման հետ համընթաց ամերիկյան աջակցության ծավալների աճը Վրաստանին պայմանավորված էր Թբիլիսիի՝ ժողովրդավարական հաստատությունները կայացնելու գործնական քաղաքական քայլերով և արդյունքներով, որ արձանագրեց Վրաստանը ազատ ընտրական համակարգի, մամուլի ազատության ապահովման և կոռուպցիայի դեմ հետևողական և արդյունավետ պայքարի ցուցանիշներով:

⁷⁶ Грузия Онлайн, 10.01.2009, դիտվել է 21.09.2016:

⁷⁷ St'u Грузия Онлайн, 10.01.2009, Подписано в Вашингтоне, округ Колумбия, 9 января 2009 года, Неофициальный перевод - "Грузия Онлайн", դիտվել է 21.09.2016:

ԳԼՈՒԽ 6.

ԱՄՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԺՈՂՈՎՐԳԱՎԱՐՈՒԹՅԱՆ, ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՀԻՄՆԱՐԱՐ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈԼՈՐՏՈՒՄ: ԺՈՂՈՎՐԳԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՀԻՄՆԱՐԱՐ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԽՈԶԸՆԴՈՏՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԵՎ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ

6.1. Ժողովրդավարության աջակցության ԱՄՆ քաղաքական ուղեգիծը

(6)1.1. Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության խնդիրները որպես արևմտյան քաղաքականու- թյան և քաղաքակրթության ուղենիշ

Մարդու իրավունքների պաշտպանության և հիմնարար ազատությունների ապահովման խնդիրները միջազգային հանրության ուշադրության կենտրոնում հայտնվեցին XX դարի 2-րդ կեսի նախաշեմին, երբ ֆաշիզմի ջախջախումից հետո խնդիր էր առաջացել պատվար ստեղծելու կոմունիզմի առջև: Դրան ավելանում էին մարդու իրավունքների ոտնահարման տարաբնույթ իրողությունները հենց Եվրոպայում: Անհրաժեշտություն էր առաջացել իրավական պարտադիր մեխանիզմներով պաշտպանելու անհատի իրավունքները և ազատությունները պետություններում: Այդ իսկ պատճառով 1948 թ. դեկտեմբերի 10-ին (այդ օրն էլ նշվում է որպես Մարդու իրավունքների պաշտպանության միջազգային օր) ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեան ընդունեց Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը, որը դրվեց 1950 թ. նոյեմբերի 4-ին Հռոմում ընդունված «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին» եվրոպական կոնվենցիայի հիմքում: Հետագայում միջազգային կազմակերպությունները և եվրոպական կառույցները մարդու իրավունքների և

ազատությունների ապահովման տարբեր ոլորտների իրավական պաշտպանությունն ամրագրեցին այլ փաստաթղթերով ևս, սակայն ՄԱԿ-ի հռչակագիրն այդ իրավունքների պաշտպանության հիմնարար և առաջին միջազգային փաստաթուղթն է:

Միաժամանակ հարկ է նշել, որ մարդու իրավունքների ապահովման խնդիրները Արևմուտքին մտահոգել են ավելի վաղ: Այսպես՝ Անգլիական հեղափոխությունից հետո՝ 1688 թ., այդ երկրում ընդունվեց «Իրավունքների հռչակագիրը», որի առաջադիմական սկզբունքները ցնցեցին ժամանակի Եվրոպան:

Մարդու իրավունքների և ազատությունների ապահովման գաղափարներն ԱՄՆ-ում իրենց արտացոլումը գտան նաև 1776 թ. Անկախության հռչակագրում. «Բոլոր մարդիկ հավասար են ծնվում և Արարչի կողմից ունեն հավասար իրավունքներ: Այդ իրավունքների շարքում են դասվում կյանքի, ազատության, երջանկության ձգտման իրավունքները»⁷⁸:

1789 թ. ընդունվեց ԱՄՆ Սահմանադրությունը, որից 2 տարի անց ընդունվեցին Իրավունքների մասին սահմանադրական 10 ուղղումները:

Մարդու բնական իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանությունը հետագայում հռչակվեց որպես Միացյալ Նահանգների հիմնական նպատակ, արտաքին քաղաքականության ուղենիշ: Ելակետ ունենալով Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը՝ «Միացյալ Նահանգները գիտակցում է, որ մարդու իրավունքների հարգումն ու պաշտպանությունը նպաստում է աշխարհի անվտանգության և խաղաղության ապահովմանը, ազրեսիայի կանխարգելմանը, օրենքի գերակայության ապահովմանը, հանցավորության և կոռուպցիայի դեմ մղվող պայքարին, այն ամրապնդում է ժողովրդավարությունը, կանխում հումանիտար ճգնաժամերը»⁷⁹, - ընդգծվում է ԱՄՆ արտաքին քաղաքական գերատեսչու-

⁷⁸ Henry W. Bragdon, Samuel P. McCutchen "History of a free people", NY, London, Macmillan Publishing Company, 1981, p. 60.

⁷⁹ Տե՛ս ԱՄՆ պետքարտուղարության պաշտոնական կայքէջ, <http://www.usa.state.gov>, ղիտվել է 04.04.2016:

թյան՝ պետդեպարտամենտի Ժողովրդավարության, մարդու իրավունքների և աշխատանքի բյուրոյի 2006 թ. ամենամյա զեկույցի նախաբանում:

Միաժամանակ ժամանակակից քաղաքագիտությունը մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների խնդիրները պայմանավորում է ոչ միայն դրանց ապահովման համար իրավական մեխանիզմների՝ օրենսդրության բարելավմամբ, այլև տվյալ հասարակության քաղաքական և քաղաքացիական գիտակցության կայացման աստիճանով, տվյալ պետության որդեգրած արժեհամակարգով և ժողովրդավարական սկզբունքների ապահովմամբ ու կիրառմամբ: Ասել է թե՛ տվյալ պետության մեջ մարդու իրավունքների պաշտպանության և հիմնարար ազատությունների ապահովման համար գործող օրենքները անհրաժեշտ, բայց ոչ բավարար պայման են այդ իրավունքների լիարժեք իրացման համար:

Զբիգնև Բժեզինսկին՝ ԱՄՆ նախկին նախագահ Ջիմի Բարտերի՝ Ազգային անվտանգության գծով նախկին խորհրդականը, որն այնուհետև գլխավորում էր ԱՄՆ ժողովրդավարության ազգային հիմնադրամի (NED) տնօրենների խորհուրդը, ավելի հեռու է գնում՝ պնդելով, որ մարդու իրավունքների ու ազատությունների, ընդհանրապես՝ ժողովրդավարության արժեքների ապահովել-չապահովելը աշխարհայացքային, ավելին՝ քաղաքակրթական հարթությունում է: Պնդելով, որ Միացյալ Նահանգները հաղթել է «գաղափարախոսությունների պայքարում», Բժեզինսկին ընդգծում է. «Այժմ պետությունների միջև բաժանարար գիծն անցնում է ազատության և մարդու իրավունքների միջով: Հիմնական բանավեճը սա է: Այդ արժեքները ծնվել են Արևմուտքում, հռչակվել են այնտեղ, ինստիտուտալիզացիայի և ֆորմալիզացիայի են ենթարկվել այնտեղ»⁸⁰:

Եվ չնայած այն պատմական իրողությանը, որ ժողովրդավարությունը սկզբնավորվել է Արևմուտքում, այնուամենայնիվ ժողովրդավարությունը հնարավոր չէ մեկուսացնել, կղզիացնել, պահածոյաց-

⁸⁰ Zbigniew Brzezinski “The New Challenges to Human Rights”, Journal of Democracy 8.2 (1997), published for the National Endowment for Democracy by the Johns Hopkins University Press, p. 6.

մել, մանավանդ որ առաջադիմական գաղափարները՝ ի դեմս ազատության և մարդու իրավունքների պաշտպանության, կարող են հաղթահարել պետական սահմանների արգելքը: Բացի դրանից՝ այն պետությունները, որոնք ազատության և մարդու իրավունքների պաշտպանության արժեքներն ու գաղափարները դրել են պետականության կառուցման հիմքում, կարողանում են արագ հաղթահարել ներհասարակական, ներքաղաքական հակասություններն ու դիմակայությունը, շտկել հասարակական արատները կամ երկրի կառավարման սխալները: Միաժամանակ արդի աշխարհը թեպետ ավելի ու ավելի է կարևորում ժողովրդավարության և մարդու իրավունքների հարգման խնդիրները, այնուամենայնիվ այդ արժեքները լուրջ դիմադրության են հանդիպում ինքնակալական և բռնապետական վարչակարգերի, կոռումպացված կառավարությունների կողմից: Այդ է նաև պատճառը, որ տարբեր միջազգային կազմակերպություններ, եվրոպական կառույցներ յուրաքանչյուր տարի հրապարակում են աշխարհի տարբեր պետություններում մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին տարեկան զեկույցներ: Դրանք ընդգրկում են տվյալ պետության մեջ մարդու իրավունքների խախտումների փաստերը, գնահատականները իրավունքի որոշակի ոլորտի մասին, ինչպես նաև տալիս են մախորդ տարվա զեկույցից հետո այդ ոլորտներում իրավիճակի փոփոխությունները՝ բարելավմանը միտված քայլերը, առաջընթացը կամ, հակառակը, արձանագրվող նահանջը: Այդօրինակ զեկույցների նպատակն է հետևել աշխարհում մարդու իրավունքների պաշտպանության գործընթացներին, այդ ոլորտում տիրող խախտումներն արձանագրելով՝ հաշվետու պահել տվյալ պետության կառավարությանը, թերևս նաև վերահսկել ոլորտում տիրող իրավիճակը՝ այնտեղ ետընթացը կանխելու համար:

Միաժամանակ պետք է նշել, որ մի շարք պետությունների ղեկավարներ, կառավարություններ բացահայտ կամ դիվանագիտական ակնարկներով հայտարարում են, թե մարդու իրավունքների պաշտպանության պատրվակով միջազգային կազմակերպությունները կամ գերտերությունները փորձում են խառնվել իրենց երկրի ներքին գործերին, ինչն անթույլատրելի է: Նախկին ԱՊՀ երկրներից մնան

հայտարարություններ ամենաշատն արել է թերևս Բելառուսի նախագահ Ալեքսանդր Լուկաշենկոն, որին Արևմուտքը մեղադրում է բռնապետական կառավարման մեջ: Բելառուսի նախագահի և պաշտոնական Վաշինգտոնի միջև հարաբերությունների լարվածությունը կիզակետին հասավ, երբ երկու կողմերն էլ հետ կանչեցին իրենց դեսպաններին:

Նման հայտարարություններ արել են նաև հարավկովկասյան երկրների ղեկավարները հետխորհրդային շրջանի տարբեր ժամանակահատվածներում: Այսպես՝ 2004 թ. մայիսի 6-ին ՀՀ նախկին նախագահ Ռոբերտ Քոչարյանը, ի պատասխան «Ամբիոն» թերթի հարցի՝ «Ինչպե՞ս եք գնահատում Հայաստանի Հանրապետությանը վերաբերող ԵԽԽՎ վերջին գեկույցին, մասնավորապես՝ իշխանությունների մասին հատվածին, արդյո՞ք պատրաստվում եք վերանայել Ձեր քայլերն ու գործողությունները», նկատել է. «Եվրախորհուրդը դուք մի դիտեք որպես նախկին պոլիտբյուրո, որտեղ որոշում էին կայացնում և պարտադրում»⁸¹:

Չնայած այսօրինակ դիտարկումներին՝ երկրների հասարակական-քաղաքական շրջանակները մանրագին ուսումնասիրում են այդօրինակ գեկույցներում առկա փաստերն ու գնահատականները:

⁸¹ «Ամբիոն», 7 մայիսի, թիվ 39, 2004:

6.2. Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների ապահովման խնդիրները և ԱՄՆ քաղաքականությունը

(6) 2.1. «Ժողովրդավարության արդափաստման» ամերիկյան ուղեգիրը

XXI դարում Միացյալ Նահանգների կողմից ժողովրդավարության և ազատության արժեքների պաշտպանության և տարածման քաղաքականության հռչակումը աշխարհի մի շարք երկրներում առաջ բերեց ժողովրդավարական շարժումներ: Դրանց մի մասը հաջող ընթացք ունեցավ՝ սկիզբ դնելով տվյալ երկրում ժողովրդավարական փոփոխությունների գործընթացին, մյուս մասը, չկարողանալով հաղթահարել հակաժողովրդավարական համակարգի դիմադրությունը, անհաջողության մատնվեց:

«Մենք կպաշտպանենք ժողովրդավարության և մարդու իրավունքների պաշտպանությանը նպատակամիտված շարժումները: ԱՄՆ միջազգային զարգացման գործակալությունը պետք է կարևոր դեր խաղա ժողովրդավարական բարեփոխումների և մարդու իրավունքների ճանաչման համար ոչ միայն այն պատճառով, որ դրանք մեր ավանդույթներում են ներառված, այլ նաև այն պատճառով, որ ապահովում են ավելի կայուն և բարգավաճ աշխարհ», – նշված է ԱՄՆ պետդեպարտամենտի 2004-2009 թթ. ռազմավարական ծրագրում⁸²:

«Մենք չենք կարող սկսած գործն անավարտ թողնել: Ամերիկացիները գիտակցում են իրենց առջև կանգնած պատմական խնդիրները: Ամերիկյան ժողովուրդը գիտի, որ Միացյալ Նահանգները ուժեղ է և վստահ իր ուժերում»⁸³, – 2006 թ. Կոնգրեսում ունեցած ելույթում հայտարարել է ԱՄՆ նախագահ Ջորջ Բուշը:

ԱՄՆ այսօրինակ քաղաքականությունը երբեմն որակվում է որպես «ժողովրդավարության արտահանում»: Մի շարք դիտարկումներ

⁸² www.usa.state.gov, դիտվել է 11.11.2016:

⁸³ ԱՄՆ Սպիտակ տան պաշտոնական կայքէջ, <http://www.whitehouse.gov/speeches>: դիտվել է 04.04.2016:

րի համաձայն՝ ժողովրդավարական ազատությունների ապահովման՝ ԱՄՆ պետքարտուղարության և միջազգային ու եվրոպական կառույցների զեկույցներով փորձ է արվում միջամտելու երկրների ներքին գործերին: Այդ անհանգստությունը պետությունների կառավարությունների մոտ մեծացավ հատկապես այն բանից հետո, երբ Միացյալ Նահանգները հայտարարեց աշխարհի ժողովրդավարական շարժումներին աջակցելու ծրագրի մասին: ԱՄՆ նախկին նախագահ Ջորջ Բուշը 2004 թ. հունվարի 20-ին՝ ԱՄՆ Կոնգրեսում իր ամենամյա ելույթի ժամանակ, հայտարարեց. «Ամերիկան մի երկիր է, որն առաքելություն ունի, և այդ առաքելությունը բխում է նրա հիմնարար սկզբունքներից: Մենք նպատակ չունենք տիրելու ողջ աշխարհին, մենք դրան չենք ձգտում, մենք չենք ձգտում կայսրության ստեղծման: Մեր նպատակը ժողովրդավարական աշխարհի ստեղծումն է, աշխարհ, որը հիմնված է բոլոր մարդկանց իրավունքի և արժանապատվության հարգման վրա: Մեր մեծ երկիրը կգլխավորի ազատության համար մղվող պայքարը ողջ աշխարհում»⁸⁴:

Արդեն 2005 թ. հունվարին՝ նախագահի պաշտոնի 2-րդ երդմնակալության ժամանակ, Բուշը հայտարարեց. «Բռնատիրությունը վերացնելու նպատակով բոլոր ժողովուրդների ու մշակույթների ժողովրդավարական շարժումների ու հաստատությունների առաջընթացին աջակցելը ԱՄՆ քաղաքականությունն է»⁸⁵:

2005 թ. մայիսին՝ նախկին խորհրդային երկրներից Լատվիա և Վրաստան կատարած այցերից հետո, Բուշը հիշատակեց վերջին 1,5 տարվա ընթացքում տեղի ունեցած հեղափոխությունների շարքը. «Եվ դա միայն սկիզբն է: Մենք տեսնում ենք, թե ինչպես է ոտքի կանգնում նոր սերունդը, որի սրտում վառվում է ազատության կրակը, և նրանք կստանան այդ ազատությունը»⁸⁶:

Վրաստանի «վարդերի հեղափոխությունից», Ուկրաինայի «նարնջագույն հեղափոխությունից», Դրոլդստանի «կակաչների հեղափոխությունից» հետո պետությունների ներքին գործերին մի-

⁸⁴ <http://www.whitehouse.gov/speeches>, դիտվել է 04.04.2016:

⁸⁵ Նույն տեղում:

⁸⁶ Նույն տեղում:

ջամտելու՝ ԱՄՆ-ին ուղղված մեղադրանքներն ավելի հասցեական դարձան: Մասնավորապես, այդ մեղադրանքներն ուղղված էին «Բաց հասարակություն» բարեգործական հիմնադրամի նախագահ Ջորջ Սորոսի դեմ, որին երկրների պաշտոնական արված դեկավարները և մերձկրեմլյան շրջանակները մեղադրում էին «նարնջագույն հեղափոխությունները» ֆինանսավորելու մեջ: Ինքը՝ Սորոսը, «Ազատություն» ռադիոկայանին տված հարցազրույցում այսպես է պատասխանել այդևայլ մեղադրանքներին. «Իմ դերը «գունավոր հեղափոխությունների» գործում սխալ է ընկալվել և մեծապես չարաշահվել է Պուտինի և մյուսների կողմից, օրինակ՝ Շևառնաձեի, որոնք գերադասեցին մեղադրել ինձ «գունավոր հեղափոխություններ» կազմակերպելու համար, ընդունելու փոխարեն այն փաստը, որ ժողովուրդն է տապալել ռեժիմը Վրաստանում: Իմ դերը շատ ավելի սահմանափակ էր: Ես հաստատություններ ունեմ այդ երկրներում, և այդ հաստատություններն են աջակցում ժողովրդավարության զարգացմանը»⁸⁷: Միաժամանակ Սորոսը պնդում էր, որ մարդու իրավունքների պաշտպանությունը քաղաքական խնդիր էր, ուստի և այն բախվելու էր ավտորիտար և տոտալիտար կառավարությունների քաղաքական շահերի հետ. «Այն, ինչ տեղի է ունենում պետությունների ներսում, կարևոր է ինչպես նրանց հարևանների, այնպես էլ ողջ աշխարհի համար: Ազատության և ժողովրդավարության ամրապնդումը նշված միավորումներում և դրանցից դուրս պետք է դիտվի որպես կարևորագույն քաղաքական նպատակ: Այլ երկրների ներքին գործերին միջամտելը կապված է լուրջ բարդությունների հետ, սակայն չմիջամտելը կարող է նույնիսկ ավելի վտանգավոր լինել»⁸⁸:

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների խնդիրն աստիճանաբար ԱՄՆ-ի համար վերածվում էր գլոբալ աշխարհաքաղաքական խնդրի, ինչի լուծումը բարդ, տևական և հետևողական աշխատանք էր պահանջում: Այդ իրավունքների արդյունավետ պաշտպանությունն իրականացնելու համար հարկ էր նախևառաջ ունենալ ամբողջական և լիարժեք տեղեկատվություն պետություններում մար-

⁸⁷ Atlantic Monthly, January 1998, p. 28.

⁸⁸ Նույն տեղում:

դու իրավունքների պաշտպանության կամ դրանց ոտնահարումների վիստերի մասին:

(6) 2.2. ԱՄՆ պետքարտուղարության զեկույցները մարդու իրավունքների ոլորտում ամերիկյան աջակցությունը նախկին խորհրդային երկրների ժողովրդավարացմանը

1976 թ. ԱՄՆ Կոնգրեսը «Արտաքին քաղաքական օգնության ակտ» օրենքում կատարեց 502-րդ ուղղումը (բիլ), համաձայն որի՝ ԱՄՆ պետքարտուղարը յուրաքանչյուր տարվա փետրվար ամսին Կոնգրեսին պետք է ներկայացներ աշխարհում մարդու՝ միջազգայնորեն ընդունված իրավունքների մասին հաշվետվություն: ԱՄՆ արտաքին քաղաքական գերատեսչությունը սկսեց հրապարակել աշխարհում մարդու իրավունքների ամենամյա զեկույցները: Դրանք հրապարակվում էին յուրաքանչյուր տարվա փետրվարի 28-ին: Առաջին մյուս զեկույցը ԱՄՆ պետքարտուղարությունը հրապարակվեց 1977 թ.: Չեկույցն ընդգրկում էր 82 պետություններ. այն երկրները, որոնք կա՛ն ԱՄՆ-ից տնտեսական օգնություն էին ստանում, կա՛ն ՄԱԿ-ի անդամ էին, այսինքն՝ միացել էին ՄԱԿ-ի ընդունած Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրին: Հետագայում ԱՄՆ Կոնգրեսն ընդլայնեց պետքարտուղարության մանդատը մարդու իրավունքների զեկույցների առումով՝ ավելացնելով հետազոտվող երկրների թիվը: 2004 թ. զեկույցում ներառված երկրների թիվը հասավ առավելագույն սահմանին՝ 197-ի:

Չեկույցներն ընդգրկում են մարդու քաղաքացիական և քաղաքական իրավունքների ոլորտները, ներառյալ խոսքի և մամուլի ազատությունը, իշխանություն ձևավորելու քաղաքացիների հնարավորությունները, կրոնական ազատությունները, սոցիալական իրավունքները, ինչպես նաև կառավարությունների պարտավորությունների իրականացման քայլերն այդ իրավունքների պաշտպանության ոլորտներում: Հետագայում այդ ոլորտներն աստիճանաբար ընդլայնվեցին: 1986 թ. զեկույցում առաջին անգամ առանձին գլուխներ հատկացվեցին կանաց, երեխաների, հաշմանդամների, բնիկ ժողո-

վորդների իրավունքներին, իսկ 1993 թ. նոր գլուխներ ավելացան, որոնք վերաբերում էին ազգային, ռասայական, էթնիկ խմբերի իրավունքներին, իսկ 2004 թ. ևս երեք խումբ ավելացավ՝ թափանցիկություն և կոռուպցիա, հակասեմիտիզմ և սեռական կողմնորոշման խտրականություն:

Այդ զեկույցների պատրաստման համար տվյալ երկրում ԱՄՆ դեսպանատունը հասարակական-քաղաքական շրջանակներից հավաքում է ողջ տեղեկատվությունը, ներառյալ պետական համակարգը, մամուլը, մարդու իրավունքների պաշտպանության հասարակական կազմակերպությունները, գիտական-ակադեմիական շրջանակները, զանազան ակտիվիստները: Այնուհետև այդ տեղեկատվության մանրագին ստուգումից հետո ԱՄՆ դեսպանատունը այն ուղարկում է պետքարտուղարության Ժողովրդավարության, մարդու իրավունքների և աշխատանքի բյուրո (Bureau of Democracy, Human Rights and Labor – DRL): Այդ բյուրոն իր հերթին սկսում է խորհրդակցել ԱՄՆ պետքարտուղարության այլ բյուրոների հետ զեկույցի վերջնական պատրաստման շուրջ: Ավարտում տեսքի բերելուց հետո ԱՄՆ պետքարտուղարության՝ «Մարդու իրավունքների մասին» ամենամյա զեկույցն ուղարկվում է Կոնգրեսի համապատասխան հանձնաժողովին: Բոլոր զեկույցները տեղադրվում են պետքարտուղարության կայքում:

Հիշյալ զեկույցները կազմելիս պաշտոնական Վաշինգտոնը, ի դեմս պետքարտուղարության, հետապնդում է մի քանի նպատակներ՝

- հետևել մարդու իրավունքների պաշտպանությանը և աջակցել դրանց,
- առավել արդյունավետ դարձնել դիվանագիտական աշխատանքները, արտաքին քաղաքականությունն ընդհանրապես,
- օգնություն հատկացնելիս կամ այլ միջոցներ տրամադրելիս նկատի ունենալ զեկույցում առկա տեղեկատվությունը⁸⁹:

Պետքարտուղարությունը պատրաստում և հրապարակում է նաև իր ամենամյա միջոցառումների ծրագիրը՝ «Միացյալ Նահանգ-

⁸⁹ <http://www.usa.state.gov> International Religious Freedom Report 2008, Released by the Bureau of Democracy, Human Rights, and Labor, դիտվել է 21.04.2016:

ների գործունեությունը մարդու իրավունքների և ժողովրդավարության աջակցման ասպարեզում»։ Այն հրապարակվում է յուրաքանչյուր տարվա մարտի 25-ին։ 2006 թ. ամենամյա զեկույցի նախաբանը հավաստում է. «Այսօր աշխարհում օրըստօրե ավելի ու ավելի շատ կանայք ու տղամարդիկ են պահանջում, որպեսզի հարգեն իրենց իրավունքները, կառավարությունն արձագանքի նրանց կարիքներին, նրանց ձայնը լսելի լինի, նրանց քվեները հաշվի առնեն, ու լինեն արդար օրենքներ ու արդարություն բոլորի համար։ Խորանում է մաս այն գիտակցումը, որ ժողովրդավարությունն է կառավարման այն ձևը, որը ժամանակի ընթացքում կկարողանա ապահովել քաղաքացիների արժանապատվության, ազատության և հավասարության պահանջները»⁹⁰։

Պետքարտուղարության զեկույցներն անդրադառնում են մաս նախկին խորհրդային երկրներում ժողովրդավարության, ազատության և մարդու իրավունքների ոլորտներում առկա իրավիճակին։ Նախկին ԽՍՀՄ յուրաքանչյուր տարածաշրջանում ԱՄՆ-ն ունի աշխարհաքաղաքական հետաքրքրություններ, այդ թվում՝ մաս նախկին Անդրկովկասի երկրներում։

Խորհրդային Միության փլուզումից կարճ ժամանակ անց ամերիկյան կառավարությունը սկսեց օգնության տրամադրումը այդ երկրներին։ 1992 թվականից ի վեր նախկին ԽՍՀՄ երկրներին ընդհանուր առմամբ հատկացվել է ավելի քան 28 միլիարդ դոլարի օգնություն։ Օգնությունը հատկացվում է ԱՊՀ 12 պետությունների։

Տնտեսական և այլ կարգի օգնություն ցուցաբերելով նախկին խորհրդային երկրներին՝ ամերիկյան կառավարությունը հետևյալ 5 նպատակներն էր հետապնդում.

1. դյուրին և անցցում դարձնել անցումը ավտորիտարիզմից ժողովրդավարությանը,

⁹⁰ Bureau of Democracy, Human Rights, and Labor, դիտվել է 21.04.2016: <http://www.usa.state.gov>; Order Code RL32866 -U.S. Assistance to the Former Soviet Union, March 1, 2007, Curt Tarnoff- Specialist in Foreign Affairs Foreign Affairs, դիտվել է 21.04.2016:

2. աջակցել ազատական տնտեսության, շուկայական հարաբերությունների կայացմանը,

3. օգնել միջուկային, քիմիական, կենսաբանական զենքերի վերահսկմանը,

4. աջակցել ահաբեկչության դեմ պայքարին,

5. հումանիտար օգնություն ցուցաբերել ԽՍՀՄ փլուզումից հետո պարենային անբավարարություն ունեցող երկրներին⁹¹:

Նախկին խորհրդային երկրներին հատկացվող ամերիկյան տնտեսական օգնության մեջ ժողովրդավարական հաստատությունների կայացման ֆինանսական չափաբաժինը տարեցտարի աճ է արձանագրել՝ սկզբնապես կազմելով ընդհանուր օգնության 15 տոկոսը, 2003 թ. այն հասել է 34 տոկոսի, սակայն 2006 թ. օգնության ծավալները սկսել են նվազել՝ կազմելով 30 տոկոս: Արդեն 2007 թ. ժողովրդավարական ինստիտուտներին հատկացվող ամերիկյան օգնության ծավալները սկսել են կտրուկ նվազել: Օգնության ծավալների նվազման միտումը կարող է ունենալ հետևյալ բացատրությունը. կա՛մ ԱՄՆ-ն գտնում է, որ ժողովրդավարությունը կայացել է, կա՛մ, ընդհակառակը, այն շարունակում է մնալ չկայացած, և ամերիկյան ֆինանսներն ի գործու չեն մպաստելու ժողովրդավարության հաստատմանը:

Այնուամենայնիվ, XX դարի վերջին տասնամյակում աշխարհի քաղաքական քարտեզի փոփոխություններից հետո ևս Միացյալ Նահանգները շարունակում է լրջորեն հետևել նախկին ԽՍՀՄ հանրապետություններում ժողովրդավարական հաստատությունների շուրջ տիրող իրավիճակին:

⁹¹ Տե՛ս <http://www.usa.state.gov>; Order Code RL32866 -U.S. Assistance to the Former Soviet Union, March 1, 2007, Curt Tarnoff- Specialist in Foreign Affairs Foreign Affairs, դիտվել է 21.04.2016:

(6) 2.3. ԱՄՆ պետքարտուղարության զեկույցները Հայաստանում և Վրաստանում մարդու իրավունքների մասին (2007 թ. և 2016 թ.)

ԽՍՀՄ փլուզումից կարճ ժամանակ անց անդրկովկասյան տարածաշրջանը ևս հայտնվեց ամերիկյան աշխարհաքաղաքական հետաքրքրությունների շրջանակում՝ ստանալով նոր ձևակերպումներ՝ Եվրասիա, Հարավային Կովկաս: Ներկայումս ԱՄՆ պետքարտուղարության «Մարդու իրավունքների մասին» ամենամյա զեկույցներում Հարավային Կովկասի պետություններն ընդգրկված են «Եվրոպա և Եվրասիա» բաժնում: Եվ ինչպես մնացյալ երկրների, այնպես էլ հարավկովկասյան պետությունների մասին 2008 թ. փետրվարին ԱՄՆ պետքարտուղարությունը հրապարակեց Մարդու իրավունքների ամենամյա՝ 2007 թ. զեկույցը: Այն անդրադառնում է նախորդ տարվա՝ 2006 թ. Հայաստանում մարդու իրավունքների ոլորտում առկա խնդիրներին, ավելի որոշակի՝ հետևյալ ոլորտներին՝ անձի անձեռնմխելիությանը (կամայական կամ անօրինական ձևով կյանքից զրկելը, խոշտանգումներ, բանտերի և կալանավայրերի պայմաններ, ոստիկանության և անվտանգության մարմինների խնդիրներ, ձերբակալություններ և կալանք, արդար դատավարություն, քաղաքական բանտարկյալներ և կալանավորներ, քաղաքացիական դատավարություն և դատական պաշտպանություն, մամակագրության գաղտնիություն), խոսքի և մամուլի, հավաքներ կազմակերպելու, տեղաշարժվելու ազատությանը, փախստականների պաշտպանությանը, իշխանափոխություն կատարելու քաղաքացիների իրավունքին, կառավարման ոլորտում առկա կոռուպցիային, միջազգային կազմակերպությունների կողմից մարդու իրավունքներին վերաբերող խախտումների հետաքննությանը, մարդկանց թրաֆիքինգին, երեխաների, հաշմանդամների, ազգային փոքրամասնությունների, աշխատողների իրավունքներին:

Հարկ է նշել, որ ԱՄՆ պետքարտուղարությունը յուրաքանչյուր տարի «Մարդու իրավունքների մասին» զեկույցների հետ հրապարակում է նաև «Կրոնական ազատությունների մասին միջազգային զեկույց», որն անդրադառնում է տվյալ երկրում կրոնական ժո-

ղովրդագրությանը, ոլորտը կարգավորող օրենսդրությանը, կրոնական ազատությունների սահմանափակմանը, կրոնական ազատության չարաշահմանը: «Կրոնական ազատությունների հարցը ԱՄՆ կառավարությունը դիտարկում է մարդու իրավունքների ապահովման համատեքստում»⁹², – նշված է հիշյալ զեկույցում:

Հարավկովկասյան պետությունների, ի մասնավորի՝ Հայաստանի և Վրաստանի մասին Մարդու իրավունքների 2007 թ. զեկույցներում կան ոլորտում առկա խնդիրների շուրջ թե՛ նմանություններ, նույնօրինակ մտահոգություններ, թե՛ էական տարբերություններ: Մարդու իրավունքների առումով հարավկովկասյան պետություններում ամենամտահոգիչ իրավիճակը, ըստ զեկույցների, առկա է Ադրբեյջանում:

Հայաստանի մասին 2007 թ. զեկույցի հենց նախաբանում Վաշինգտոնի գնահատականը վկայում է, որ ոլորտում առկա խնդիրների լուծման ճանապարհին առաջընթաց չկա. «Մարդու իրավունքների ոլորտում կառավարության գործունեությունը շարունակում է մնալ անբավարար, և դեռ եղել են լուրջ խնդիրներ: Երկրի քաղաքացիները չեն կարողացել ազատորեն փոխել իշխանություններին: Իշխանությունները ծեծի են ենթարկել նախնական կալանքի տակ գտնվողներին, ազգային անվտանգության և ոստիկանության ուժերը գործել են անպատժելիորեն, կատարվել են կամայական ձերբակալություններ և կալանավորումներ, բանտերը եղել են ծանրաբեռնված ու անառողջ պայմաններով, չնայած կամաց-կամաց բարելավվում են: Իշխանությունների կողմից եղել են սահմանափակումներ քաղաքացիների անձնական կյանքի անձեռնմխելիության, մամուլի և հանրահավաքների ազատության մասով: Լրագրողները շարունակել են զբաղվել ինքնագրաքննությամբ»⁹³, – նշված է 2007 թ. զեկույցի նախաբանում, որն անդրադառնում է նախորդ տարվա իրավիճակին:

⁹² <http://www.usa.state.gov> International Religious Freedom Report 2008, Released by the Bureau of Democracy, Human Rights, and Labor, դիտվել է 21.04.2016:

<http://www.usa.state.gov>; Order Code RL32866 -U.S. Assistance to the Former Soviet Union, March 1, 2007, Curt Tarnoff- Specialist in Foreign Affairs Foreign Affairs, դիտվել է 21.04.2016:

⁹³ Տե՛ս ԱՄՆ Սպիտակ տան պաշտոնական կայքէջ, <http://www.usa.state.gov>; countries reports, 2007, Armenia, դիտվել է 11.03.2013:

Հարավկովկասյան մյուս պետության՝ Վրաստանին վերաբերող 2007 թ. զեկույցի նախաբանում նշված է. «Մարդու իրավունքների պաշտպանության առումով կառավարության գործունեության ցուցանիշները մի շարք ոլորտներում տարվա ընթացքում բարելավում են արձանագրել, սակայն ետընթաց են արձանագրել այլ ոլորտներում: Նկատվել են օրենքի ծայրահեղ կիրառման, խոշտանգումների և խտրականության դեպքեր, ոստիկանների անօրինական գործողությունների անպատժելիություն, դատարանների վրա կառավարության կողմից գործադրվող ճնշումներ: Անկում է ապրել խոսքի ազատության հանդեպ հարգանքը: Նկատվել են նաև դրական գործընթացներ. կառավարությունը ձեռնամուխ է եղել դատաիրավական ոլորտի լայնածավալ բարեփոխումների իրականացմանը»⁹⁴:

Զեկույցների առաջին մասն ընդգրկում է անձի անձեռնմխելիության ոլորտը: Ե՛վ Հայաստանի, և՛ Վրաստանի դեպքում հիշատակվում է երկրի օրենսդրությունը, որն արգելում է խոշտանգումները և անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքը: Միաժամանակ Հայաստանի մասին զեկույցում նշվում է. «Պետական անվտանգության մարմինների կողմից դրանք կիրառվել են: Ոստիկանության կուպիտ վերաբերմունքին առնչվող դեպքերի գերակշիռ մասը հաշվեհարդարի վախից չի գրանցվել: Ոստիկանության ձեռքակալած և կալանավորված անձանց պահման վայրերից բանտեր տեղափոխված անձանց կեսից ավելին հայտնել են, որ իրենց հանդեպ եղել են բռնություններ, նրանք ենթարկվել են խոշտանգումների կամ սահբեկվել են: Հիմնական պատճառը խոստովանություն կորզելն է»⁹⁵: Հիշատակվում են կոնկրետ փաստեր, մասնավորապես՝ Լևոն Գուլյանի մահվան հասարակական մեծ հնչելություն ստացած դեպքը և դրան առնչվող մանրամասները: Զեկույցում հիշատակվում են նաև այլ փաստեր, մասնավորապես՝ Լոռու մարզի գլխավոր դատախազի սպանությունը:

Նմանօրինակ փաստեր են հիշատակվում նաև Վրաստանի մասին զեկույցում: Մասնավորապես, հիշատակվում է 2006 թ. ապրիլին

⁹⁴ <http://www.usa.state.gov>, countries reports, 2007, Georgia, դիտվել է 14.03.2013:

⁹⁵ <http://www.usa.state.gov>, countries reports, 2007, Armenia, դիտվել է 11.03.2013:

Վրաստանի թիվ 5 բանտում բանտարկյալների խռովությունը ճնշելու համար ոստիկանների կողմից հրազենի օգտագործումը և 7 բանտարկյալների մահը: Սակայն ի տարբերություն Հայաստանի իրավապահների՝ Վրաստանում հասարակական հնչեղություն ստացած գործերը, որպես կանոն, բացահայտվում են և մեղավորները պատժվում են⁹⁶:

Անդրադառնալով Հայաստանում կոռուպցիայի խնդրին՝ զեկույցն ընդգծում է. «Կոռուպցիան լայն տարածում ունի բոլոր մակարդակներում և բոլոր ոլորտներում: Համաշխարհային բանկի՝ աշխարհով մեկ կառավարման ցուցանիշներն արտացոլում են, որ կոռուպցիան եղել է լուրջ խնդիր: Կոռուպցիայի դեմ պայքարին ուղղված կառավարության ծրագրերը տարվա ընթացքում մեծապես անգործունակ վիճակում են գտնվել»⁹⁷:

Չեկույցն անդրադառնում է նաև ՀՀ ոստիկանության և անվտանգության համակարգում առկա կոռուպցիայի խնդրին՝ համարելով այն խնդրահարույց: Ինչ վերաբերում է դատական համակարգին, ապա «օրենքը սահմանում է անկախ դատական համակարգ: Չնայած 2006 թ. ընթացքում ձեռնարկված կառուցվածքային փոփոխությունները հանգեցրել են դատական անկախության որոշակի մեծացմանը, դատարանները շարունակում են ենթարկվել գործադիր օղակի քաղաքական ճնշումներին, իսկ դատական կոռուպցիան մնում է լուրջ խնդիր»⁹⁸:

Ոստիկանության կողմից պաշտոնեական դիրքի չարաշահման բազմաթիվ փաստեր կան նաև Վրաստանի մասին զեկույցում, սակայն առկա են նաև նրանց պատժի մասին հաղորդումներ: Վրաստանում 2006 թ. ընթացքում 413 ոստիկանության սպա ստացել է վարչական պատիժ, 271-ը հեռացվել է աշխատանքից, 37-ի հանդեպ քրեական գործ է հարուցվել⁹⁹:

⁹⁶ Տե՛ս <http://www.usa.state.gov>; countries reports, 2007, Georgia, դիտվել է 14.03.2013:

⁹⁷ <http://www.usa.state.gov>; countries reports, 2007, Armenia, դիտվել է 11.03.2013:

⁹⁸ <http://www.usa.state.gov>; countries reports, 2007, Armenia, դիտվել է 11.03. 2013:

⁹⁹ Տե՛ս <http://www.usa.state.gov>; countries reports, 2007, Georgia, դիտվել է 14.03.2013:

Հայաստանում վիճակագրությունը հետևյալն է. վարչական տույժ է կիրառվել 23 ոստիկանի նկատմամբ, որից 21-ը հեռացվել է աշխատանքից: Հարուցվել է 13 քրեական գործ, դատապարտվել է 9 մարդ¹⁰⁰:

Այս համեմատական վիճակագրությունը վկայում է, որ Վրաստանում պայքարը պետական մարմիններում առկա կոռուպցիայի դեմ անհամեմատ ավելի արդյունավետ և հետևողական եղել, քան Հայաստանում: Մինչդեռ կոռուպցիայի բարձր մակարդակը մարդու իրավունքների պաշտպանության, ժողովրդավարության կայացման համար լուրջ խոչընդոտ է, որի դեմ հետևողական, ոչ իմիտացիոն բնույթի պայքարը նպաստում է ժողովրդավարության կայացմանը:

Պետքարտուղարության զեկույցի «Քաղաքական բանտարկյալներ և կալանավորներ» բաժնում Հայաստանի մասով հիշատակվում են Ժիրայր Սեֆիլյանի, Վարդան Մալխասյանի, Ալեքսանդր Արզումանյանի, Արման Բաբաջանյանի ազգանունները: Վրաստանում «խղճի կալանավոր» էր ընդդիմության առաջնորդ Իրակլի Բաղիշվիլին, որն ազատ արձակվեց նախագահ Սահակաշվիլու երդման արարողության նախաշեմին՝ դեկտեմբերի 13-ին:

Միջազգային կազմակերպությունների՝ մարդու իրավունքներին առնչվող զեկույցներում առանձնակի տեղ են զբաղեցնում խոսքի և մամուլի ազատության խնդիրները: ԱՄՆ պետքարտուղարության զեկույցը ևս անդրադառնում է այս ոլորտում տիրող իրավիճակին՝ Հայաստանի մասով արձանագրելով. «Սահմանադրությամբ ամրագրվում է խոսքի և մամուլի ազատությունը, սակայն գործնականում կառավարությունը, ընդհանուր առմամբ, չի հարգել այս իրավունքները: Գրանցվել են բռնության, ահաբեկման և ինքնագրաքննության դեպքեր մամուլում», մասնավորապես, հիշատակվում են «Գալա» հեռուստաընկերությունում հարկային ստուգումները¹⁰¹:

Ինչ վերաբերում է հավաքներ կազմակերպելու ազատությանը, ապա Հայաստանի դեպքում ևս հիշատակելով հավաքներ կազմակերպելու սահմանադրական իրավունքը՝ զեկույցն անդրադառնում է

¹⁰⁰ Տե՛ս <http://www.usa.state.gov>; countries reports, 2007, Armenia, դիտվել է 12.03.2013:

¹⁰¹ Նույն տեղում:

դրա սահմանափակման դեպքերին, մասնավորապես 2006 թ. հոկտեմբերի 23-ին Լևոն Տեր-Պետրոսյանի գլխավորած ընդդիմության երթին, ոստիկանության կողմից ուժի և արցունքաբեր գազի կիրառմամբ երթը ցրելուն, մարզերում ընդդիմադիր քաղաքական ուժերին հավաքներ կազմակերպելու համար դահլիճներ չտրամադրելուն և այլն:

Հայաստանի համար լուրջ խնդիր է նաև թրաֆիքինգը. «Երկիրը հանդիսացել է կանանց և աղջիկների թրաֆիքինգի սկզբնաղբյուր ու տարանցիկ երկիր՝ հիմնականում սեռական, իսկ առավել սակավաթիվ դեպքերում՝ նաև աշխատանքի շահագործման նպատակով»¹⁰²:

Անդրադառնալով Վրաստանում թրաֆիքինգի վիճակին՝ զեկույցն արձանագրում է, որ մինչ կառավարությունը օրենքներ է մշակում թրաֆիքինգի դեմ պայքարն արդյունավետ դարձնելու համար, ոստիկանության միջին օղակներում կան թրաֆիքինգի կազմակերպման մեջ ներգրավված մարդիկ¹⁰³:

Մարդու իրավունքների և ազատությունների այլ սահմանափակումներ ևս առկա են զեկույցում: Իրավունքների պաշտպանության ոլորտներում Հայաստանի ցուցանիշները շարունակում են մնալ ցածր. հանգամանք, որն էապես խանգարում է Հայաստանում ժողովրդավարական հաստատությունների կայացմանը:

Վրաստանում սահմանափակումներ են արձանագրվել մամուլի և խոսքի ազատության ոլորտներում: Որպես անկախ և հանրային ճանաչում ունեցող հեռուստաընկերություններ առանձնացվում են «Ռուսթավի 2»-ը և «Իմեդի»-ն: Հիշատակվում են «Իմեդի» գործունեության սահմանափակումները: Իշխանությունները հեռուստաընկերությանը մեղադրում էին գործարար Բադրի Պատարկաշվիլու հեղաշրջման փորձին աջակցելու մեջ: Որոշակի ընդհատումներից հետո «Իմեդի» վերականգնել է հեռարձակումը¹⁰⁴:

Ինչ վերաբերում է հավաքների ազատությանը, ապա ինչպես Հայաստանի, այնպես էլ Վրաստանի դեպքում հիշատակվում են

¹⁰² [http://www.usa.state.gov/countries/reports, 2007, Armenia](http://www.usa.state.gov/countries/reports/2007/Armenia), դիտվել է 11.03.2013:

¹⁰³ Տե՛ս [http://www.usa.state.gov/countries/reports, 2007, Georgia](http://www.usa.state.gov/countries/reports/2007/Georgia), դիտվել է 14.03.2013:

¹⁰⁴ Նույն տեղում:

դրանց օրենսդրական ապահովման հնարավորությունները և կիրառման սահմանափակումները: Վրաստանի մասին զեկույցում հատուկ ուշադրություն է դարձվել Աբխազիայում մարդու իրավունքների պաշտպանության խնդիրներին:

Հաջորդ խնդիրը, որն արծարծվել է ԱՄՆ պետքարտուղարության զեկույցում, ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանությունն է: Եթե Հայաստանի դեպքում նման խնդիրներ գրեթե չկան, ապա Վրաստանում վիճակն այս առումով մտահոգիչ է: Բնականաբար, տարբերությունները նախևառաջ պայմանավորված են, մի կողմից, Հայաստանի միատարրությամբ, մյուս կողմից՝ Վրաստանում էթնիկ փոքրամասնությունների մեծ թվաքանակով: Վրաստանում ազգային փոքրամասնությունների իրավունքների հիմնական մտահոգությունն առնչվում է վրացերենի իմացության պարտադրանքին: Այս առումով առանձնացվում է Ախալքալաքը, որտեղ հոծ ապրող տեղաբնակ հայերը բողոքում են այդ պարտադրանքից:

Մարդու իրավունքների առումով ԱՄՆ պետքարտուղարության ծավալում զեկույցում քննարկվում են ոլորտին առնչվող այլ խնդիրներ ևս:

Եթե այս խնդիրները քննարկենք ԱՄՆ պետքարտուղարության նախորդ տարիների զեկույցների համատեքստում, ապա ակնհայտ է, որ Հարավային Կովկասի պետություններում ժողովրդավարական հաստատությունների կայացման ճանապարհին առկա են չհաղթահարված բազում խոչընդոտներ, որոնց մի մասն ունի առարկայական հիմքեր, մյուս հատվածը ոչ միայն արհեստական է, այլև կառավարությունն ինքն է հարուցում դրանք: Հատկապես Հայաստանի դեպքում նկատելի է իշխանությունների անբավարար կամքը՝ կայացնելու ժողովրդավարական հաստատությունները, նպաստելու մարդու իրավունքների պաշտպանությանը: Վրաստանում, հատկապես վերջին տարիներին, այդ ոլորտներում նկատելի են վայրիվերումներ՝ վերելք-վայրէջք հերթագայությամբ, ինչը թերևս կարելի է բացատրել այն հանգամանքով, որ կառավարությունը պետական-հասարակա-

կան անվտանգության ապահովման պատրվակով երբեմն գերազանցում է իր լիազորությունները:

Եթե դիտարկենք ԱՄՆ պետքարտուղարության՝ «Մարդու իրավունքների մասին» զեկույցները 2007 թ. հաջորդող հետագա ինը տարիների կտրվածքով, ապա ակնհայտ է դառնում, որ չնայած մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների ոլորտում առկա որոշ առաջընթացին, Հայաստանի և Վրաստանի արձանագրած արդյունքներին, այնուամենայնիվ հատկապես Հայաստանում մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների ապահովման խնդիրը շարունակում է մնալ խնդրահարույց:

Այսպես՝ ԱՄՆ պետքարտուղարության՝ «Մարդու իրավունքների մասին (Հայաստան) 2016 թ. մարտի 3-ին հրապարակած զեկույցը գնահատում և ամփոփում է 2015 թ. մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների ոլորտում առկա հայաստանյան իրավիճակը: Ծավալուն անդրադարձ կատարելով խոսքի և մամուլի ազատության խնդիրներին՝ զեկույցն ընդգծում է, որ ՉԼՄ-ների գերակշիռ մասը, Հայաստանում պատկանելով մասնավոր անձանց՝ «արտացոլել են իրենց սեփականատերերի կամ ֆինանսական հովանավորների քաղաքական դիրքորոշումները, որոնք էլ իրենց հերթին հաճախ իշխանական օղակներին մոտ կանգնած անձինք են: Տպագիր ու հեռարձակող լրատվամիջոցներում բացակայել է քաղաքական կարծիքների բազմազանությունը, իսկ հեռուստաընկերությունների գերակշիռ մասն արտացոլել են իշխանությունների դիրքորոշումները: Խնդրահարույց էր ինքնագրաքննությունը»¹⁰⁵:

ԱՄՆ պետքարտուղարության՝ «Մարդու իրավունքների մասին» (Վրաստան) 2016 թ. մարտին հրապարակած զեկույցն ամփոփում է 2015 թ. ոլորտում առկա իրավիճակը Վրաստանի դեպքում: Անդրադառնալով Վրաստանում խոսքի և մամուլի ազատության խնդիրներին՝ նշված զեկույցը մատնանշում է մեղիա ընկերությունների սեփականատերերի կողմից ՉԼՄ-ների խմբագրական քաղաքականությամբ միջամտելու մի քանի դեպքեր: Որպես խոսքի և մամուլի ազատու-

¹⁰⁵ https://am.usembassy.gov/wp-content/uploads/sites/92/2017/04/hr2016_armpdf, դիտվել է 19.11.2017:

թյան սահմանափակման միակ փաստ զեկույցում հիշատակվում են «Ռուսաթվի 2» հեռուստաընկերության սեփականատերերի հանդեպ ուղղորդված դատաքննության և գործադիր իշխանության կողմից այդ դատաքննությանը կոշտ միջամտության փաստերը¹⁰⁶։ Ի տարբերություն Հայաստանի, որտեղ, ըստ զեկույցի, լրագրողների հանդեպ բռնությունների փաստերը հաճախադեպ են և բազմաթիվ, Վրաստանում 2015 թ. արձանագրվել են նման միայն մեկ դեպք և մեկ բանավոր սպառնալիք։ Վրաստանի դեպքում զեկույցը, ընդգծելով երկրում բազմակարծության ապահովման չսահմանափակվող հնարավորությունները, միաժամանակ նշում է նաև վրացական ՁԼՄ-ների քաղաքական բևեռացվածությունը։

Ե՛վ Հայաստանի, և՛ Վրաստանի դեպքում ԱՄՆ պետքարտուղարության զեկույցներն ընդգծում են համացանցի հասանելիությունը, սոցիալական ցանցերի մատչելիությունը։ Հայաստանի մասին 2016 թ. զեկույցն ընդգծում է. «Իշխանությունները, ընդհանուր առմամբ, չեն վերահսկել առցանց լրատվամիջոցների բովանդակությունը, որը սոցիալական ցանցերի հետ միասին հանդիսացել է այլընտրանքային լրատվության կարևոր աղբյուր։ Ի տարբերություն հեռարձակող լրատվամիջոցների՝ առցանց լրատվամիջոցները և սոցիալական հարթակները ներկայացրել են բազմազան քաղաքական դիրքորոշումներ»¹⁰⁷։

Վրաստանի դեպքում հիշատակվում է համացանցի և էլեկտրոնային մամուլագրության վերահսկողության մեկ դեպք։ 2015 թ. ապրիլին Վրաստանի Սահմանադրական դատարանը որոշում ընդունեց, համաձայն որի՝ առանց դատարանի որոշման կառավարության կողմից անձնական կյանքին հետևելն անօրինական է։ ՄԳ որոշմամբ արգելվել է իշխանության միջամտությունը համացանցի հասանելիությանը։ Միաժամանակ ՁԼՄ-ները հաղորդել են, որ կառավարությունն անտեսում է այդ արգելքը և վերահսկում է քաղաքական

¹⁰⁶ Տե՛ս <https://2009-2017.state.gov/documents/organization/253061.pdf>, դիտվել է 19.11.2017:

¹⁰⁷ <https://2009-2017.state.gov/documents/organization/253031.pdf>, դիտվել է 19.11.2017:

ընդդիմության էլեկտրոնային մամակագրությունը և նրա գործունեությունը համացանցով¹⁰⁸:

Ինչ վերաբերում է հանրահավաքների ազատությանը, ապա Հայաստանի դեպքում իրավիճակը գնահատվում է այսպես. «Վատացել է հանրահավաքների ազատության նկատմամբ հարգանքը: Իշխանությունները սահմանափակել են քաղաքական գործընթացին մասնակցելու ազատությունը և քաղաքական բազմակարծությունը»¹⁰⁹:

Ի տարբերություն Հայաստանի՝ Վրաստանում հավաքների ազատությունը հիմնականում սահմանափակումների չի ենթարկվում: Այս դեպքում միակ սահմանափակումը վերաբերում է հանրահավաքի մասին հինգ օր առաջ իրազեկելու պահանջին: Այս կարգը Հայաստանում վաղուց է կիրառվում:

Ձեկույցն անդրադառնում է նաև հայաստանյան ընտրական գործընթացներին և դրանցում իշխանության մարմինների միջամտությանը, ընտրակաշաքի և վարչական չարաշահումների դեպքերին: Ձեկույցի՝ «Ընտրություններ և քաղաքական մասնակցություն» բաժնի հիմնական անդրադարձը վերաբերում է 2015 թ. դեկտեմբերին Սահմանադրական հանրաքվեի ժամանակ տեղ գտած ընտրախախտումներին:

Վրաստանի դեպքում զեկույցն անդրադառնում է 2015 թ. հոկտեմբերին խորհրդարանի ընտրությունների երկու փուլերին: Հղում տալով ԵԱՀԿ ԺՄԻԳ-ի՝ այդ ընտրություններին տրված գնահատականներին, համաձայն որոնց՝ ընտրությունները եղել են մրցակցային՝ պահպանելով թեկնածուների իրավահավասարությունը, ԱՄՆ պետքարտուղարության՝ Վրաստանում մարդու իրավունքների մասին 2016 թ. զեկույցը մատնանշում է նաև վարչական ռեսուրսի կիրառման փաստեր, ինչպես նաև բռնարարքների կիրառման 38 դեպք, որոնց մի մասը, հատկապես Մառնեուլի շրջանում, ուղղված է եղել

¹⁰⁸ Տե՛ս <https://2009-2017.state.gov/documents/organization/253061.pdf>, դիտվել է 19.11.2017:

¹⁰⁹ <https://2009-2017.state.gov/documents/organization/253031.pdf>, դիտվել է 19.11.2017:

նաև միջազգային դիտորդների դեմ: Խախտումներ են արձանագրվել նաև քվեների հաշվման ընթացքում¹¹⁰:

Պետքարտուղարության՝ 2016 թ. զեկույցներն անդրադառնում են նաև կամայական ձերբակալությունների և խոշտանգումների դեպքերին: Վրաստանի դեպքում մասնավորապես հիշատակվում են 2015 թ. պաշտպանության համակարգի մի շարք բարձրաստիճան պաշտոնյաների կողմից ազատագրկվածների նկատմամբ իրականացրած խոշտանգումները՝ խոստովանություն կորզելու նպատակով: Վրաստանի դեպքում զեկույցում անդրադարձ կա 17 ազատագրկվածների մահվան դեպքերին, որոնք պահանջում էին վերանայել իրենց մասով դատարան վճիռները: Ջեկույցում լուրջ մտահոգություն է հայտնվում դատական վճիռների բողոքարկման կարգի, դրանց դեպքերի, արդարացի դատաքննության անցկացման վերաբերյալ¹¹¹:

Հայաստանի մասին ԱՄՆ պետքարտուղարության զեկույցը ևս անդրադառնում է կամայական ձերբակալությունների, դրանց ընթացակարգերի խախտումներին, ոստիկանության չարաշահումներին, բանտային պայմաններին, դատական համակարգի վրա գործադիր մարմնի կողմից գործադրված ճնշումներին՝ այդ ամենին տալով հիմնականում խիստ գնահատականներ:

Հայաստանի մասին զեկույցում ծավալուն և պարբերական անդրադարձ կա խաղաղ պայմաններում ՀՀ զինված ուժերում գրանցված մահվան դեպքերին: Մասնավորապես, հիշատակվում է Հովհաննես Պետրոսյանի մահվան դեպքը, «ու՜մ դիակը, գլխի հատվածում ստացված երկու հրազենային վնասվածքներով, գտել էին զինվորական բեռնատարի թափքում: Իրավասու մարմինները քրեական գործ հարուցեցին ինքնասպանության հասցնելու հատկանիշներով: Լրատվամիջոցներում տեղ գտած հարցազրույցների համաձայն՝ Պետրոսյանի ընտանիքը չէր հավատում ինքնասպանության վարկածին և պնդում էր, որ նրա մահը պայմանավորված էր զորա-

¹¹⁰ Տե՛ս <https://2009-2017.state.gov/documents/organization/253061.pdf>, դիտվել է 20.11.2017:

¹¹¹ <https://2009-2017.state.gov/documents/organization/253061.pdf>, դիտվել է 20.05.2017:

մասի սպաներից մեկի հետ ունեցած լարված հարաբերություններով, որին Պետրոսյանը, ըստ հաղորդումների, թույլ չէր տվել վառելիք գողանալ իրեն ամրակցված մեքենայից»¹¹²: Ջեկույցն ընդգծում է. «Արձանագրված այլ խնդիրները ներառել են զինված ուժերում ոչ մարտական պայմաններում գրանցված կասկածելի մահվան դեպքերը, սպաների և ծառայակից զինվորների կողմից զորակոչիկների հանդեպ նվաստացումները և վատ վերաբերմունքը, հաղորդումները ձերբակալությունների ու հարցաքննությունների ժամանակ ոստիկանության բռնի պահվածքի վերաբերյալ, դաժան ու գերբնակեցված բանտային պայմանները»¹¹³:

Ջեկույցը եզրահանգում է. «Միջադեպերի դեպքում իշխանությունները ներկայացնում են դեպքերի հոկված տարբերակները և հետագա քննությունը կենտրոնացնում են այդ նախնական վարկածը հաստատելու վրա: Անդրադառնալով մարդու իրավունքներին առնչվող մի շարք մտահոգիչ հարցերի՝ Եվրախորհրդի մարդու իրավունքների հարցերով հանձնակատար Նիլս Մուիթմիկսը մարտի 15-ի իր զեկույցում նշել էր, որ «ապշած էր այդ գործերի քննության հանդեպ գոհերի ընտանիքների և քաղաքացիական հասարակության անվստահության բարձր մակարդակից»¹¹⁴:

Հայաստանի մասին հաջորդ ծավալուն անդրադարձը վերաբերում է հուլիսի 17-ին «Սասնա ծռեր» զինված խմբի կողմից Երևանի ոստիկանության շենքի գրավմանը և դրան հաջորդող երկշաբաթյա ընթացքում կազմակերպված հանրահավաքների մասնակիցների, այդ դեպքերը լուսաբանող լրագրողների հանդեպ կիրառված բռնության դեպքերին և դրանց բացահայտումներին, հուլիսի 17-ից հետո ձերբակալված անձանց խնդիրներին:

Հայաստանի մասին զեկույցի 4-րդ մասն անդրադառնում է կոռուպցիայի խնդրին՝ այն համարելով ազատական տնտեսության զարգացման հիմնական խոչընդոտներից մեկը: Ջեկույցը մտահոգություն է հայտնում Հայաստանում տնտեսական մենաշնորհների առ-

¹¹² <https://2009-2017.state.gov/documents/organization/253031.pdf>, դիտվել է 19.05.2017:

¹¹³ Նույն տեղում:

¹¹⁴ <https://2009-2017.state.gov/documents/organization/253031.pdf>, դիտվել է 20.05.2017:

կայության, ապօրինի ձեռնարկատիրական գործունեության, պաշտոնական կոռուպցիայի ռիսկային մակարդակի և կոռուպցիայի հաղթահարմանն ուղղված կառավարության «մակերեսային ջանքերի» վերաբերյալ¹¹⁵:

Վրաստանի դեպքում, անդրադառնալով կոռուպցիայի և կառավարության գործունեության թափանցիկության խնդրին, զեկույցը մատնանշում է օրենսդրության համապատասխան հոդվածը, որով քրեական պատասխանատվություն է նախատեսվում պաշտոնատար անձանց՝ կոռուպցիոն գործերի մեջ ներգրավվածության համար: Չնայած այն հանգամանքին, որ օրենքը հիմնականում կիրառվում է, սակայն իրավապահ մարմինների կախվածությունը գործադիր իշխանությունից նվազեցնում է կոռուպցիոն դեպքերի ամբողջական հետաքննական գործընթացի արդյունավետությունը: 2015 թ. փետրվարին Վրաստանի գլխավոր դատախազը խորհրդատվական մարմին ձևավորեց, որի գործառնություններից էր քաղաքական կոռուպցիայի դեպքերի հետաքննումը 2016 թ. ընտրությունների նախաշեմին: Իրականացված հետաքննության արդյունքում պարզ դարձավ, որ կուսակցությունները 13 մլն ԱՄՆ դոլարի նվիրատվությունն են ստացել 2464 անգամ: Ընդհանուր ֆինանսավորման շուրջ 65 տոկոսը ստացել էր «Վրացական երազանք» կուսակցությունը: Հակակոռուպցիոն կազմակերպությունների գնահատականների համաձայն՝ խորհրդատվական նոր ձևավորված մարմնի գործունեությունը եղել է թափանցիկ և հաշվետու: Վրաստանի անվտանգության և իրավապահ մարմինները հայտնաբերել են բարձրաստիճան պաշտոնատար անձանց՝ կոռուպցիայի մեջ ներգրավվածության 14 դեպք և ձերբակալել են 19 մարդու¹¹⁶:

Ըստ «Transparency International» միջազգային կազմակերպության 2016 թ. տվյալների՝ Վրաստանի կոռուպցիայի ընկալման համաթիվը 2016 թ. եղել է 57 (2015 թ. 52-ի փոխարեն աճ կա 5 միավորով), որն ամենաբարձրն է Արևելյան Եվրոպա-Կենտրոնական Ա-

¹¹⁵ Տե՛ս <https://2009-2017.state.gov/documents/organization/253031.pdf>, ղիտվել է 20.05.2017:

¹¹⁶ Նույն տեղում:

սիա տարածաշրջանում: Կոռուպցիայի ընկալման համաթիվը հաշվարկվում է 0-100 սանդղակով, 100-ը բացարձակ մաքուրն է, 0-ն՝ ամբողջությամբ կոռումպացվածը¹¹⁷:

Այն դեպքում, երբ Հայաստանը 2016 թ. 168 երկրների շարքում կոռումպացվածության մակարդակով 95-րդ տեղում էր, ՀՀ կոռուպցիայի ընկալման համաթիվը կազմել է 36: 2015 թ. համեմատ Հայաստանը նախկին խորհրդային հանրապետություններից զիջում է ոչ միայն բաթյան հանրապետություններին և Վրաստանին, այլև Բելառուսին, որի ԿԸՀ-ն 2016 թ. ունեցավ շատ տպավորիչ՝ 8 միավորի բարելավում¹¹⁸:

Ակնհայտ է դառնում, որ Վրաստանը, ի տարբերություն Հայաստանի, հետևողական և արդյունավետ պայքար է մղում կոռուպցիայի դեմ:

Միաժամանակ կա մարդու իրավունքների ապահովման մեկ ոլորտ, որի ցուցիչներով Հայաստանը տարածաշրջանում առաջատարն է: Պետքարտուղարության գեկույցների մի զգալի հատված վերաբերում է ազգային փոքրամասնությունների իրավունքների ապահովման ոլորտում առկա իրավիճակին և խախտումներին: Հայաստանում ազգային փոքրամասնությունների իրավունքների սահմանափակման, խտրականության, ինչպես նաև հակասեմականության որևէ դեպք չի արձանագրվել:

Վրաստանի մասին գեկույցում խտրականության, մարդու իրավունքների սահմանափակումների ամենաշատ դեպքերն արձանագրվել են Աբխազիայում և Հարավային Օսեթիայում, որտեղ էթնիկ վրացիները հանդիպում են մի շարք կամայականությունների, մասնավորապես վրացերենով ուսուցման առումով նրանց պարտադրվում է ուսանել ռուսերենով:

Չեկույցում հիշատակվում է վրացերենի ուսուցման կառավարության «4+1» ծրագիրը՝ նախատեսված ազգային փոքրամասնությունների համար: Որպես փոքրամասնությունների իրավունքների խախտման փաստեր հիշատակվում են Վրաստանի պետական կա-

¹¹⁷ Տե՛ս <https://transparency.ge/hy/cpi/2015>, դիտվել է 22.05.2017:

¹¹⁸ Տե՛ս <https://transparency.am/hy/cpi>, դիտվել է 22.05.2017:

ռավարման համակարգում ազգային փոքրամասնությունների խիստ սահմանափակ ներկայությունը: Նշվում է, որ չնայած հայերը և ադրբեջանցիները ներկայացուցիչներ ունեն խորհրդարանում, սակայն դատական համակարգում, կառավարությունում նրանցից և ոչ մի ներկայացուցիչ չկա¹¹⁹:

Դիտարժան է այն հանգամանքը, որ թե՛ Հայաստանում և թե՛ Վրաստանում մարդու իրավունքների և ազատությունների կիրառման և պաշտպանության յուրաքանչյուր լուրջ փորձ բացատրվում է արտաքին ազդակներով: Սակայն մեկ տարբերությամբ. Վրաստանի իշխանությունը դա բացատրում է ռուսական, Հայաստանի իշխանությունը՝ ԱՄՆ ազդակներով: Այս հանգամանքը պայմանավորված է պաշտոնական Երևանի և Թբիլիսիի արտաքին քաղաքական տարբեր վեկտորներով, ավելի որոշակի՝ կողմնորոշումներով:

ԱՄՆ կովկասյան քաղաքականության կանխատեսումներն ու ձգտումները, այնուամենայնիվ, հիմնականում չարդարացան: Հայաստանի, Վրաստանի, Ադրբեջանի արտաքին քաղաքական ուղեգծերը չունեին նաև ընդհանուր եզրեր: Երևանը, Թբիլիսին և Բաքուն միանգամայն տարբեր արտաքին քաղաքական կողմնորոշիչներ ու գերակայություններն էին ընտրել: Թբիլիսին անշեղորեն հակվում է դեպի Արևմուտք՝ աստիճանաբար կտրվելով Ռուսաստանից, Բաքուն՝ դեպի Անկարա, իսկ Հայաստանը՝ դեպի Ռուսաստան:

Չնայած այս տարբերությանը՝ հարավկովկասյան պետությունները մարդու իրավունքների և ազատությունների ապահովման, ավելի որոշակի՝ սահմանափակումների առումով կանգնած են ներհասարակական-ներքաղաքական լուրջ մարտահրավերների առջև: Այդ մարտահրավերների հաղթահարման ուղիների որոնումն ու ընտրությունը առաջիկայում որոշիչ կդառնան Հայաստանի և Վրաստանի համար մասնավորապես, հարավկովկասյան տարածաշրջանի համար՝ ընդհանրապես:

¹¹⁹ Տե՛ս <https://2009-2017.state.gov/documents/organization/253061.pdf>, դիտվել է 20.05.2017:

ԳԼՈՒԽ 7.

ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՅԱՑՄԱՆ ԽՈՉԸՆԳՈՏՆԵՐԸ

7.1. Քաղաքագիտական պարադոքսներ. ամերիկյան գործոնի նվազումը ԱՄՆ աջակցությանը զուգահեռ

Չնայած Սիացյալ Նահանգների՝ Հայաստանի Հանրապետության ժողովրդավարացման աջակցման հսկայածավալ ծրագրերին և ֆինանսական հատկացումներին՝ ժողովրդավարության աջակցության ծրագրերին զուգահեռ Հայաստանում ժողովրդավարական ինստիտուտները զգալիորեն թուլացել են՝ դրանով իսկ առաջ բերելով քաղաքագիտական մի շարք պարադոքսներ: Սա՝ մի կողմից: Մյուս կողմից՝ ամերիկյան ծրագրերի աճին և տրամադրվող օգնության մեծացմանը զուգահեռ տեղի է ունենում ամերիկյան գործոնի զգալի նվազում Հայաստանում: Ինչո՞ւ ԱՄՆ-ի կողմից ժողովրդավարության աջակցության ծրագրերը արդյունք չեն տալիս Հայաստանի հարևան մյուս երկրում՝ Ադրբեջանում:

Ամերիկյան քաղաքագետների շրջանում սկսում են լրջորեն հետազոտել անցումային շրջանի ժողովրդավարությունների այսևայլ պարադոքսները: Այսպես՝ Ստեյվի Կաքը՝ ԱՄՆ գիտական ընկերությունների նախկին նախագահը, «Ժողովրդավարական քաղաքական կառույցների ձևավորում» հոդվածում նշում է. «Շատ ավելի բարդ խնդիր է այն, քե ի՞նչ ծավալի և բնույթի ժողովրդավարություն կարող է պաշտպանել անցումային շրջանի վարչակարգը: Նվազագույն ելակետը պետք է համարվի քաղաքացիների ազատ ընտրությունների ապահովումը, սակայն միայն ընտրություններով ժողովրդավարություն չի հաստատվում»¹²⁰:

Փեն Զեմբլը՝ ԱՄՆ տեղեկատվական գործակալության փոխտնօրենը, «Քաղաքացիական կրթության օգտակարությունը հին ու նոր ժողովրդավարությունների համար» հոդվածում վերլուծում է.

¹²⁰ Ժողովրդավարությունը բավական է», ՀՀ-ում ԱՄՆ դեսպանատուն, # 2, էջ 13:

«Երբ աշխարհի բռնապետական հասարակարգերը սկսեցին կազմալուծվել, զարգացած ժողովրդավարությունների քաղաքացիների շրջանում արմատացավ այն ըմբռնումը, որ իրենք պարտավոր են նորակազմ ժողովրդավարական երկրներին օժանդակել ժողովրդավարության մեխանիզմների գործարկման հարցում: Եվ հանդես եկանք աջակցության մի շարք ծրագրերով, որոնց օգնությամբ ժողովրդավարության գաղափարները համեմատաբար վերջերս որդեգրած հասարակությունները յուրացրեցին ժողովրդավարական մեխանիզմների կիրառման առանձնահատկությունները: Սակայն որոշ ժամանակ անց հայտնաբերեցինք, որ ժողովրդավարությունն ավելին է, քան մեխանիզմների ամբողջությունը. այն հիրավի մշակույթ է: Ազատությունը հաստատելու և պահպանելու համար բավարար չէ վերափոխել հասարակության և կառավարության արտաքին ձևն ու կառուցվածքը. պետք է փոփոխվի մարդկանց աշխարհայացքը: Հակառակ դեպքում այդ մեխանիզմները կարող են ուղղակի մերժվել ճիշտ այնպես, ինչպես կենդանի հյուսվածքն է դուրս մղում օտար մարմինը՝ բացառությամբ այն դեպքի, երբ երկուսը համատեղելի են»¹²¹:

Հայաստանում ամերիկյան գործոնի ազդեցության թուլությունը պայմանավորված է հիմնականում հայ ժողովրդի ռուսական կողմնորոշման բարձր աստիճանով և Հայաստանում ռուսական գործոնի աճով:

Ընդհանարպես, դիտարժան են նախկին Խորհրդային Միության հանրապետություններում ժողովրդավարական հասարակարգերի կայացման խեղումները: Ժողովրդավարության կայացման արգելակները նախկին ԽՍՀՄ հանրապետություններում նույնն են, սակայն տարբեր են այդ արգելակների, խոչընդոտների հաղթահարման՝ այդ երկրների իշխանությունների կամքի և հասարակությունների ձգտումների դրսևորումները և արդյունքները:

Հարավային Կովկասի պետությունների՝ ժողովրդավարության կայացման խոչընդոտների հաղթահարման արդյունքները ևս տարբեր են: Եթե Ադրբեջանում ժողովրդավարությունն այդպես էլ չկայա-

¹²¹ «Ժողովրդավարությունը բավական է», ՀՀ-ում ԱՄՆ դեսպանատուն # 2, էջ 79:

ցավ քաղաքական և տնտեսական կոռուպցիայի, ազատ ընտրական համակարգի և քաղաքական ընդդիմության փաստացի բացակայության, ինքնակալական կառավարման պայմաններում, ապա Վրաստանը 5-10 տարիների ընթացքում նկատելի հաջողություններ արձանագրեց կոռուպցիայի դեմ պայքարի, ազատ ընտրական համակարգի կայացման և մամուլի ազատության, ընդհանրապես՝ քաղաքական և քաղաքացիական ազատությունների ոլորտներում:

7.2. Ժողովրդավարացման գործընթացների արդյունքները Հայաստանում և Վրաստանում. համեմատական վերլուծություն

Հարավկովկասյան պետություններից Հայաստանում և Վրաստանում ավելի քան 25 տարի ընթացող ժողովրդավարական գործընթացները տարբեր արդյունքներ են արձանագրել: Ժողովրդավարական հաստատությունների կայացման՝ Հայաստանին և Վրաստանին հատկացվող ԱՄՆ աջակցությունը մույնպես տարբեր է եղել: Եթե XX դարի 90-ական թթ. սկզբին ամերիկյան աջակցությունը Հայաստանի ժողովրդավարացմանն անշեղորեն աճում էր, ապա վերջին երկու տասնամյակում այդ աջակցությունը կտրուկ նվազել է: Պետք է ենթադրել, որ այդօրինակ նվազման միտումները պայմանավորված են նախևառաջ Հայաստանում ժողովրդավարական հաստատությունների թերաթիվը կայացմամբ: ԱՄՆ ներդրած միջոցները Հայաստանում հիմնականում արդյունավետ և նպատակային չեն ծախսվել, հաճախ նաև սխալ է ընտրվել այդ հատկացումների հասցեականությունը:

Վրաստանի ժողովրդավարական հաստատություններին ամերիկյան աջակցության ծավալները XX դարի 90-ական թթ. Հայաստանի հատկացումների համեմատ փոքր են եղել, սակայն այդ աջակցությունը սկսել է աճել 1997 թվականից հետո և կտրուկ աճել է Վրաստանի «վարդերի հեղափոխությունից» հետո:

Հարկ է արձանագրել, որ 2003 թվականից ի վեր Վրաստանին թե՛ ԱՄՆ աջակցության աճն է զգալի եղել, թե՛ այդ երկրում ժողովրդավարական հաստատությունների կայացման արդյունավետությունն է շոշափելի եղել:

Ժողովրդավարական հաստատություններից ամենամակատելի առաջընթացն արձանագրվել է Վրաստանի ազատ ընտրական համակարգի կայացման գործընթացում: 2003 թվականից հետո Վրաստանում կայացած բոլոր համապետական ընտրությունները, բացի առանձին թերություններից, եղել են ազատ, արդար և թափանցիկ, ինչի վկայությունն են Վրաստանի վերջին տարիների ընտրություն-

ներին տրված միջազգային կառույցների գնահատականները: Այդ գեկույցներն արձանագրում են Վրաստանի հասարակության՝ ընտրություններով իշխանափոխություն իրականացնելու հնարավորությունները և դրա նկատելի սահմանափակումները Հայաստանի դեպքում:

Ժողովրդավարական հաջորդ հաստատությունը, որ դարձյալ Վրաստանում ավելի պրոֆեսիոնալ է, ազատ և կայացած մամուլն է, լրատվամիջոցներն ընդհանրապես: Այսպես՝ ըստ «Լրագրողներ առանց սահմանների» միջազգային իրավապաշտպան կազմակերպության 2016 թ. աշխարհում մամուլի ազատության տարեկան գեկույցի և 2016 թ. մամուլի ազատության ինդեքսի՝ Հայաստանը գեկույցում 180 երկրների շարքում զբաղեցրել է 79-րդ տեղը՝ 30,38 միավորով հայտնվելով նարնջագույն գոտում: Նախորդ տարվա համեմատ Հայաստանը 5 հորիզոնականով զիջել է դիրքերը (2016 թ.՝ 74-րդ հորիզոնական)¹²²: Մինչդեռ Վրաստանը 2017 թ. 27.76 միավորով զբաղեցնում է 64-րդ հորիզոնականը՝ ամբողջ 10 հորիզոնականով առաջ անցնելով Հայաստանից: Մեր երկրի դեպքում նշվում է բազմակարծության բացակայությունը Հայաստանի հեռարձակող ՁԼՄ-ներում: «Freedom House» հասարակական կազմակերպության գեկույցի համաձայն՝ Հայաստանում մամուլը 2017 թ. «ոչ ազատ է» համարվել¹²³:

Ի տարբերություն Հայաստանի՝ Վրաստանը զգալի առաջընթաց է ապահովել նաև ժողովրդավարական հաստատությունների կայացմանը խոչընդոտող կոռուպցիայի հաղթահարման գործում: Դրա վկայությունն են «Transparency international» միջազգային հակակոռուպցիոն կազմակերպության տարեկան գեկույցները: Կոռուպցիայի ընկալման համաթիվը Հայաստանի դեպքում վերջին տարիներին գրեթե անփոփոխ է մնացել, մինչդեռ Վրաստանը տարեցտարի բարալավվել է իր դիրքերը կոռուպցիայի հաղթահարման առումով:

Հայաստանի և Վրաստանի ժողովրդավարացման գործընթացի արդյունքները նկատելիորեն և արագորեն տարբերում են միմյանց,

¹²² Տե՛ս <https://rsf.org/en/ranking>: դիտվել է 06.07.2017:

¹²³ Տե՛ս <https://freedomhouse.org/article/quiz-freedom-world-2017>, դիտվել է 06.07.2017:

ինչը վկայում է Վրաստանում ժողովրդավարական հիմնական հաստատությունների՝ ազատ ընտրական համակարգի և ազատ ու բազմակարծիք մամուլի կայացման մասին, որոնք էլ ժողովրդավարության առանցքն են, և առանց որոնց անհնար է ժողովրդավարական մյուս հաստատությունների արդյունավետ կայացումը:

7.3. Ժողովրդավարության կայացման խոչընդոտները Հայաստանում

Ժողովրդավարության կայացման առումով ներկայումս իրավիճակը Հայաստանում այլ է Վրաստանի համեմատ: Ժողովրդավարության կայացման խոչընդոտները Հայաստանում էապես նվազեցնում են Հայաստանի զարգացման հնարավորությունները:

Հայաստանի ժողովրդավարության կայացման խոչընդոտներն են՝

1. ազատ ընտրական համակարգի չկայացվածությունը,
2. հասարակության՝ իշխանավոխության իրականացման սահմանափակ հնարավորությունները,
3. իշխանությունների տարանջատման սկզբունքի բացակայությունը,
4. անարդար և կախյալ դատական համակարգը, սահմանադրական արդարադատության բացակայությունը,
5. օրենքի գերակայության բացակայությունը, օրենքի առջև քաղաքացիների անհավասարությունը,
6. կուսակցությունների չկայացածությունը, հանրային ցածր վստահությունը դրանց հանդեպ, այժմ՝ արդեն փաստացի միակուսակցական համակարգի առկայությունը: Ըստ ԱՄՆ պետքարտուղարության 2015 թ. զեկույցի՝ «Տարվա ընթացքում մարդու իրավունքների ամենամշանակալի խնդիրներն են եղել ՀՀ-ի գերակա իշխանությունը պահպանելու համար՝ պաշտոնյաների կողմից կառավարական ռեսուրսների օգտագործումը, աջակիցներին հարստացնելու և դատաիրավական համակարգերը կոռումպացնելու նպատակով՝ երկրի տնտեսական վերնախավի կողմից տնտեսական և քաղաքական իշխանության օգտագործումը» (ԱՄՆ պետքարտուղարության զեկույցի այս հատվածը հղում է տալիս «Transparency International» միջազգային կազմակերպությանը)¹²⁴,

¹²⁴ Տե՛ս <https://www.transparency.org/cpi2015>, դիտվել է 06.07.2017:

7. հեռարձակվող ՁԼՄ-ների վերահսկումն իշխանությունների կողմից,

8. քաղաքացիական թույլ ինստիտուտները,

9. Միացյալ Նահանգների ժողովրդավարության աջակցության ծրագրերի հասցեատերերի սխալ ընտրությունը. ամերիկյան ֆինանսավորումը հաճախ ուղղվում էին անհասկանալի խնդիրներով ու նպատակներով արհեստածին կառույցներ՝ հեղինակազրկելով նաև հանրային կառույցները: Չունենալով ծախսերի վերահսկման արդյունավետ հասարակական և իրավական մեխանիզմներ՝ այդ օգնությունը նպաստեց ՀՀ պետական համակարգի կոռումպացվածությանը,

10. համակարգային կոռուպցիան. ըստ «Transparency international»-ի 2015 թ. տվյալների՝ Հայաստանը 168 երկրների շարքում կոռումպացվածության մակարդակով 95-րդ տեղում է, ՀՀ կոռուպցիայի ընկալման համաթիվը կազմել է 36: Կոռումպացվածությամբ Հայաստանին հաջորդում են Մալին և Մեքսիկան: Կոռուպցիայի ընկալման համաթիվը հաշվարկվում է 0-100 սանդղակով, 100-ը բացարձակ մաքուրն է, 0-ն՝ ամբողջությամբ կոռումպացվածը¹²⁵: Մի քանի տարի անընդմեջ Հայաստանի համաթիվը գրեթե չի ենթարկվում փոփոխությունների, ինչը նշանակում է, որ կոռուպցիան Հայաստանում արմատակալած է, անփոփոխ ու անմահանջ,

11. սոցիալական բեռավածությունը և աղքատությունը. ըստ ՀՀ ԱՎԾ-ի՝ աղքատության մակարդակը Հայաստանում 2015 թ. կազմել է 29.8 տոկոս, 2014 թ.՝ 30 (այսինքն՝ տասը բնակչից երեքը աղքատ է): Պաշտոնական տվյալներով շուրջ 3 մլն բնակչության ունեցող Հայաստանում աղքատ է շուրջ 1 մլն մարդ¹²⁶,

12. ազգային տնտեսության չկայացածությունը և մենաշնորհների առկայությունը,

¹²⁵ Տե՛ս <https://www.transparency.org/cpi2015>, դիտվել է 06.07.2016:

¹²⁶ Ըստ ՀՀ վիճակագրական կոմիտեի պաշտոնական կայքէջի, <https://www.state.gov/j/drl/rls/hrrpt/humanrightsreport/index.htm?year=2016&dliid=26542> 2, դիտվել է 06.02.2018:

13. Ժողովրդավարական արժեքների, Արևմուտքի դեմ պաշտոնապես խրախուսվող հակաքարոզությունն ու ծաղրը: Արևմուտքի անհետևողական և հայեցողական պահվածքը Հայաստանում Ժողովրդավարական ազատությունների ոտնձգությունների հանդեպ,

14. դեպի Մոսկվա ուղղված՝ ՀՀ արտաքին քաղաքական ուղեգիծը, Հայաստանում ռուսական գործոնի աճը, ՀՀ կախվածություն Մոսկվայից, ռուսամետ քարոզչությունը:

Որպես հետևանք՝

- ամրանում է ավտորիտար կառավարումը,
- կտրուկ նվազում են հանրության իշխանափոխության, իշխանությունների վերահսկման, քաղաքական որոշումների վրա ազդելու հնարավորությունները,
- սահմանափակվում են Ժողովրդավարական ազատությունները,
- թուլանում են ՀՀ դիրքերը միջազգային հարաբերություններում,
- թուլանում է ՀՀ ինքնիշխանությունը, մեծանում է ՀՀ կախվածությունը ՌԴ-ից՝ մի երկրից, որը հանդես գալիս որպես կոռումպացված վարչակարգերի աջակից:

Ամերիկյան օգնության ծրագրերի մոտ 70 տոկոսը Հայաստանում տապալվեցին: Ամերիկյան ֆինանսավորումը հայկական Ժողովրդավարությանն ապարդյուն անցավ: Ժողովրդավարական Հայաստանը չկայացավ:

ՀՀ 2017 թ. «Ազգային անվտանգության հայեցակարգը» արձանագրում է. «Հայաստանի միջազգային ինտեգրում Ժողովրդավարացման միջոցով. ահա սա է մեր պետական-ազգային շինարարության գերնպատակը, կայուն զարգացման և անվտանգ ապագայի կերտման բանալին, ազգային անվտանգությանն ուղղված սպառնալիքների չեզոքացման առանցքային ուղին: Ժողովրդավարական բարեփոխումների ռազմավարությունը համակարգված կառուցողական աշխատանք է պահանջում պետական մարմիններից, իշխանության

բոլոր օղակներից և հասարակությունից: Բարեփոխումների ձախտ-
դումը կնշանակի անմիջական և համապարփակ սպառնալիք ազ-
գային անվտանգության ապահովմանը, քանի որ կարող է խաթարել
երկրի կայուն զարգացումը և իրականություն դարձնել, այսպես կոչ-
ված, չկայացած պետության վիճակում հայտնվելու վտանգը: Տվյալ
վտանգի աղետալի հետևանքը կարող է լինել չկայացած պետության
հանդեպ միջազգային հանրության վերաբերմունքի վատթարացումը
և, որպես հետևանք, նրա մեկուսացումը»¹²⁷:

Այս կանխատեսմանը չհամաձայնելը դժվար է:

¹²⁷ ՀՀ Կառավարության պաշտոնական կայքէջ,
<http://www.gov.am>, դիտվել է սեպտեմբեր, 2017:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Տպագիր

1. Ադունց Ն., Հայկական հարցի լուծման շուրջ, Երևանի համալսարանի հրատ., Եր., 1986
2. Բաղդասարյան Մ., Երկեր., Եր., 1991:
3. «ԶԼՄ-ներն ու ժողովրդավարությունն ԱՄՆ-ում», Եր., 1997:
4. «Ժողովրդավարությունը բավական է», ՀՀ-ում ԱՄՆ դեսպանատուն, # 1:
5. «Ժողովրդավարությունը բավական է», ՀՀ-ում ԱՄՆ դեսպանատուն, # 2:
6. Խաչատրյան Հ., Ամերիկայի Միացյալ Նահանգների Սահմանադրությունը, Եր., «Հայաստան» հրատ., 1991:
7. Մանուչարյան Հ., Դրվագներ հայ քաղաքական մտքի պատմության, Եր., 2002:
8. «Միացյալ Նահանգների օգնությունը Հայաստանին», Եր., ՀՀ-ում ԱՄՆ դեսպանատուն, 2001:
9. Նալբանդյան Մ., Երկեր, Եր., 1985:
10. Տեր-Պետրոսյան Լ., Ընտրանի, Եր., «Փրինսթոնֆո» հրատ., 2006:
11. Henry W. Bragdon, Samuel P.Mc.Cutchen, History of a free people, NY:., London, Macmillan Publishing Company, 1981.
12. "The Makings of America: The United States and the world: Since 1865, Woodrow Wilson's War Message", Lexington, MA, Toronto, 1993, Vol. II.
13. "America", W. W.-Norton and Company, NewYork, London, 1993, Vol. 1.
14. Vardanyan Q., Henry Morgenthau and the Armenians, Yerevan, publishing house "Hayastan", 1984.
15. Zbigniew Brzezinski, The New Challenges to Human Rights, Journal of Democracy 8.2 (1997), published for the National Endowment for Democracy by the Johns Hopkins University Press.

16. Arthur Frederick Ide "George W. Bush: Portrait of a Compassionate Conservative"
publisher: Monument Pr; 1st edition, Texas, 2000.

17. Mike Wilson, Democracy (Opposing Viewpoints), Greenhaven, Detroit, New York, 2006. .

18. "Partners for the future. US Assistance in Armenia", US Embassy in Armenia, 2001:

19. "Partners for the future. US Assistance in Armenia", US Embassy in Armenia, 2002 - 2003.

20. "Partners for the future. US Assistance in Armenia", US Embassy in Armenia, 2004-2005.

21. "Partners for the future. US Assistance in Armenia, US Embassy in Armenia", 2005 - 2006.

22. Georgia's democratic transformation, published by the Government of Georgia, Jan., 2007.

23. John Patrick Diggins, Ronald Reagan Fate Freedom and the making of History, publisher W. W. Norton & Company, New York, London, 2007.

24. Richard Labunski, James Madison and the Struggle for the Bill of Rights, Oxford University Press, 2008.

25. Аристотель, Сочинения, т. 4., М.: изд. «Мысль», 1983.

26. Горан В. П., Генетическая связь философии и демократии в Древней Греции, Гуманитарные науки в Сибири, Изд. Институт истории ЦО РАН, 1998, #1.

27. Пугачев В. П., Политология, М.: изд. АСТ, фил. общество СЛОВО, 1999.

28. Расел Б., История западной философии, М.: изд. «Азбука», 1959.

29. Мельвиль А. Ю., Демократические транзиты (теоретико-методологические и прикладные аспекты), Московский общественный научный фонд, изд. центр научных и учебных программ, 1999:

30. Ричард Н., На арене, М.: изд. «Новости», 1992.

31. Кеннан Джордж, Дипломатия второй мировой войны, М.: изд. «Центрполиграф», 2002.
32. Горбачев М. С., Перестройка и новое мышление, М., 1988.
33. Киссинджер Г., Дипломатия, М.: изд. «Лодомир», 1997.
34. Додж Буш, Брент Скоукрофт, Мир стал другим, М.: изд. «Международные отношения», 2004.

Էլեկտրոնային

35. Շահամիր Շահամիրյան, «Որոպայթ փառաց», https://hycatholic.ru/pro/biblioteca/%D5%85%D5%A1%D5%AF%D5%B8%D5%A2%D5%A1%D5%B5_%D5%87%D5%A1%D5%B0%D5%A1%D5%B4%D5%AB%D6%80%D5%A5%D5%A1%D5%B6%D6%81_%D5%88%D6%80%D5%B8%D5%A3%D5%A1%D5%B5%D5%A9_%D5%93%D5%A1%D5%BC%D5%A1%D6%81.pdf, էջ 109, դիտվել է 01.12. 2017:

ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ

ԱՄԵՐԻԿԱՆ ԳՈՐԾՈՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՎՐԱՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱԶԱԿՑՄԱՆ ԳՈՐԾԵՆԹԱՅՆԵՐՈՒՄ

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանությունը, ժողովրդավարական հաստատությունների կայացումն արդի առաջադեմ աշխարհի համար առանցքային նշանակություն ունեն։ Ժողովրդավարությունը բարդ և բազմակողմանի երևույթ է, որի քաղաքագիտական նշանակությունն աճում է գործնական քաղաքականության մեջ ձեռք բերած արդյունքներով։ Նորացող աշխարհի և նոր քաղաքական գործընթացների հետ ժողովրդավարությունը ձեռք է բերում նոր նշանակություն՝ վերածվելով կարևոր քաղաքական գործոնի։ Մենագրության մեջ քննության են ենթարկվում արևմտյան ժողովրդավարության կայացման միտումները և ուղղությունները, հետազոտվում է ժողովրդավարական կենտրոնների դերը ժողովրդավարական ազատությունների տարածման մեջ։

Գորբաչովյան վերակառուցմամբ և Ղարաբաղյան շարժմամբ սկիզբ առած քաղաքական գործընթացները Հայաստանում հանգեցրին ազգերի ինքնորոշման իրավունքի պաշտպանության և համակարգային փոփոխությունների իրականացման անհրաժեշտության, որոնց հիմքում պետության ժողովրդավարացման սկզբունքներն էին։ Նորանկախ Հայաստանին ցուցաբերվող ԱՄՆ մարդասիրական օգնությանն աստիճանաբար փոխարինեցին ժողովրդավարության աջակցության և զարգացման ծրագրերը։ ԱՄՆ-ն ներկայումս շարունակում է իր հանձնառությունը Հայաստանի և Վրաստանի ժողովրդավարացմանը։

Մենագրության մեջ հետազոտության են ենթարկվել հետխորհրդային տարածքի երկու պետությունների՝ Հայաստանի և Վրաստանի անցումային ժողովրդավարության առանձնահատկությունները, այդ երկրներում ժողովրդավարության կայացման խոչընդոտները, հասարակական-քաղաքական իրական արդյունքները և երկու պետություններին տրամադրված աջակցության ծրագրերի

ուղղությունները և ծավալները (մինչև 2018 թ. հայկական երկրորդ քավճյա հեղափոխությունը):

Ելնելով մենագրության կատարած հետազոտությունից և վերլուծությունից՝ մենագրության հեղինակը եզրակացնում է, որ Հայաստանի և Վրաստանի ժողովրդավարացման տարրեր արդյունքներն էապես պայմանավորված են արտաքին քաղաքական վեկտորների տարրեր ուղղություններով. Վրաստանի դեպքում այն հանգում է Եվրոպայի հետ առավել սերտ ինտեգրմանը՝ ԵՄ անդամակցության դիմումով, Հայաստանի դեպքում այդ վեկտորն ուղղված է դեպի Ռուսաստան:

Մենագրության մեջ առաջին անգամ համակարգված հետազոտության են ենթարկվում դրկից երկու պետություններին՝ Հայաստանին և Վրաստանին, ամերիկյան աջակցության ծրագրերը՝ ըստ փուլերի և դրանց առանձնահատկությունների: Մասնավորապես, պարզաբանվում է, որ ԱՄՆ օգնության ծավալների աճին զուգահեռ Հայաստանում ամերիկյան գործոնն էապես թուլացել է:

Հարկ է արձանագրել, որ վերոնշյալին զուգահեռ արևմտյան ժողովրդավարության հաստատումը Հայաստանում ձախողվել է:

РЕЗЮМЕ

Американский фактор в процессах поддержки демократии в Армении и Грузии

Защита прав человека и основных свобод, установление демократических институтов имеют ключевое значение для современного прогрессивного мира. Демократия – это сложное и разностороннее явление, политологическое значение которого растет с результатами, приобретенными в практической политике. С возобновляющимся миром и новыми политическими процессами демократия приобретает новое значение, превращаясь в важный политический фактор. В монографии изучаются тенденции и направления установления западной демократии, исследуется роль демократических центров в распространении демократических свобод.

Политические процессы в Армении, инициированные Перестройкой Горбачева и Карабахским движением, привели к необходимости защиты права народов на самоопределение и осуществления системных перемен, в основе которых лежат принципы демократизации государства. Гуманитарная помощь, предоставляемая США недавно ставшей независимой Армении, постепенно была заменена программами поддержки и развития демократии. В настоящее время США продолжает придерживаться своего обязательства по демократизации Армении и Грузии.

В монографии исследуются особенности переходной демократии, препятствия ее установления и реальные общественно-политические результаты в двух государствах постсоветского пространства, Армении и Грузии, а также направления и масштабы американских программ поддержки, предоставленных двум государствам (до второй армянской “бархатной” революции 2018 г.).

Исходя из итогов исследования, в монографии делается вывод, что разные результаты демократизации Армении и Грузии

значительно обусловлены разными направлениями внешнего политического вектора – в случае Грузии он ведет к более близкой интеграции с Европой в виде заявки о членстве в ЕС, а в случае Армении этот вектор направлен на Россию.

В монографии в первый раз системно исследуются программы поддержки, оказываемой США двум соседним государствам, Армении и Грузии, по этапам и их особенностям. В частности отмечается, что параллельно с ростом масштаба поддержки, оказываемой США, американский фактор в Армении значительно ослаб.

Следует отметить, что параллельно с вышеуказанными явлениями установление западной демократии в Армении потерпело неудачу.

ABSTRACT

The American Factor in the Processes of Support for the Democracy of Armenia and Georgia

The protection of human rights and fundamental freedoms, as well as the establishment of democratic institutions are pivotal for the modern progressive world.

Democracy is a complex and multi-faceted phenomenon, the significance of which in political science grows through the results gained in practical politics. With the renewing world and new political processes democracy gains new significance, turning into a crucial political factor. The monograph examines the tendencies and directions of the establishment of the Western democracy and analyses the role of democratic centres in the dissemination of democratic freedoms.

The political processes in Armenia initiated with Gorbachev's Perestroika and the Karabakh Movement led to the necessity to protect the right of nations to self-determination and to carry out systemic changes, the foundation of which were the principles of state democratisation. The US humanitarian aid to the newly independent Armenia was gradually substituted with programmes for the support and development of democracy. Currently, the USA continues to uphold its commitment to the democratisation of Armenia and Georgia.

The monograph analyses the particularities of the transitional democracy, the obstacles to the establishment of democracy and the real socio-political results in two states of the post-Soviet space, Armenia and Georgia, as well as the directions and scales of the US support programmes to the two countries (until the second Armenian velvet revolution of 2018).

Based on comprehensive research and analysis, the monograph, particularly, concludes that the results of the democratisation of Armenia and Georgia are significantly different due to the diverging directions in the foreign political vectors: in the case of Georgia it leads to a closer

integration with Europe through an EU membership application; in the case of Armenia this vector is directed towards Russia.

The monograph is the first to systemically research and analyse the US support programmes to two neighbouring states, Armenia and Georgia, by phases and their particularities. Specifically, it is observed that parallel to the increase in the scale of the US support, the American factor has significantly weakened in Armenia.

It should be noted that in parallel to the abovementioned phenomena, the establishment of Western democracy in Armenia has failed.

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՆԱԲԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ՄԿՐՏՉՅԱՆ

**ԱՄԵՐԻԿԱՆ ԳՈՐԾՈՆԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՎՐԱՍՏԱՆԻ
ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱԶԱԿՑՄԱՆ
ԳՈՐԾԸՆԹԱՅՆԵՐՈՒՄ**

Հրատ. պատասխանատու խմբագիր՝ Լ. Հովհաննիսյան
Համակարգչային ձևավորումը՝ Կ. Չալաբյանի
Կազմի ձևավորումը՝ Ա. Պատվականյանի
Հրատ. խմբագրումը՝ Մ. Հովհաննիսյանի

Ստորագրված է տպագրության՝ 30.06.2023:

Չափսը՝ 60x84 ¹/₁₆: Տպ. մամուլը՝ 8.125:

Տպաքանակը՝ 100:

ԵՊՀ հրատարակչություն
ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
www.publishing.ysu.am